

ՀՀՐԱԾԴՐ

- ած. իր գրած, իր ձեռքով գրած
- ինքնուվի՝ ավտոմատորեն գրող՝ գրի առևտող՝ գրանցող: ի. գործիք
- գ. հոգև. - գրեր: հեղինակի ձեռքով գրածը, բնագիր
- հեղինակային մակագրություն
- հոգև. - գիրներ, (տեխ.) : ինքնուվի՝ ավտոմատորեն գրի առևտող՝ գրանցող գործիք՝ սարք

ԳՐԱԿԱՆ ԻՎԱԲՈՒ

4

Մարկ Նշանեան **5-28**, Քարցազրոյց
Եղուարդ Սայիդի հետ **29-43**, Զուլիան
Վիգոն **44-56**, Վահան Իսխանյան
57-61, Անահիտ Քայրաբետյան
62-66, Թլեր Տետյան **67-80**,
Գոռ Ենգոյան **81-86**, Գուրգեն
Խանջյան **87-90**, Նարա Վարդանյան
91-95, Նանոր Պետրոսյան **96-**
103, Միսաֆ Խոստիկյան **104-**
108, Շուշան Ավագյան **109-**
111, Արծուի **112-121**, Կարեն
Ղարսյան **122-131**, Սոնա Աբգարյան
132-138, **արվեստի մանիֆեստ**
139-141

Մինչ հայագիտության օբյեկտը՝ հայերը հրավում ու հպարտանում էին ու են, որ ուսումնասիրության առարկա են, մինչ վնարում ու պրատում էին ու են հայի ու հայկական մասին որեւէ հիշտուակում արեւմտյան կողմն աշխարհի՝ որպես հավատիք սեփական գոյության, մինչ դարերով արեւմուտքին ուղղված հայացքով ոչ այսքան տեսնում, որքան ակնկալում էին տեսնվել ու սահմանվել... 1978թ. հրատարակվեց Էդվարդ Սայիդի «Օրիենտալիզմ», եւ, ինչպես Զուլիան Վիգոն է ասում «Բնելագրին» տված իր Էսսենում՝ «ցացեց Միջին Արեւելքի ուսումնասիրությունների մարզ»։ Իհարկե, Սայիդի գրքում հայագիտության մասին խոսք չկա, բայց բացում է դրա առաջացման պատճառը որպես արեւելագիտության դրսեւորում։

Ըստրիկ Սարկ Նշանյանի տեքստերի՝ «Բնելագրի» այս համարի գլխավոր թեման դառնում ու հայկական միջավայրում ակտուալանում է Էդվարդ Սայիդը։ Ու եթե Նշանյանի բնութագրմամբ՝ Սայիդը փոխեց «օրիենտալիզմ» բառի արժեքն այսպէս, որ այսօր այն նշում ու նշանակում է՝ արեւմտյան թյուր կեցվածք Արեւելքի նկատմամբ, չնաշխարհիկության քաղքենի արժեւորում, գիտությամբ տիրապետելու տեսէ, Արեւելքը լուցնելու կամ առևվազն՝ նրա փոխարեն խոսելու ձգուում, քաղաքական շահերի ներգործություն եւ այլն, ապա նաեւ փոխվում է «հայագիտություն» եզրը։

Ինչպես մուսասանում էին «Օրիենտալիզմ» գրքի շուրջ քննարկումները սկսվել շատ ավելի վաղ, մինչեւ այն կրագմանվեր ոուսերեն 2006 թ., այսպես ել հույս ունենք, որ «Բնելագրի» այս համարն է նախորդում Սայիդի գրքի հայերեն թարգմանությանը։

Սահիդը, որը «ամեղորեն» դասնում է Յասիդ Ճեկտորին ուսող դեռահասի բերանում, օրիենտալիստական թակարդով հայտնվում է նաեւ Միսաք Խոստիկյանի տեքստում, ուր պատումի, թերեւս պետք եր ասել՝ պատումների կամ շերտերի ինքնահակադրումը անխուսափելիորեն հանգեցնում է դիալոգի բազմայնության, առերեւույթ՝ առևվազն երկխոսության։

Ձեզեւ ոչ ուղղակի, բայց երկխոսական են նաեւ որոշ այլ գործեր, որպատեղ կողմերը կինն ու տղամարդն են։ Գուրգեն Խանջյանի պատմվածքի հերոսը, ի պատասխան սիրած դեռատի աղջկա հարցի («Բնկ ազատությունը...»), զարմանալի գուգաղիպությամբ բառացի կրկնում է ոստիկյանի հերոսուհու՝ բեմադրիչ կնոջ խոսքերը՝ նախ սովորիր։ Սակայն իր առաջարանում, ասես սեփական հերոսի հետ թաքնված երկխոսությամբ, Խանջյանը մերժում է «սովորել», ավելի չիշ՝ առողջանալը։

Երկխոսությունը «շարունակում» են առաջին անգամ հայերեն հրատարակվող Փրանսահայ գրողի՝ Քլեր Տեաթյանի հերոսները։ Կինն ասում է՝ «այդպիսին է կյանքի օրենքը՝ մեկը սնվում է մյուսով»։ Տղամարդը չշուռմ է՝ «ոչ, մեկը տրվում է մյուսին»։

Ծուշան Ավագյանը «շեղակիորեն» երկխոսում է հերթական կանացի անվան հետ կանանց անունների մասին՝ բացահայտելով «լուցնելու կամ առևվազն՝ նրա փոխարեն խոսելու ձգուում» եւ «թյուր կեցվածք»՝ արեւելքի փոխարեն այս դեպքում կանանց նկատմամբ։

Սունա Արգարյանը շարունակում է «Բնելագրի» նախորդ համարում սկսած իր կոմիքսային երկխոսությունը՝ թումանյանի եւ իր Անուշների միջեւ, իսկ գոռ Ենգոյանի սուս ինստալացիան եպիսոդյարիկ երկխոսություն է վիրատուացնում։

«Բնելագրում» կողք-կողքի հայտնվելով՝ տեքստերը ինքնաբերաբար սկսում են խոսել նաեւ իրար հետ։

Գրականությունը խոսում է երկխոսություն։



Վիոլետ Գրիգորյան

2008

4

4



4



Մարկ Նշանեան


Բանասիրութիւն Եւ հումանիզմ Եղուարդ Սայիդի մօս

Վահան Իշխանեանի համար

0. Սկզբնաւորութիւն

0.1. Պէյրութեն Երեւան՝ Երկար չետապան եւ սակայն, երբ Պէյրութ նստած՝ ներկայ տողերուն վերջնական պատճենը կը պատրաստէի, որպէս ներածական Եղուարդ Սայիդին նույիրուած աշխատասիրութեան նը ու որպէս արձագանգ Փետրուար 2008ին Երեւանի մէջ կայացած դասախոսութիւններուս շարքին, քանի քանի սահմաններ փակ էին Երկու Երկիրներուն միջեւ: Լիբանանի նայրաբաղարք պաշարման վիճակի մէջ էր: Երկրին սահմանները փակ էին, օդակայանը չէր բաներ: Յարասելով Վահե Օշականի տողերը (որ կ'ըսէր՝ Պէյրութ Փարիզ ճամբան չ'անցնիր Յայաստանէն, կ'անցնի աշխարհի լայն պողոտաներէն), շրջելով զանոնք ու անբողջացնելով Եռանկիւնը, կրնայի ըսել ես ալ իմ կարգին որ այսօր Պէյրութ Երեւան ճամբան կարծէք՝ կ'անցնի միմիայն աշխարհի պողոտաներէն: Պարտադրաբար: Քանի որ միւս բոլոր ճանապարհները գոյն են: Կ'անցնի արեւմտեան Սկիւորէն, ամերիկեան համալսարանէն, «յետ-գաղութատիրական» կոչուած մտածողութենէն, գաւառական ազգայնականութիւններու շլատումնեն կամ ապակառուցումնեն, Եւրոպական փիլիսոփայութեան շուրջ մտորումներէն, եւ մասամբ նորին:

Ամէն բանէ առաջ՝ Եղուարդ Սայիդին ըսածք լսել պէտք էր իր բառերով: Թարգմանաբար կը հրամցնեմ ուրեմն հոս առաջին (եւ կը կարծեմ՝ միակ) հարցազրոյցը, ուր Սայիդ կը խօսի ընդերկար *Orientalism* վերնագրուած գիրքին մասին: Գիրքը լոյս պիտի տեսնէր 1978ին: Սոյն հարցազրոյցը կայացած է Երկու տարի առաջ, ու լոյս տեսած է Կորնելլ համալսարանի հրատարակութիւն *Diacritics* հանդեսին մէջ: Զայն կը կարդամ 2001ին Երեւան Ելած հաւաքածոյի նը մէջ՝ *Power, Politics, and Culture* վերնագրով, որ կը պարունակէ բազմաթիւ ուրիշ հարցազրոյցների: Հարցազրոյցին վերնագրին է «Սկզբնաւորութիւններ», անգլերէն՝ «*Beginnings*», որ նաեւ անունն էր Եղուարդ Սայիդի նախորդ գիրքին, լոյս տեսած 1975ին²: Հարցազրոյցի բնագրին աւելցուցի էջատակի ծանօթութիւններ, գաղափար նը տալու համար այդ շրջանի Սայիդի գլխաւոր յղումներուն վերաբերեալ: Գրեթէ բոլոր անունները որոնց մասին տեղեկութիւններ կու տամ հոս անշուշտ կ'երեւին Երկու տարի վերջը լոյս տեսած *Օրիէնտալիզմ* հատորին մէջ: Հարցազրոյցին սկիզբը (այն բաժինը որ չեմ թարգմանած հոս) ամբողջութեամբ կը գրադի գրական քննադատութեան հարցերով, ու արձագանգ մըն է հետեւաբար 1975ի գիրքին մէջ պաշտպանուած դրոյթներուն: Մէկ կողմէ՝ Սայիդ ցոյց կու տայ, թէ կատարելապէս կը ճանչնայ «ձեւայնապաշտ» (formalist) քննադատութեան բոլոր հոսանքները, բայց միւս կողմէ՝ հոս արդէն իսկ յայտնի կերպով կ'արտայայտէ իր զգացած խորշանքը աշխարհի պայքարներուն անտեղեակ մնացող, անոնցմէ ձերբագատուած ընթերցողական կերպերէն ու եղանակներէն: Կը պահանջէ աշխարհին մէջ արձանագրուած քննադատութիւն նը: «*Worldliness*» բառի բացատրութեան առթիւ է, որ այդ պահանջը բացայատուած է ամենէն յստակ կերպով եւ հոն է նաեւ, որ յանկարծ Սայիդ կը սկսի ներկայացնել իր այդ շրջանի աշխատանքը, որ թիւ եւոքը պիտի յանգէր 1978ի գիրքին:



Անցնելէտ առաջ բուն նիւթին, կ'ուզեմ նկատողութիւն մը ընել թարգմանութեան մասին: Թարգմանելը անհրաժեշտ է, բոլոր պարագաներուն, որքան ալ դժուար ըլլայ ու երեմն ալ՝ անկարելի: Արեւմտահայերէնը վարժ չէ անզլերէնէ թարգմանելուն, իր մշակութային աւանդութենէն սերած պատճառներով: Այս տեսակի թարգմանութիւնները հետեւաբար փորձառական բնոյք միայն կրնան ունենալ: Ինչպէս միշտ եր հարցը կը վերաբերի նոր խնդրականութիւն մը առաջադրող տեսաբանական գրուածքի մը, թարգմանիչը ստիպուած է ընտրութիւններ կատարելու: Ներկայ պարագային, ուրիշ մանր հարցերու կողքին, բուն դժուարութիւնը «orientalism» բառին թարգմանութիւնն էր հայերէնով: Երեւանեան դասախոսութիւններուս ընթացքին՝ «արեւելաբանութիւն» բառը կը գործածէի «օրիէնտալիզմ»ի Սայիդեան իմաստին համար, «արեւելագիտութիւն» բառը պահելով որպէս բանասիրական կրթանքին համազօր: Զատորոշում մը կատարելը գուցէ անհրաժեշտ էր: Բայց պէտք է նշանաբեր, որ Սայիդի հանճարեղ գաղափարը նոյն բառը գործածէն էր, անոր ոչ թէ իմաստը այլ՝ արժէքը փոխելով: Այսօր ամէն մարդու համար՝ «orientalism»ը որպէս բառ կը նշէ ու կը նշանակէ աշխարհահայեացք մը, արեւմտեան թիւր կեցուածք մը Արեւելքին նկատմամբ, չնաշխարհիկութեան քաղբենի արժեւորումը, գիտութեամբ տիրապետելու տեսնչն ու կարողութիւնը, Արեւելքը լրեցնելու կամ առնուազն՝ անոր փոխարէնը խօսելու ձգտումը, ուրուագծային պատկերացումներու ցանց մը, քաղաքական շահերու ներգործութիւնը, եւ շատ մը ուրիշ բաներ, որոնք հեռաւոր աղերս մը միայն ունին բանասիրութեան հետ: Եւ սակայն նոյն բառն է որ կը գործածուի, շնորհիւ Սայիդի կատարած մտային ու փիլիսոփայական գործողութեան: Չի նշանակեր, որ մէկ օրէն միւսը արեւելագէտները փոխած են իրենց ընթացքը: Բայց արեւելագիտութիւնը որպէս կրթանք սկսած է կարդացուիլ ու հասկցուիլ աւելի լայն համաժիրի մը մէջ, որ նոյնպէս՝ օրիէնտալիզմ է, այս անգամ՝ որպէս տրամասութիւն [դիսկուրս] կամ պարզապէս որպէս գաղափարաբանութիւն (մարքսեան իմաստով): Հայերէն եթէ որոշեն թարգմանել երկու բառով (արեւելագիտութիւն եւ արեւելաբանութիւն) փոխանակ մէկ բառի, ամբողջութեամբ կորսնցուցած կ'ըլլամ Սայիդեան գործողութիւնը, որ ի միջի այլոց՝ իմաստաբանական գործողութիւն մըն է, ըլլալով բառի մը արժեզրկումն ու վերարժեւորումը: Անզլերէնի եւ ֆրանսերէնի պարագային՝ բառին երկդիմութիւնը (նոյն բառով՝ նորաբանութեան մը ստեղծումը) հնարաւոր էր որովհետեւ արդէն իսկ (Սայիդէն առաջ եւ Սայիդէն անկախ) orientalism, orientalisme բառերը բանասիրական կրթանքին չին սահմանափակուած: Օրինակ ֆրանսերէն Orientalistes կը կոչուի մէջ ժամանակակից մէջ կը հրանցնէին իրենց յաճախորդներուն: Անշուշտ այդ բնանիւթերը, այդ պատկերները Արեւելքի նախորոշ պատկերացումի մը կը համապատասխանէին եւ Արեւելքի շուրջ ընդհանուր տրամասութեան մը բաղադրիչ տարրերը կը հանդիսանային: Ուրեմն դիւրին էր անցումը բանասիրական իմաստէն դէպի Սայիդեան տրամասական [discursive] կամ անդրտրամասական [transdiscursive] իմաստը: Հու՞ թարգմանիչը անգօր է: Արեւմտահայերէնը (ի տարբերութիւն արեւելահայերէնին) ժմ. դարուն ստեղծած է իրապաշտ բառը որպէս համազօրը ֆրանսերէն réaliste բառին, կամ խորհրդապաշտ ըստելու համար symboliste, բայց չէ ստեղծած արեւելապաշտ բառը, ֆրանսերէն orientalistehին դէմ յանդիման: Ժամանակը թերեւս եկած է ստեղծելու: Եւ բոլոր պարագաներուն, նորէն ալ պիտի ունենայինք երկու բառ: «Արեւելաբանութիւն» նորաբանութեան գործածութիւնը լիովին գոհացուցիչ լուծում մը չէր: Այնպէս որ եւ թարգմանութեան մէջ, եւ հետագայ տողերուն մէջ կը փորձեմ պահել «արեւելագիտութիւն» բառը որքան որ կարելի է եւ «արեւելաբանութեան» կողքին՝ կը գործածեմ երբեմն Սայիդեան իմաստին համար «արեւելապատութիւն» բառը եւս:

0.2. Իր 1975ի *Beginnings* գիրքով՝ Սայիդ արդէն իսկ որոշ հօչակի հասած էր գրաքննադատական տեսաբանութեան մարգէն ներս: Ծրագիրը այդտեղ փնտռել էր համագրային «մեկնակէտ» մը, որուն շնորհիւ գրական գործ մը, հեղինակ մը, կարելի պիտի ըլլար տեղաւորել պատմական շարժնթացի մը մէջ ու այդ տեղադրումով իսկ՝ իմաստաւորել զանոնք ըստ արժանույն: «Մեկնակէտ»ի այդ գաղափարը փոխառութիւն մըն էր Սայիդին կողմէ, որպէս բանասիրական մեթոդի սկզբունք: Չեւ մըն էր «սկսելու», աշխարհին մէջ հետք մը ձգելու որպէս քննադատ ու բանասէր: Փոխառութիւնը կու գար ուղղակի ճամբով՝ գերմանացի բանասէր, *Mimesis* գիրքին հանրածանօթ հեղինակ՝ երիշ Աւըրպախէն³, որուն հովանիին տակ Սայիդ կատարած էր գրաքննադատի իր առաջին քայլերը, եւ որ-

2008



մէ 1969ին թարգմանած էր 1952ի «*Philologie der Weltliteratur*» փորձագրութիւնը, «*Philology and Weltliteratur*» անգլերէն վերագիրով։ Այնքան մեծ եղած է Աւրոպախի ազդեցութիւնը իր վրայ, որ իրականութեան մէջ Սայիդ իր ամբողջ կեանքին ընթացքին այդ մէկ յօդուածին վերադարձած է, զայն կրկին ու կրկին յիշելով, մէջբերելով ու պարզաբանելով։ Տարօրինակ ու յարակարծական հետեւանքը նաև այն եղած է, որ այդ յօդուածը՝ *Philologie der Weltliteratur*ը, որ երեւութապէս ոչ մէկ ձեւով մտահոգուած չէր գաղութատիրութեան հարցերը կը հետապնդուին հոն), այսօր մաս կը կազմէ «յետգաղութատիրական ուսմանց» հիմնաւոր գրուածքներու շարքին»⁴։ Կ'անցնիմ, առ այժմ։ Բայց ընթերցողը կը հասկնայ որ հանգոյց մը կայ այդտեղ, հանգոյց մը զոր անշուշտ մէկ անգամէն պիտի չկարենանք քակել։ Յանգոյցը արդի «բանասիրութեան» երկդիմութեան մէջ կը գտնուի։ Ինչպէս ըսի՝ *Beginnings* (գիրքին, ոչ թէ հարցազրոյցին) լայնածաւալ խորհրդածութիւնը «մեկնակետ»ի հարցին շուրջ ներշնչուած է ուղղակի Աւրոպախի սոյն յօդուածէն։ Յարցը համադրական քննադատութեան մը հնարաւորութեան շուրջ կը դառնայ, որ պէտք է ի վիճակի ըլլայ ամբողջ մշակութային ժամանակաշրջան մը վերստեղծելու գրական-պատմական սաղմէ մը մեկնելով։ Իրականութեան մէջ՝ այդ մեկը բանասիրութեան ծրագիրը եղած է սկիզբեն ի վեր, ըսենք՝ այն վայրկեանն սկսեալ երբ «գրականութեան պատմութիւն» ըսուած մարզ մը կը ստեղծուէր Ֆրիտրիխ Շլեզվիլին կողմէ, 1812ի իր Վիեննայի դասախոսութիւններով։ Բայց պիտի տեսնենք հետզինետ, որ օրիենտալիզմը, ի՞նչ ձեւով որ հասկնանք զայն (աւանդական կամ Սայիդեան իմաստներով) ուրիշ բան չէ եթէ ոչ բանասիրութիւն։ Կը սկսի ու կը վերջանայ բանասիրութեամբ։ Զարմանալին այն է, որ «Ակզրնաւորութիւններ» վերնագրուած 1976ի հարցազրոյցին մէջ Աւրոպախի անունը բնաւ չ'երեւիր։ Զարմանալի է, որովհետեւ Երուարդ Սայիդ ատլէ առաջ եւ ատլէ վերջ անդադար յիշած ու մէջբերած է զայն⁵։ *Orientalism* հատորին մէջ օրինակ՝ Աւրոպախի անունը կ'երեւիր որպէս նմոյշ մշակութային ուսմանց որոնք ըստ էրեւեան արեւելապաշտ բնոյթ չունին [non-Orientalist cultural studies], եւ որոնք ըստ այնմ աւելի անմիջական պատասխան մը կրնային հանդիսանալ «հումանիստական մշակոյթին դէմ սպառնալիքներուն»⁶։ Աւրոպախի *Mimesis*ը գրուած է ի հարկէ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքին, երբ հեղինակը Թուրքիա ապաստանած էր, Նացիստան Գերմանիայն փախսելով, շրջանի մը երբ կարելի էր տեսնել «Երուապական մշակոյթի զարգացումը գրեթէ իր վերջին վայրկեանին հասած»։ Նպատակն էր հետեւարար «արեւմտեան մշակոյթի համապատկեր մը հրամցնել, որուն մէջ համապատկերին չափ կարեւոր՝ զայն կեանքի բերելու շարժումը կար»⁷։ Բայց ուրիշ երեւոյթ մըն ալ կայ, որուն համար կրկին Երուարդ Սայիդ Աւրոպախը կը նկատ տիպար մտաւորականը, եւ այդ մէկը «*Philology and Weltliteratur*» յօդուածին մէջ բացատրուած ծրագիրն է, «հումանիստական աւանդութիւնն, մէրը չեղող ազգային մշակոյթ մը կամ գրականութենէ մը ներս բափանցելու»⁸։ Ուրեմն արդէն իսկ, ժամ առաջ, կը տեսնենք որ Սայիդի աչքին՝ գյուրթիւն ունի «օտար»ով եւ օտարին մշակոյթով զբաղելու ձեւ մը, որ իր էրեւեամբ արեւելապաշտ չէ, որ պատրաստ է ընդունելու օտարը ինչպէս որ է, եւ որուն ծրագիրը բանաձեւեր է 1952ին Աւրոպախ անունով բանասէր մը։ Որմէ պէտք է եզրակացնել, թէ կրկին Սայիդի աչքին կայ ըստ երեւոյթին արեւելապաշտ բանասիրութիւն մը եւ ոչ-արեւելապաշտ բանասիրութիւն մը, երկրորդը ըլլալով բուն հումանիստական աւանդութեան ներկայացուցիչը եւ ժառանգորդը։ Երկու բանասիրութիւն եւ հաւանաբար ալ՝ երկու հումանիզմ, մէկը որ մեղսակիցն է գաղութատիրական արկածախնդրութեան, եւ միւսը որ զերծ է գաղութատիրութեան հետ որեւէ մեղսակցութեն։ Կարելի⁹ է հաւատալ այդպիսի հրաշքի մը։ Եւ սակայն թիւ պիտի տեսնենք, թէ այդ եղած է Սայիդին հաւատանքը իր մտաւորական եւ մտածողական կեանքին մէկ ծայրէն միւսը։

Ինչպէս ըսի՝ 1976ի «Ակզրնաւորութիւններ» հարցազրոյցին մէջ պատահածը այն է, որ Աւրոպախի անունը չ'երեւիր եւ ուրեմն գոնէ երեւութապէս դրական հումանիզմի գովքը կը խնայուի մեզի։ Պատճա՝ որ։ Իմ տպաւորութիւնս այն է, որ ասոր պատճառը պէտք է փնտուել Միշել Ֆուկոյի ընթերցումին եւ ժամանակաւոր ազդեցութեան մէջ։ *Beginnings* հատորին ներս արդէն իսկ երկար գլուխ մը նուիրուած էր Ֆուկոյի *L'Archéologie du savoir* [ճանաչումի հնախօսութիւն] գիրքին, ուր Սայիդ կը փորձէր չափուիլ ֆրանսացի փիլիսոփային մեթոդաբանական կատարեալ նորութեան հետ։ Յարցազրոյցին մէջ ընթերցողը պիտի նշանարէ որ բազմաթիւ ուղղակի եւ անուղղակի յղումներ կան Ֆուկոյի գործին, բոլորն ալ



դրական, մասնաւորաբար «արխիտ»ի եւ «կոթողայնութեան» գաղափարներուն, որոնք կը սերին Ֆուկոյի «հնախօսական» ժամանակաշրջանէն: Այստեղ պահ մը Սայիդ ջանք կը թափէ Ֆուկոյի անզիջող հակահումանիզմը ներգրաւելու տարբեր տեսակի նօսեցումի մը մէջ: Այդ մասին ալ՝ աւելի ուշ:

Մինչ այդ, երկու պահեր եւս հետաքրքրական կը գտնեմ հարցազրոյցին մէջ, երկուքն ալ՝ զոյցը վարողի հարցումներուն ընդմէջն դիտուած: Առաջին պահը այն մէկն է, երբ Սայիդի ուղղուած հարցումը կը յիշէ Շեյքսպիրի Կալիբանը, այսինքն «չնաշխարհիկի կերպար»ը որպէս «անհաղորդ կամ միայն լուսանցքային կերպով հաղորդուող էակ», որ վերին պատասխանէ, իր կարգին յիշելով ընկերալեզուարանութեան մարզին մէջ աշխատող մնաւորականներ, մէջբերելով ֆրանց ֆանոնի հայեացքները գաղութատիրութեան դէմ ուղղուելիք դիմադրութեան մասին, բայց ամբողջովին մոռնալով Կալիբանը: Ընթերցողը գիտէ հաւանաբար որ վերջինս ժէ. դարու սկիզբի ճանապարհորդական գեկոյցներէն ներշնչուած «վայրենի»ի կերպար մըն է, որուն վայրենութեան չափանիշը իր լեզու չունենալն է, այսինքն ո՞չ մէկ լեզու բացի տիրապետողի լեզուն: Եթէ վայրենին այստեղ՝ կարող է որոշ չափով ինքնածանաչումի հասնելու, այդ կը պարտի գաղութատիրական լեզուին: Գաղութատիրը ոչ միայն ուրիշ լեզու չի ձգեր վայրենիին, այլ կը յաջողի նաեւ համոզելու գինը որ ամէն պարագայի միայն իր՝ գաղութատիրոց լեզուով կարելի է հասնիլ որեւէ արտայայտութեան եւ ինքնաբացայայտումի: Ենթադրենք պահ մը որ ժէ. դարու Շեյքսպիրի վայրենին եւ ժմ. դարու բանասիրութեան բնիկը նոյն արարածն են, նոյն արժեքներով օժտուած (ինչ որ յոյժ թէական է անշուշտ): Ի՞նչ է Եղուարդ Սայիդի հակազդեցութիւնը այդ հարցումին եւ այդ կացութեան: Գլխաւոր հակազդեցութիւնը արդիական շրջանին եւ մասնաւորաբար՝ արարական երկիրներուն մէջ տեղական լեզուի գործածութեան վրայ դրուած շեշտն է: Այդպիսով՝ Սայիդ անզգալաբար ազգայնականութեան ջատագովը կը դառնայ, որպէս անխուսափելի պահ մը բոլոր դիմադրական շարժումներուն մօտ, գաղութատիրական պայմաններու մէջ: Խսկ ո՞ւր անցաւ այդ թէական նոյնացումը վայրենիին եւ բնիկին միջեւ: Խնդրոյ առարկայ չի դարձուիր ան Սայիդին կողմէ, կարծէք բացայստ բան մը ըլլար, որ չի կարօտիր խնդրականացումի: Ուրեմն գաղութատիրական ծրագիրը առաջին մէկ վայրենին (կ'ուզեմ ըսեմ՝ ժէ. դարու սկիզբը արդէն իսկ, իր բանասիրական-գիտական հանգանանքն անկախ) ինքն իր մէջ կը պարունակէր տեղացին բնիկի վերածող ճանաչողական եւ տիրապետական գործողութիւնը: Կարելի՞ բան է: Եւ եթէ ճիշդ է, որ «Կալիբանի խնդրականութիւն»ը կար անգիտած աշխարհին մէջ, Շեյքսպիրով կամ առանց Շեյքսպիրի, ո՞ւր է այն ատեն Եղուարդ Սայիդի *Orientalism*ին բերած նորութիւնը:

Նոյն նկատողութիւնը կարելի է կատարել եւ նոյն հարցումը կարելի է դնել կարդալով Լելի-Ստրոսին վերաբերեալ հարցումին պատասխանը¹⁰: Յոն Սայիդ կ'ընդունի որ արեւելագիտութիւնը «ազգաբանական կայսերապաշտութեան» մէկ տեսակն է: Բայց անմիջապէս կը հակադրէ, ենթադրելով եւ թէարելով որ արդի ազգաբանութիւնը գործ ունի անհետանալու վրայ եղող ցեղախումբերու հետ, մինչեւ արեւելագիտութիւնը իր գիտութիւնն ու իր տրամասութիւնը կը պարտադրէ ամբողջ աշխարհին (ուրեմն ի միջի այլոց՝ բնիկներուն), կ'ազդէ որպէս գործիք «վարչաքաղաքական որոշումներուն» վրայ: Եթէ մէկ քով ձգուի քաղաքական կիրարկումը, ո՞ւր է սակայն բուն տարբերութիւնը արեւելագիտութեան եւ ազգաբանական կայսերապաշտութեան միջեւ: Առաւել եւս՝ իր պատասխանին մէջ Սայիդ արարական աշխարհը նկատի ունի միմիայն: Բայց արեւելագիտութիւնն ու արեւելապաշտութիւնը չեն սահմանափակուիր արարական աշխարհին, որքան որ գիտեմ: Լելի-Ստրոսը օրինակ մըն է միայն: Ֆրանսացիները շատ կանուխեն (Միշել Լերիսի բերնով) հասկցած են որ իրենց «գիտութիւն»ը հնարաւոր էր միմիայն շնորհիւ եւրոպական կայսերապաշտութեան: Եւ եթէ ազգաբանութիւնը ի վիճակի էր իր գործընթացը քննադատելու, այն ատեն կրկին՝ ո՞ւր է *Orientalism*ին բերած նորութիւնը:

Չոս երկու անգամ կրկնուած այդ հարցումը, *Orientalism*ի նորութեան մասին, հրետորական բնոյք չունի: Կատարեալ նորութիւնը (որով ան լիովին կը ձերբազատուի Լելի-Ստրոսին, Միշել Լերիսէն եւ Կալիբանի խնդրականութենէն) իր ֆուկոյական ներշնչումին մէջ պէտք է փնտռել անշուշտ: Յարցը այն է, որ 1978էն ետք՝ Եղուարդ Սայիդ ո՞չ միայն

2008



զգալի կերպով հեռացած է Ֆուկոյական ներշնչումներէն, այլև՝ հետզիետէ աւելի բացայս կերպով պատերազմի դրօշը պարզած է ֆրանսացի փիլիսոփային դէմ: Յետագայ տարիներու հարցազրոյցներուն մէջ յաճախ կը գտնուի այդ գիծը: Ու Ֆուկոյի դէմ հետզիետէ աճող վերապահութեան, եթէ ոչ թշնամութեան, պատճառը որ կը տրուի այն է, որ Ֆուկոյին գործը տիրութեան (եւ ուրեմն մասնաւորաբար՝ զաղութատիրութեան) երեւոյթներուն դէմ դիմանալու, դիմադրելու եւ դիմադրձելու միջոցներ չ'ընձեռէր: Անշուշտ Սայիդ իրաւունք ունէր ընդունելու եւ մերժելու ո՛վ որ կ'ուզէր: Բայց *Orientalism* գիրքը հրապարակին վրայ է: Եւ այդ գիրքին գլխաւոր ծեռքբերումը Ֆուկոյի «հնախօսական» ծրագիրին ամենէն ուժեղ շարունակութիւնն ըլլալն է: Թիրախը այդտեղ արդի բանասիրութիւնն է: ճիշդ է որ նոյն գիրքը կը հետապնդէ նաեւ ուրիշ ծրագիր մը, այդ մէկը՝ ուղղակի Աւրպախտէն սերած, որ զայն կը գետեղէ Երոպայի բանասիրական աւանդութեան մէջ: Այս ամբողջը պիտի չկարենամ հոս բացատրել մէկ հարուածով ու առաջին մօտեցումով: Պիտի չհետեւին մէկ առ մէկ բոլոր Սայիդեան յայտարարութիւններուն, որոնց միտումը իր խօսակիցները համոզեն էր, թէ ինք որեւէ կապ չունի Ֆուկոյին հետ: *Orientalism*ի կրկնակի ներշնչումը՝ հումանիստական եւ հակա-հումանիստական, Աւրպախտէան եւ Ֆուկոյական, նշմարուած է ինձմէ առաջ Սայիդի բոլոր լուրջ ընթերցողներուն կողմէ, առաջին հերթին՝ նէյնս Կլիֆըրդին եւ Այճազ Ահնադին¹¹: Գիտցած չափովս, Երկրորդին երբեք չէ պատասխանած Եղուարդ Սայիդ: Արածինին քննարկողական ուսումնասիրութիւնն ալ երկար ատեն ձգած է անպատասխան, մինչև իր կեանքին գրեթ վերջաւորութիւնը: Կենդանութեան օրօք լոյս տեսած իր վերջին գիրքին մէջն է միայն, որ Սայիդ յանկարծ նէյնս Կլիֆըրդի նկատողութիւններուն անդրադարձած է, պաշտպանելով իր հումանիստական ծրագիրը անոնց դէմ: Այդ պաշտպանութեան պիտի հետեւինք կէտ առ կէտ ներկայ աշխատասիրութեան Երկրորդ բաժնին մէջ: Առաջին բաժնին նպատակն է ընդհանուր զաղափար մը տալ Սայիդի «արեւելապաշտութեան» վերաբերեալ:

1. Արեւելաբանասիրութիւն

1.1. Քանի մը բառ պիտի ըսեմ նախ հեղինակին մասին: Եղուարդ Սայիդ Երուսաղէմ ծնած(1935) քրիստոնեայ Պաղեստինցի մըն էր, որ Եգիպտոսի անգլիալեզու, յետոյ ալ բուն Անգլիոյ դաստիարակչական հաստատութիւններուն մէջ ուսում ստացած է, աւելի ուշ՝ դրկտորական աւարտաճառ գրած է Կոնրատի մասին¹², ու 1963էն սկսեալ՝ Նիւ Երուկի Կոլումբիա համալսարանը եղած է անգլերէնի եւ համեմատական գրականութեան դասառու, հետեւարար նաեւ իմ գործակիցս տարիներով, որուն հետ ունեցած եմ ծանօթութեան կապեր, ոչ աւելի: Յիշեցինք արդէն իսկ իր առաջին կարեւոր գիրք՝ *Beginnings*ը (1975), որմէ անմիջապէս ետք, ինչպէս տեսանք, եկած է *Orientalism*ը (1978): Նոյն տարիներուն Եղուարդ Սայիդ հերթաբար կը հրատարակէր երկու գիրքեր, որոնք շատ աւելի շեշտուած կերպով քաղաքական բնոյք ունին՝ *The Question of Palestine* եւ *Covering Islam*¹³, որոնցմով պիտի չքբաղին հոս (բայց պէտք է յիշել ու յիշեցնել, որ Սայիդ այդ տարիներուն մօտ էր Արաֆատին եւ իր Պաղեստինի ազատագրական շարժումին): Աւելի ուշ, արեւելագիտութեան եւ արեւելապաշտութեան անդրադարձող գիրքին ճանապարհով գրած է *Culture and Imperialism* հատորը, յետոյ ալ քննադատական եւ բանասիրական աշխատանքին շուրջ նոր անդրադարձումներ պարունակող գիրք մը, *The World, the Text, and the Critic*, եւ դէպի վերջաւորութիւն (Սայիդ մեռաւ 2003ին, Երկար տարիներ արեան քաղցկեղի դէմ պայքարելէ ետք), այդ կարեւոր բայց անտանելի գիրքը որ կը կոչուի *Humanism and Democratic Criticism*, որ կարեւոր է միմիայն որովհետեւ Սայիդ հոն բացայատօրէն կը վերադառնայ իր հիմն զուտ բանասիրական եւ լիովին հումանիստական նախասիրութիւններուն, եթէ երբեք հեռացած էր անոնցմէ¹⁴:

Եղուարդ Սայիդ սկիզբէն եղած է եւ մինչեւ ծայրը մնացած է հումանիզմի ջատագովը: Եւ քանի որ իր շուրջը գտնուող լեզու, գրականութիւն եւ մշակոյք դասաւանդողները ապարադարական հումանիզմի մը ներկայացնեցին էին, ինքը պէտք է զատորոշէր իր հումանիզմը հumanitiesի հումանիզմէն, հետեւարար զայն կոչած է critical humanism, «քննական մարդկայնապաշտութիւն», տարիներով այդ նիւթին շուրջ գրած ու դասաւանդած է, հոյլ մը հետեւորդներ ունեցած է, որոնք այդ քննական կամ քննադատական մարդկայնապաշտութիւնը այնպիսի ծեռով ներկայացնեցած են, որ կարծէ՝ վերիվայրող շարժում մը ըլլար աշխարհի մտային պատմութեան մէջ, մինչդեռ ուրիշ բան չէր եթէ ոչ հու-



մանիզմի երկդարեան դիրքերուն կրկնութիւնը¹⁵: Բայց այդ մասին, ինչպէս ըսի, աւելի ուշ պիտի անդրադառնամ: Միայն յիշեցնեմ որ վերջին քան տարիներուն Ամերիկայի ուսուցչական ամենն ազդեցիկ ընկերակցութեան՝ Modern Languages Associationի նախագահն էր Եղուարդ Սայիդ, ինչ որ շատ բան կ'ըսէ իր վայելած բացարիկ ժողովրդականութեան մասին հւանագույնութեան մօտ, մանաւանդ երբ խորիինք որ այդ դիրքին կրցած էր հասնիլ հակառակ Պաղեստինցի մը ըլլալուն, թէկուզ քրիստոնեայ, Պաղեստինցի մը որ բուռն հակառակորդն էր Միջին Արեւելքի մէջ ամերիկեան քաղաքականութեան եւ բնական է սիոնական ծաւալապաշտութեան: Զինքը այդ դիրքին հասցուցած էր մասամբ *Orientalism* գիրքով ձեռք ձգուած աննախնճաց հրչակը, բայց անշուշտ մասամբ ալ՝ այն իրողութիւնը որ այդ ակադեմականները եւ համալսարանի դասատուները Սայիդի մէջ կը տեսնէին իրենց պաշտօնավարութիւնը հիմնաւորող կամ արդարացնող փիլիսոփայութեան, այսինքն՝ հումանիզմի գիտաւոր ներկայացուցիչը: Եւ եթէ այս ըսածներս ճիշդ են, այն ատեն *Orientalism*ը պէտք է կարդալ ի մտի ունենալով միշտ այս մէկ հարցումը. ինչպէս կ'ըլլայ որ հումանիզմի ախոյեանը, որ էր Եղուարդ Սայիդ եւ երբեք չէ դադրած ըլլալէ, կրցած է գրել այդպիսի գիրք մը:

1.2. Եղուարդ Սայիդի *Orientalism*, 1978ին լոյս տեսած, գրեթէ անմիջապէս ակադեմական ու քաղաքական բնոյրի բազմարի վէճերու կիզակէտը հանդիսացաւ: Ոնանց կողմէ բուռն կերպով քննադատուեցաւ, ուրիշներու կողմէ՝ գնահատուեցաւ եւ իրացուեցաւ որպէս իրենցը: Պատճառներէն մէկը այն էր, որ բազմարի ճակատներու վրայ միաժամանակ պատերազմ կը բանար այդ գիրքը: Բայց գրեթէ միշտ, գնահատողներուն ինչպէս քննադատողներուն մօտ, յայտնուած կարծիքները խոր եւ դժուար սրբագրելի թիւրիմացութիւններու վրայ հիմնուած էին: Մէծ գիրքերուն ճակատագիրն է այս մէկը, եւ Եղուարդ Սայիդին գիրքը անկասկած մէծ գիրք մըն էր, ի. դարու մէծագոյններէն: Երբ ես սկսայ այդ գիրքին շուրջ դասաւանդել 1999ին, արդէն իսկ քան տարիէ ի վեր նոյն կրիւը կը շարունակուէր, հարիւրաւոր յօդիւածներ, գիրքեր լոյս տեսած էին, ու դիւրին չէր այդ անբողջին մէջ ուղղութիւն գտնելը:

Ահաւասիկ գիրքին առաջին պարբերութիւնը.

1975-76ին, քաղաքացիական պատերազմի ահաւոր օրերուն, ֆրանսացի լրագրող մը, Պէյրութ այցելելով ու քաղաքի կեդրոնին վիճակը տեսնելով, կ'աւաղէր ըսելով որ «պատերազմէն առաջ քաղաքը կարծէք կը պատկանէր տակաւին Շատորիիանի եւ Ներվալի Արեւելքին»: Ճիշդ էր անշուշտ ըսածը եթէ նկատի առնենք վայրը, ճիշդ էր իր Ելրոպացի դիտանկիւնն: Արեւելքը գրեթէ Ելրոպական հնարանը մըն էր արդէն, եւ հնագոյն ժամանակէ ի վեր՝ վիպականութեամբ, չնաշխարիկ արարածներով, յաճախանքի վերածուած յիշատակներով եւ դաշտանկարներով, նշանակալից փորձառութիւններով լեցուն տեղ մըն էր: Դիմա անհետանալու վրայ էր այդ Արեւելքը: Արդէն իսկ պատահած էր ձեռով մը, ժամանակը անցած էր: Թերեւս կարեւոր իսկ չէր գիտնալը թէ հոն՝ Արեւելքիներ կ'ապրէին, որոնք բան մը շահած կամ կորսնցուցած էին այդ ընթացքին, թէ նոյնիսկ Շատորիիանի եւ Ներվալի օրերուն՝ հոն բնիկներ կ'ապրէին եւ հիմա իրենք էին տառապողները: Ելրոպացի այցելուին համար զիշատորը Արեւելքի մասին Ելրոպական պատկերացումն էր եւ այդ պատկերացումին ժամանակակից ճակատագիրը: Մէկն ու միւսը նախաշնորհեալ նշանակութիւն մը ունէին, որ հասարակաց էր լրագրողին եւ իր ֆրանսացի ընթերցողներուն¹⁶:

Սայիդի առաջին թիրախը ուրեմն Ելրոպական պատկերացումն էր Արեւելքի մասին, այսինքն այն իրողութիւնը որ հետզհետէ Արեւելքի պատկեր մը կազմուած էր Ելրոպայի մէջ, կամ մինչեւ իսկ՝ որ Արեւելքը կազմուած էր իբրեւ պատկեր, եւ որ Ելրոպացիները իրական Արեւելքին հետ կրնային ունենալ միայն այդ Երեւակայական կամ պատկերակայական յարաբերութիւնը, չանդրադառնալով իսկ որ հոն՝ բնիկներ կ'ապրէին, կամ ընդհակառակը բնիկներու էռլիւնը չափելով իրենց պատկերացումին ընձեռած արժեշափերուն հանաձայն: Առաջին տողերէն իսկ հետեւաբար՝ մօտեցումին եւ զայն անփոփող յղացքին դժուարութիւնը բացայալ է: *Orientalism* (արեւելապաշտութիւն կամ արեւելաբանութիւն) պիտի կոչուի այդ Ելրոպական պատկերացումն: Երբ «պատկերացում» մը կը մատնանշուի եւ կը քննադատուի իբրեւ այդ, նոյն պահուն հարցումը կը ծագի անոր օրինավիճակին մասին: Ի՞նչ կ'ընէ ան: Կը խեղաթիւրէ՝ իրականութիւնը: Ենթադրենք պահ մը, որ այդ է պատասխանը, եւ Սայիդի մտածողութեան մէկ շերտը պարզապէս կ'ենթադրէ որ

2008



Եղածը խեղաթիւրում է: Ասկէ կը ծագին կարգ մը հետեւանքներ: 1) Քննադատին պարտականութիւնն է ցոյց տալ, թէ ինչպէս կազմուած է այդ պատկերացումը, եւ ուրեմն ձեռնարկել ծագումաբանական կամ ծննդաբանական աշխատանքի մը, որ իր կարգին շահեկան է միայն որովհետեւ քննադատուած պատկերացումը արդէն իսկ ստացած է քաղաքացիական իրաւունք, փարձած է տիրական մտայնութիւն: Գիրքը այդ աշխատանքն է, որ կը կատարի: Արեւելքի արեւելապաշտ պատկերացումին ծննդաբանութիւնը վերակազմելու փորձ մըն է, ինչպէս նաեւ հսկայ աշխատանք մը ցոյց տալու համար թէ ինչպէս պատկերացում մը կրնայ դաշնալ միահեծան, Սայիդ կ'ըսէ՝ *hegemonie*: 2) Պատմական վերակազմութենէն առաջ սակայն անհրաժեշտ է համակարգային նկարագրութիւն մը, ենթադրելով որ կառուցային հանգամանք մը կայ այդտեղ: 3) Եթէ խեղաթիւրող պատկերացումին մը հետ է որ գործ ունինք, պէտք է քացատրուի նաեւ անոր միահեծան բնոյթին քաղաքական երեսակը: Այդ ալ կը կատարուի Սայիդի գիրքին մէջ, Եւրոպայի գաղութարար քաղաքականութեան նկատառումով, բայց առանց պատճառական մօտեցումի: Այս կէտին վրայ աւելիով չեմ կրնար ծանրանալ ներկայ տողերուն մէջ, բայց յստակ է որ քաղաքական ու տնտեսական գաղութարարութիւնը չէ հասկցուած Սայիդին կողմէ որպէս նախապայման, ըսենք՝ մարքսական սկզբունքներու համաձայն: Զուտ Ֆուկոյական հայեցքով, մաս կը կազմէ ընդհանրական կառոյցի մը, որ կը պահանջէ մակերեւութային նկարագրութիւն եւ ոչ թէ պատճառներու փնտռուուք եւ հետեւաբար՝ մակարդակի փոփոխութիւն: 4) Ինչո՞ւ սակայն խեղաթիւրող էր Եւրոպական պատկերացումը Արեւելքի մասին: Մէջբերուած տողերուն մէջ թելադրուած պատասխանը այն է, որ ան բնիկը չէր տեսներ ինչպէս որ է, տեղ չէր տար անոր, կը մնար կլանուած իրական կամ երեւակայական ճամբորդներու բերած հաճապատկերներով, կ'անտեսէր երկրին վիճակը, ներքին խնորումները: Տեսանկիւնի՝ խնդիր է ուրեմն: Անդրադառնալու համար այդպիսի պատասխանի մը անբաւարարութեան, կը բայէ գիտնալ, թէ գիրքը այդ ձեւով կարդացուեցաւ եւ այդ պատճառով գնահատուեցաւ իվլամական շարժումներուն կողմէ Միջին Արեւելքի մէջ: Ահաւասիկ հեղինակ մը, որ կու գար Եւրոպական չարագործութիւնները մատնանշելու, Եւրոպայի միահեծանութիւնը քննադատութեան թիրախ դարձնելու, Եւրոպական գիտութիւնը առ ոչինչ համարելու, այդ գիտութեան բոլոր նախապաշարումները աշխարհի երեսին բացայատելու, իսլամը բարենորդութեան իրաւիրողները համեստութեան իրաւիրելու, հօշակելով որ ինքն իր մասին բնիկը միայն կրնայ խօսիլ, ինքը միայն իրաւասու է իր ճակատագիրը որոշելու: Սայիդին գիրքը գործածուեցաւ այսպէս ամենէն ծայրայելու, կրօնական կամ ոչ-կրօնական ազգայնականութիւնները արդարացնելու համար: Արդարացի՝ էր այդ գործածութիւնը թէ ոչ: Ամէն պարագայի՝ Սայիդ շատ կը նեղուէր անկէ: Բազմաթի անգամներ (եւ մանաւանդ՝ 1993ին գրուած վերջաբանին մէջ) փորձած է այդ մեկնաբանութիւնը հերքել:

Ինչ որ ալ ըլլայ՝ թիւրիմացութիւնը անխուսափելի էր, եթէ արեւելապաշտութիւնը ախտի հասկնանք իբրեւ պատկերացում (*representation*) միայն, իսկ պատկերացումը՝ իբրեւ տեսանկիւնային ու քաղաքական պատճառներէ դրոյւած գիտակից կամ անգիտակից խեղաթիւրում: Սայիդի լաւագոյն ընթերցողներէն մէկը՝ ճեյս Կիհֆըրո (որում անունը յիշուեցաւ արդէն իսկ եւ դեռ պիտի յիշուի) նշնարել կու տար, որ *Orientalism*ի հեղինակը ուրիշ բան չուներ հակադրելիք եւ առաջարկելիք իբր փոխընտրանք, եթէ ոչ բնիկներու ապրումներուն եւ անոնց կարծիքին նկատառումը, անոնց հետ կենդանի ու չմիջարկուած հանդիպումը: Ճիշտ է, որ Սայիդի ծրագրին մէջ չէր իյնար փոխընտրանք մը առաջարկելը: Բայց ճշնարտութիւն է, որ եթէ «բնիկ»ին ուղղուիլն է լուծումը, զայն խօսեցնելն է ինքն իր մասին, բնիկը պիտի արտայայտուի տիրող գաղափարաբանութեան եզրաբանութեամբ, այսինքն ազգային չափանիշներով կամ ազգագրական նորագիւտ գիտութեամբ: Եղուարդ Սայիդի գործին մէջ, ազգայնական կեցուածքին կազմութիւնը արեւելապաշտութեան ազդեցութեամբ (եւ ուրեմն անոր հետ մեղսակցութեամբ) երբեք նկատի չէ առնուած, կը մնայ հեղինակային հայեացքն անդին: Բայց մինչեւ հիմա շատ քիչ քննադատներ կրցած են տեսնել այդ կապակցութիւնը: (Այս հարցին պիտի անդրադառնամ ուրիշ առիթով: Նիւրն էր երեւանեան երկրորդ դասախոսութեանս:)

Ի՞նչ է ուրեմն արեւելապաշտութիւնը: Նախ եւ առաջ ակադեմական կրթանք մըն է, որ կը սահմանուի իր առարկայով, իր մեթոդներով, իր արխիւներով, իր համալսարանական բաժանմունքներով, գիտումներու իր բանակով, եւ մանաւանդ՝ երկու դար հնութիւն ունե-



ցող իր աւանդութեամբ, արեւելեան մշակոյթներու եւ քաղաքակրթութիւններու շուրջ իր հաւաքած տուեալներով, երկրորդ ձեռքէ իր գրականութեամբ, բանասիրական մօտեցունով: ճանաչումի համակարգ մըն է, որուն առարկան արեւմտեան աշխարհին դուրս է (եւ միաժամանակ՝ զարմանալիօրէն ներս, քանի որ եբրայերէնը եւ սանսկրիտը առաջին մէկ օրէն կը պատկանին արեւելագիտական մարզին): Ակադեմականէն անդին՝ արեւելապաշտութիւնը, կ'ըստ Երուարդ Սայիդ, «մտածումի ոճ մըն է, որ կը հիմնուի Արեւելքի մը եւ (գրեթ միշտ) Արեւմուսքի մը միշտ է եաբանական եւ ճանաչողական զատորոշումի մը վրայ»¹⁷: Բայց այս երկուքն բխող, կամ անոնց հետ սերտորդն կապուած, կայ երրորդ իմաստ մը.

Taking the late eighteenth century as a very roughly defined starting point Orientalism can be discussed and analyzed as the corporate institution for dealing with the Orient-dealing with it by making statements about it, authorizing views of it, describing it, by teaching it, settling it, ruling over it; in short, Orientalism as a Western style for dominating, restructuring, and having authority over the Orient¹⁸.


Եթէ առնենք ԺՈ. դարու վերջաւորութիւնը որպէս մօտաւոր մեկնակէտ, արեւելապաշտութիւնը կարելի է քննարկել եւ վերլուծել իբրև այն շահադիտական հաստատութիւնը, որ սահմանուած էր գործ ունենալու Արեւելքին հետ, արտադրելով կարծիքներ ու վաւերացնելով զաղափարներ անոր մասին, զայն նկարագրելով, դասաւանդելով, բնակեցնելով, դեկավարելով: Մեկ խօսքով՝ արեւելապաշտութիւնը որպէս արեւմտեան ոճը Արեւելքին վրայ տիրապետելու, զայն վերակառուցելու, եւ անոր վերեւ հեղինակութիւն վայլելու:

Բնական է՝ «արեւելապաշտութեան» կամ «արեւելաբանութեան» երեք սահմանումները եւ երեք տեսակները անկախ չեն իրարմէ: Ակադեմական կրթանքի մը անունն է ան, «արեւելագիտութիւն»: Արեւմուսքը իր «Այլ»էն զատորոշելու եւ ըստ այնն անոր ինքնութիւն մը ընծայելու երեւակայական բայց չափազանց ուժեղ ձեւն է: Իշխանութիւն բանեցնելու եղանակ մըն է: ճանաչողական գործողութիւն, երեւակայական սահմանում, իշխանական գործընթաց: Բացայայտ է, որ հեղինակի աչքին՝ գիտութիւն եւ քաղաքականութիւն չեն կրնար դիւրութեամբ զանազանուիլ, կամ աւելի ծիշտ ըլլար ըսել թերեւս թէ անոնց դասական զանազանումն իսկ կը ծառայէ արեւելապաշտութեան շահերուն: Արեւելագիտութիւն-արեւելապաշտութիւն-արեւելաբանութիւնը կայսերապաշտ ծրագիր մըն է, որ սակայն քաղաքական ձեւով բանաձեւուած ու գործադրուած կայսերապաշտութենէն առաջ սկսած է ծաւալիլ: Եւ ուրեմն՝ այո՛, գիտութիւնը կրնայ կայսերապաշտ ըլլալ, իր ծագումին համաձայն, ինչպէս իր հետագայ զարգացումին ու սկզբունքներուն: Միշել Ֆուկոյի աշխատասիրութիւններուն վրայ յենուելով բացայայտորեն, Սայիդ կը խուզարկէ այսպէս նորերեւոյթ ոլորտ մը, ուր գիտութիւն եւ տիրութիւն, մշակոյթ եւ քաղաքականութիւն անձանաչելիօրէն կը գործակցին ու կը փոխանակեն իրենց արժեքները: Արեւելաբանութիւնը այստեղ հեղինակութիւն մըն է, կամ հեղինակութիւն կը ստեղծէ, իր գիտական մեթենայով, իր եւրոպական հայեացրով, իր գերակշռութեամբ, ըլլալէ առաջ հեղինակութիւն մը քաղաքական ծրագիրի մը մասնակից ըլլալուն պատճառով: Այդ հեղինակութիւնն է (անոր եւրիւնը, անոր գործարկումը), զոր կ'արժէ հարցադրել: Բայց նոյնքան յստակ է, որ արեւելաբանութիւնը քաղաքական-տնտեսական կառոյց մը չէ, որ երկրորդաբար ցոլացուած ըլլար մշակոյթի, բանասիրութեան, հանալսարանական հաստատութիւններու ցանցի մը մէջ: 1976ի հարցազոյցին մէջ՝ Սայիդ կ'ըսէ. «գիտութիւն եւ գիտութեան կամեցողութիւն անբաժանելի են, եւ երկուքը միասին՝ մեկնարասնութիւններ են»: Այդ իմաստով արեւելաբանութիւնը իր առարկան կը պահէ հակակշռի տակ բայց ուրիշ բան մըն ալ կ'ընէ. Կ'որոշէ Այլին այլութիւնը: Այս ամբողջը մէջ բարի մէջ ամփոփելով՝

it is [...] a discourse that is by no means in direct, corresponding relationship with political power in the raw, but rather is produced and exists in an uneven exchange with various kinds of power, shaped to a degree by the exchange with power political [...], power intellectual [...], power moral¹⁹.

Տրամասութիւն մըն է, որ ոչ մէկ ձեւով ուղղակի, կէտ առ կէտ յարաբերութեան մէջ է հում քաղաքական տիրութեան հետ, այլ կ'արտադրուի եւ կը գոյանայ անհաւասար փոխանակութեամբ մը տիրութեան տարբեր ձեւերու հետ. որոշ չափով ալ իր կերպարանը քաղելով քաղաքական, մտաւորական, բարոյական տիրութիւններուն հետ իր ունեցած փոխանակութիւններէն:

2008



Պետք է հասկնալ եւ ընդունիլ վերջապէս որ «մտաւորական տիրութեան» ծիրին նէջ կը մտնեն նոյնքան համեմատական լեզուաբանութիւնը որքամ՝ քաղաքական գիտութիւնները: Սայդի առաջին թիրախը ուրեմն եւ ամէն պարագայի՝ բանասիրութիւնն է ընդհանուր առմամբ, որ ժմ. դարու առաջին տասնամեակին արդէն իսկ կազմ ու պատրաստ՝ կը սպասէր կանչուելու ծառայութեան: Եղուարդ Սայդի վարպետը, հոս ինչպէս այլուր, Միշել Ֆուկոն է, իր *Les Mots et les choses* գիրքին ընդհանուր ծրագիրով, որ էր՝ «մարդկային» գիտութիւններու ծագումաբանական հնախօսութիւնը կատարել, նկարագրելով գիտութեան դաշտը իր արդիական եղանակով, այնպէս՝ ինչպէս կազմուած է ան նոյն ժամանակաշրջանին, ժմ. դարու սկիզբը, լեզուաբանութեան, կենսաբանութեան եւ քաղաքական տնտեսագիտութեան ստեղծումով, որպէս «լեզու»ի, «կենք»ի եւ «աշխատանք»ի մարզերուն նուիրուած կրթանքներ: Ֆուկոյէն փոխ առնուած է նոյնպէս տրամասութեան [ηγιαկուրսի] ստորոգութիւնը: «Տրամասութիւն» մը ոչ տեսակարար գիտութիւն նըն է, ոչ ալ մարքսեան հմաստով վերնակառոյց մը: Կը բանի իրերու ընդմէջն, կը բաշխէ, կը միացնէ, կ'որոշէ առարկան որքան առարկային գիտութիւնը, ունի պատմական համակարգայնութիւն մը, եւ ուրեմն կրնայ նկարագրուիլ իր կառուցայնութեամբ:

Երբ արեւելաբանութիւնը հասկցուի վերջապէս որպէս տրամասութիւն, այն ատեն՝ «պատկերացում» բարին ու յացքին պատճառած թիրիմացութիւնները որոշ չափով կը փարատին: Տրամասութիւնները չեն կրնար այլէս դիտանկիւնային ըլլալ, ինչպէս էին պատկերացումները: Չեն կրնար ենթարկուիլ «գաղափարներու պատմութիւն» [History of ideas] կոչուած մարզին: Բաշխումի եւ կապակցումի համակարգեր են, որոնք կը գործեն գաղափարներէն (եւ ուրեմն ամէն պարագայի նաև գաղափարաբանութիւններէն) անդին: Արեւելաբան կամ արեւելապաշտ տրամասութիւնը այս հաշուով՝ խեղաթիւրում անուանելը անհմաստ է: Խեղաթիւրումը կ'ենթադրէ խեղաթիւրուած իրականութիւն նը, որ կայ անոր մասին մեր ունեցած գիտութենէն անկախ, անկախ մանաւանդ՝ անոր վրայ մեր նետած հայեացքէն, անոր մասին մեր կազմած պատկերէն, անկախ ուրեմն վերջին հաշուով պատկերացումներէն ու մեկնաբանութիւններէն (նիցչեական կամ ոչ): Մինչդեռ արեւելապաշտ տրամասութիւնը եթէ պատկերացում է, իր առարկան որոշող ու ստեղծող պատկերացում նըն է: Ասկէ կու գայ Սայդի նօտ յաճախակի երեւող արտայայտութիւն նը, որ առաջին ակնարկով կրնայ տարօրինակ բուլի. Արեւմուտքն է, որ «արեւելեան» դարձուցած է Արեւելը: Արեւելը կը կազմուի հոն իրեւ պատկեր, իրեւ կառուցում, իրեւ գիտութեան առարկայ: Եւ այդ առումով՝ զարմանալի չէ բնաւ որ արեւելապաշտ հայեացքն ներքափանցուած եւրոպացին չկարենայ «տեսնել» բնիկը: Իբրեւ Արեւելքցի՝ բնիկը գոյութիւն չունի պատկերէն դուրս: Իսկական մարդը թերեւ կայ, հոն է, կ'ապրի ու շնչէ: Բայց արեւելապաշտ հայեացքը գործ չունի այդ «իսկական»ին հետ:

1.3. Ըսի որ *Orientalism* գիրքին լոյս տեսնելէն անմիջապէս ետքը եղած են տարբեր մարզերէ սերած զանազան հակազդեցութիւններ: Պիտի յիշեն անոնցմէ քանի մը հատը: Եղած են սպասելի հակազդեցութիւնները արեւելագէտ բանասէրներու, որոնք կը պաշտպանէին իրենց մարզը, դաս չքաղելով արեւելագիտութեան արեւելապաշտ որոշադրումի ցուցադրումն: Բերնարդ Լեիս այս փաղանգին մաս կը կազմէ: Բայց եղած են ուրիշներ, որոնք փորձած են իրենց մարզը փրկել ոչ թէ հակաճառելով, այլ այդ մարզին սկզբնական քայլերուն վրայ քննական ու պատճական ակնարկ մը նետելով: Այս երկրորդ տեսակի լաւագոյն օրինակներէն մէկն է Թոնմաս Տրաուտմանը, որ հնդկագէտ մըն էր: Գրած է սանսկրիտագիտութեան առաջին փուլերուն մասին հատոր մը, ուր ցոյց կը տրուին Վիլիամ Շոնսի միջամտութենէն սկսեալ՝ տեսաբանական վարանումները եւ լեզուագիտութեան տարօրինակ օրինավիճակը, համեմատական լեզուաբանութեան ստեղծումն մօտ քառորդ դար մը առաջ, իսենք՝ 1785էն մինչեւ 1810 թուական²⁰: Յու հրամցուածը գիտութեան մը նախապատմութիւնն է եւ անոր «նախա-գիտական» եւ «ենթա-գիտական» հանգրուանին նկարագրութիւնը, բան մը որ չափազանց շահեկան է որպէս գիտութեան մը նախապատմութիւնն է շուրջ հետազոտութիւն, բայց չի պատասխաներ անշուշտ Սայդի միաժամանակ «հնախօսական» եւ քաղաքականացած քննադատութեան: Եղած են խորունկ քննադատութիւններ, ինչպէս այն մէկը որուն կը հետեւիմ սկիզբէն ի վեր, ճէյս կի-ֆըրդի գրիչն սերած: Այս մէկը երկար ճամբայ մը կը կտրէ Սայդին հետ, քննելով անոր հաւատարմութեան աստիճանը Ֆուկոյի հնախօսական մօտեցումին նկատմամբ, բայց



Նաեւ անոր մատնանշումներուն հետեւանքը ուրիշ մարզերու մէջ, որոնք ազգագրութեան նման այլուրթեան ստորոգութեան վրայ կը հիմնեն իրենց աշխատանքը եւ «այլուրթեան» դրոշնը կրող մշակոյթներ կ'ուսումնասիրեն: Այս վերջին հարցադրումը շատ հարուստ հեռանկարներ բացած է ամերիկեան ազգագրական բաժաննունքներէն ներս: Իր գրախօսականի վերջին էջերուն, Կիֆըրդ երեւութապէս կը հեռանայ Սայիդէն եւ հարց կու տայթ Ֆուկոյական մօտեցումը արդեօք հ՞նչ նպաստ կրնայ բերել մշակոյթներու ուսումնասիրութեան²¹, երբ «մշակոյթ»ի յղացքն իսկ խնդրոյ առարկայ կը դառնայ, որպէս հիմքը արդի ազգագրութեան, Ֆրանց Բուասէն ի վեր:

Հակագդեցութիւններու այս հակիրծ քննարկումը պիտի վերջացնեմ պատմագէտի մը օրինակով, որ ամենայն միամտութեանք կը կրկնէ արեւելապաշտ կեցուածքը, կարծելով թէ Սայիդի քննարկումին դէմ վճռական հակամառութիւն բերած է: Դէյլիդ Կոպֆ կ'ուզէ այսպէս անպայման փաստել որ արեւելագիտութիւնը հսկայ նպաստ մը բերած է քաղաքակրթութեան, շնորհիւ Արեւմուտքի քննական ոգիին, քանի որ վերջինս ի միջի այլոց Հնդիկներու կրօնական ու առասպելական աւանդութիւնը փրկած է մոռացութենէ ու կորուստէ: Աւելին, ինու ուր անյարիդ առասպելներու եւ հաւատալիքներու խառնիճաղանձ մը կար միայն, եւրոպական արեւելագիտութիւնը կրցած է (կ'ըսէ Կոպֆ) զանոնք համարկել նորակազմ ամրողականութեան մը մէջ: Չեմ չափազանցեր: Անաւասիկ նախադասութիւնը. «The work of integrating a vast collection of myths, beliefs, rituals, and laws into a coherent religion, and of shaping an amorphous heritage into a rational faith known as «Hinduism» were endeavors initiated by Orientalists»²² [Առասպելներու, հաւատալիքներու, ծեսերու եւ օրէնքներու ընդարձակ հաւաքածոյ մը համարկել ինքնայարիդ կրօնքի մը մէջ, եւ անկերպարանք ժառանգութենէ մը մեկնելով՝ կազմաւորել բանական հաւատք մը որ կը կոչուի այսօր «Հնդուիզմ»՝ արեւելագէտներու թափած ջանքերուն արդիւնքն է]: Նոյն հեղինակը, նոյնքան ապշեցուցիչ միամտութեանք մը, կը բացատրէ որ «հնդկական ազգային զարթօնքը անյօնանալի պիտի ըլլար առանց բրիտանական գաղութարար փորձառութեան»²³, չափազառնալով որ այդ կէտին մէջ կը կայանայ ամբողջ հարցը, ու եթէ պատմա-քննարանական ակնարկի մը չենքարկուի այդ մեղսակցութիւնը, ըսուածը ուրիշ բան չէ եթէ ոչ խոշոր հասարակ տեղիք մը: Արդիականութեան եւ արդիականացումի հասարակ տեղիքն է²⁴: Այս իմաստով, անշուշտ որ ազգայնացումի պահը եւ ազգայնականութիւնը արդիական են, կատարելապէս: Անշուշտ որ կը վերարժեւորեն «աւանդութիւն» ըսուածը եւ նոր «ինքնութիւն» մը կու տան զայն կրողներուն, այսինքն՝ «բնիկներ»ուն: Բայց խօսիլ «ազգային զարթօնք»ի մասին կը նշանակէ նոյն մեղսակցութիւնը կրկնել արեւելապաշտութեան եւ ազգայնականութեան միջեւ: Կը նշանակէ «արդիականութիւն»ը ընդունիլ որպէս արժէք, ազգայնական մտայնութիւնը վաւերացնող տեսակէն: Մինչդեռ յստակ պէտք է ըլլայ, որ մեր խնդիրը ամբողջ գործողութիւնը ապավաւերացնելուն մէջ կը կայանայ, անգելերէն պիտի ըսուէր՝ to delegitimize: Անշուշտ Եղուարդ Սայիդին ալ խնդիրն էր, այն տարբերութեամբ թերեւս, որ ինքը երբեք հարցադրութեան չէ ենթարկած արեւելապաշտութեան եւ ազգայնականութեան միջեւ նշուած մեղսակցութիւնը: Բոլոր պարագաներուն եթէ ունինք այսօր հրատապ պարտականութիւն մը, ծագումաբանական հնախօսութիւնը գործադրել է որպէս ապավաւերացնող կամ վաւերագրկող գործիք:

1.4. [Այս բաժինը նուիրուած էր արեւելապաշտ բանասիրութեան գլխաւոր գիւտին, որ է «բնիկ»ի կերպարին գիւտը: Հոս է որ ցոյց կը տրուէին բնիկի եական յատկանիշները: ա) Բնիկը վերապրող մըն է: բ) Բնիկը պատմականացած էակ մըն է: գ) Բնիկը արեւմտեան բանասիրութեան նայուածքը ներանձնականացնող արարածն է: Հոս է նաեւ, որ կը հրամցուէր ուրուագիծ մը ժմ. դարու ազգայնականութիւններու կազմութեան մասին, ինքնահայեցական նմանակութեան երեւոյթին հիման վրայ: Այս բաժինը զանց կ'առնեն հիմա, ու կ'անցնիմ հումանիզմի եւ հակա-հումանիզմի հարցերուն: Հետաքրքրուող ընթերողը կը յղեն առ այժմ *Le Deuil de la philologie* ֆրանսերէն գիրքիս երրորդ գլուխին ու ներկայ աշխատասիրութեան վերջին հատուածին, ուր բնիկին յատկանիշները կը թուեն վերստին արագ ակնարկով մը:]

2008



2. Երկու հումանիզմներ²⁵

2.1. Ինչ որ յայտնի չէր տակաւին Եդուարդ Սայիդի իսկ աչքին 1976ին հետզհետու բացայստ դարձաւ հետագայ տարիներուն. ինքը հումանիզմի ջատագովն էր: Այդ էր անշուշտ սկիզբեն, երբ Երի Ալքրապահի բանասիրական ծրագիրը կ'իւրացմէր: Հետաքրքրականը այն է, որ *Orientalism*ի լոյս տեսնելն ետքը, Սայիդ չփառեցաւ իր գիրքը մեկնաբանելէ ու վերա-մեկնաբանելէ իր հումանիստական ակնոցով եւ վերանորոգուած ձեւով արտայայտուելէ որեւէ ուրիշ տեսակի մեկնաբանութեան դէմ: Այդ ընթացքի վերջին հանգրուանին կը հանդիպի գիրքին համար գրուած 2003ի յառաջաբանին մէջ, որ ծայրէ ծայր՝ հումանիստական ներշնչումով գրուած հաւատոյ հանգանակ մըն է: Ֆիշդ է նոր-գաղութատիրութեան եւ ամերիկեան կայսերապաշտութեան ձաղկումը կայ այդտեղ բայց այդ ձաղկումը հրամցուած է որպէս գիրքին միակ արժանի մեկնաբանութիւնը: Քամի մը նէջբերումներ բաւական են որպէսզի հանողուինք թէ այդպէս է իրողութիւնը.

*Orientalism*ով, կ'ուզէի հումանիստական քննադատութեան վրայ հիմնուիլ, լայնցնելու համար պայքարի հնարաւոր դաշտեր...: Ինչ որ փորձեցի ընել հոմ՝ կոչեցի «հումանիզմ», բառ մը զոր կը յանաշին գործածել, հակառակ անոր որ յաւակնոտ յետարդիկան քննադատները զայն արհամարհանքով կը մերժեն²⁶:

Այդ յաւակնոտ քննադատները մենք ենք ուրեմն: Կասկած չկայ, որ Սայիդի հումանիզմը «սրտցաւ» ու «լայնախոնի» հումանիզմ մըն էր, որ կ'ուզէր դիմագրաւել այս աշխարհի երեսին «անարդարութիւնը եւ տառապանքը», որ կ'ուզէր մտաւորականը տեսնել յանձնառու դիրքերու վրայ, աշխարհիս գործերուն մէջ խառնուած: Յետեւարար երկրնորանքը պարզ էր, ըստ այդ յառաջաբանին եւ այդ մեկնաբանութեան. կամ հումանիզմը, կամ բարբարոսութիւնը: Յաւակնոտ քննադատները հաւանաբար բարբարոսութեան կողմն էին: 2003ի մեկնաբանութեամբ, հումանիզմը առաջին ակնարկով տարբերութիւնները յարգելու կարողութիւնն էր, հոմանիշ էր սրտբացութեան, լայնախոհութեան եւ հիւրասիրութեան: Ազգայնականութիւններու եւ կրօնքներու հալածախտական կարծրացումներուն դէմ յանդիման՝ հումանիզմը պիտի սորվեցնէր ինչպէս «վերստին կապ հաստատել աշխարհիկ եւ բանական խօսքի մը հետ, միջազգային օրինաչափութեամբ» [the active practice of wordly secular discourse]²⁷: Յումանիզմը համատիեզերական տարրողութիւն մը ունէր, ինչպէս Ժ. դարուն: Ահաւախիկ ուրեմն քանի մը յատկանիշներ, քով քովի դրուած. սրտբացութիւն, տարբերութիւններու նկատմամբ յարգալիր վերաբերմունք, աշխարհիկութիւն: Այս աղիւսին ընդմէջն է, որ Սայիդ կը կարդար իր իսկ գիրքը:

Բայց ի՞նչ կար օպանանալու, պիտի հարցուի: Ինչո՞ւ այդքան ապշած էի երբ առաջին անգամ կարդացի այդ յառաջաբանը: Արոեօր մոռցա՞ծ էի, որ հումանիզմը սկիզբէն ի վեր Սայիդի ծրագիրը եղած էր, Ալքրապահի հաւատարին աշակերտին կեանքի ծրագիրը: Սայիդը չէ՞ր որ 1969ին Ալքրապահի *Philologie der Weltliteratur*ը անգլերէնի կը բարգմանէր: Ինքը չէ՞ր, որ ինը տարի ետքը, *Orientalism* կոչուած հատորին մէջ, հումանիզմը կը վերակոչէր, ըսելով՝ «... այս տեսակի մտահոգութիւններէ մղուած, հումանիստական ուսումնասիրութիւն մը կրնայ պատասխանատու կերպով քաղաքական եւ մշակութային հարցերուն մօտենալ»²⁸: Ֆիշդ է որ այդ ըսելով կ'ուզէր խանգարել այդ բուականներուն Ամերիկայի մէջ գրականութիւն եւ մշակոյթ դասաւանելու, այսինքն հստանութեան կոչուած մարդագիտութիւն և մշակութային աշխատանքը»ին եւ «քաղաքական ձգտումներուն» միշեւ կապակցութիւնը, կ'անգիտանար տիրապետական եւ գաղութատիրական երեւոյները, միահեծանութեան վրայ հիմնուած յարաբերութիւնները, Եւրոպական եւ ամերիկեան կայսերապաշտութիւնը: Բայց եւ այնպէս խօսքը հումանիզմի մասին էր, «հումանիստական հետազոտութեան» մասին: Եւ քիչ մը եւս շարունակելով նոյն ուղղութեամբ, հումանիզմի լման՝ Երկրարեան ծրագիրը չէ՞ր արդեօր որ կ'ոգեկոչուէր, երբ գիրքին ներածական գլուխին մէջ կը կարդայինք.

Ինչպէս նկատի առնել արեւելապաշտութեան մշակութային եւ պատմական Երեւոյթը որպէս տեսակ մը ուզուած մարդկային գործ... առանց իր պատմական բարդութիւնը խեղաթիրելու...²⁹:



Ուր «ուզուած մարդկային գործ» բառերը (որ կը թարգմանեն անգլերէն willed human work արտայայտութիւնը) ընդգործուած են Սայիդի կողմէ եւ լրելեայն բայց շատ բացայայտ կերպով կը յուրին այն փիլիսոփայական դրոյքին, որը Սայիդ պիտի չդադրէր կրկնելէ, ներշնչուելով անգամ մը եւս Աւրոպախէն: Ո՞՞ դրոյքին: Այն մէկուն, որուն համաձայն կարելի է ճանչնալ միայն (բայց անհրաժեշտ է ճանչնալ) ինչ որ մարդուն գործն է, մարդուն իսկ ձեռքով կատարուած: Դրոյք մը որ փոխ առնուած էր ԺԸ. դարու իտալացի փիլիսոփայ, Ենթադրաբար հումանիզմի առաջին մտածող ու տեսաբան՝ ճանրատիստա Վիկոյին, դրոյք մը զոր Աւրոպախ եւ իրնէ եղաք Եղուարդ Սայիդ բազմաթիւ անգամներ մէջբերած են³⁰: Մարդը այն է ուրեմն ինչ որ կ'ընէ, ինչ որ կ'արտադրէ, այսինքն՝ խորքին մէջ՝ իր մշակոյքը: Չունի ո՞չ մէկ ուրիշ էուրիւն, բանական կամ աստուածաբանական: Պէտք է յիշել այս նախադասութիւնը. «արեւելապաշտութեան մշակութային եւ պատմական երեւոյքը որպէս ուզուած մարդկային գործ, willed human work...»: Արեւելապաշտութիւնը ինքնին (կամ արդեօք պէտք է հասկնալ պարզապէս՝ արեւելագիտութիւնը, ի վերջոյ նոյն բառն է Սայիդի մօս՝ orientalism), որպէս պատմական երեւոյք, մաս կը կազմէ մարդկային (կամ գոնէ՝ արեւմտեան մարդու) մշակոյքին, այդ յազգեցած եւ պարտադիր համակարգ»ին, ինչպէս կ'ըսէ Եղուարդ Սայիդ: Սայիդի հանճարեղ որոշումը եղած է անկէ սկսիլ, զայն որդեգրել որպէս «սկզբնաւորութիւն», տալու համար արեւմտեան մարդկութեան խորագոյն բնորոշումը:

Աւիքտն կ'օգտուիմ հրամցնելու համար հոս վերջապէս քանի մը հատուածներ Աւրոպախի «Philologie der Weltliteratur» յօդուածեն, յուսալով որ այդ ձեւով ամբողջացուցած կ'ըլլամ ինչ որ կ'ըսէի վերը բանասիրական հումանիզմի կեդրոնական ծրագիրին մասին: Աւրոպախ, ինչպէս գիտենք հիմա, յուսահատական ծիգով մը ուզած է այդ ծրագիրը վերարժեւորել, անոր արդիական ձեւ մը տալով: Մէջբերումները կու տամ նախ անգլերէնով, այսինքն՝ Եղուարդ Սայիդի թարգմանութեամբ եւ լեզուով:

Our knowledge of world literatures is indebted to the impulse given by historicist humanism; the concern of that humanism was not only the overt discovery of materials... but... their penetration and evaluation so that an inner history of mankind - which thereby created a conception of man unified in his multiplicity - could be written. Ever since Vico and Herder this humanism has been the true purpose of philology; because of this purpose philology became the dominant branch of the humanities. (էջ 4)³¹

Քամաշխարհային գրականութիւններու մեր ճանաչումը կը պարտինք պատմագիտապաշտ հումանիզմին կողմէ տրուած մղումին [Գէօրգի Ժամանակաշրջանին]: Այդ հումանիզմին մտահոգութիւնը միմիայն նոր նիւթերու բացայայտումը չէր անշուշտ..., այլ՝ անոնց ներքավանցումը, անոնց գնահատումը, որպէսզի կարելի ըլլար գրել ներսէն դիտուած մարդկութեան պատմութիւն մը, այսինքն պատմութիւն մը որ նոյն արարով՝ ստեղծէր իր բազմազանութեան մէջ միակտուր մարդու մը յդացումը: Վիկոյի և Հերդրի ժամանակաշրջանէն ի վեր, այդ հումանիզմն է որ եղած է բանասիրութեան իսկական նպատակակետը: Այս նպատակակետը նկատի առնելով, բանասիրութիւնը դարձած է հումանիստական ուսմունքին տիրական ծիրելը:

The inner history of the last thousand years is the history of mankind achieving self-expression; this is what philology, a historicist discipline, treats. This history contains the records of man's mighty, adventurous advance to a consciousness of his human condition and to the realization of his given potential; and this advance [...] still seems to have proceeded as if according to a plan...» (էջ 5)

Վերջին հազար տարիներու ներսէն դիտուած պատմութիւնը ուրիշ բան չէ եթ ոչ ինքն իր արտայայտութեան հասնող մարդկութեան մը պատմութիւնը: Այս է բանասիրութեան նիւթը, եթէ հասկնանք որ բանասիրութիւնը պատմագիտապաշտ կրթանք մըն: Այս պատմութիւնը ինքն իր մէջ կը պարունակէ մարդուն ուժեղ, արկածալից յառաջդիմութիւնը դէախի իր մարդկային կենսապայմաններուն գիտակցումը եւ դէախի իր մէջ գտնուող կարողականութեան իրագործումը: Եւ այս յառաջդիմութիւնը այնպիսի ծեւով կատարուած է, որ կարծէք նախապէս գծուած ծրագիրի մը հետեւէր:

How is the problem of synthesis to be solved [...] Should [the historical synthesis of which I am speaking] succeed perfectly we would be given a scholarly achievement and a work of art at the same time (էջ 11).

2008



Յանադրական ներկայացումի այս հարցը ինչպէ՞ս պիտի լուծուի: [...] Եթէ կարենա-
յինք հասնիլ լիովին պատճական համապատկերի մը, պիտի ումենայինք միաժամա-
նակ գիտական սքանչելի իրագործում մը եւ արուեստի գործ մը:

Անշուշտ ժամանակները փոխուած են: Անշուշտ Գեօրգի տերմիններով չենք կրնար
ուղղուիլ այսօր: Պետք է հետեւաբար բանասիրական հումանիզմի ընդհանուր՝ համադ-
րական ծրագիրը վերաբանածել մեր ժամանակին համար եւ անոր համաձայն: Այս ամ-
բողջին լման արժեւորումը կը ճգեմ ուրիշ առիթի:

2.2. Եւ իիմա կը շարունակեմ հարցումներու շարք: Արդեօր հումանիզմի այդ ոգեկո-
չումը եւ Ալբրապահի բանասիրական ծրագիրին այդ վերասահմանումը Սայիդին համար
հետզիետ մտասեւեռում մը չէ՞ դարձած, մանաւանդ իր կենարի վերջաւորութեան, երբ
զայն կը տեսնենք բացայայտուած, առանց ոչ մէկ վերապահութեան, ոչ մէկ շաբարի, Սա-
յիդի կենդանութեան լոյս տեսած իր վերջին հատորին՝ *Humanism and Democratic criticism*-
ին մէջ: Այս գիրքը կը հրամացնէ դասախոսութիւններու շարք մը, որոնք անգամ մը եւս ու-
րիշ բան չեն եթէ ոչ հումանիզմի ջատագովութիւն մը: Ակիզը Սայիդ կ'ըսէ, թէ պիտի չընէ
հումանիզմի պատճութիւնը, ինչպէս ըրած էր Յայդեգըրը իր 1947ի *Brief über den
Humanismus* [Նամակ յաղագս հումանիզմի] մէջ: Տարօրինակ գգուշաւորութիւն մըն է այս
մէկը, որովհետեւ Սայիդ շատ լաւ գիտնալու էր որ Յայդեգըրի այդ «Նամակ»ը գուտ հա-
կա-հումանիստ հաւատամք մը կը ներկայացնէր: Նետեւաբար դժուար է հասկնալը թէ
ինչպէս բանասիրական հումանիզմի եւ հումանիստական բանասիրութեան դրուատիք
մը կրնայ որեւէ հասարակ կէտ ունենալ Յայդեգըրի քանդումի, աւանդագերծումի գործո-
ղութեան հետ: Բայց անշուշտ միամտութիւն չկայ Սայիդի մօտ, քանի որ անմիջապէս ետք
կը յիշէ ճէյմս Կլիֆըրդը, որուն անունը արդէն իսկ քանի մը անգամ երեւցաւ սոյն գրութե-
անս մէջ, որպէս առաջին վճռական քննադատը Սայիդի գիրքին, որ կը բացայայտէր խոր
հակասութիւնը, աններդաշնակութիւնը, *Orientalism* գիրքին թափանցկօրէն մարդկայնա-
պաշտ ծրագիրին եւ հոն գործադրուած Ֆուկոյական «տեսաբանութեան» միջեւ: Բնա-
կան է Սայիդ այստեղ չի յիշեր իր գիրքին ուղղուած այս առաջին ուժեղ հակազդեցութիւ-
նը խոնարհելու եւ ընդունելու համար Կլիֆըրդին ըսածք: Կ'ընդունի միայն, որ Ֆուկոյա-
կան տեսաբանութիւնը «զերծ էր հումանիզմի մէջ սովորական «էապաշտ» [essentialist,
այսինքն՝ բարդ մշակութային իրականութիւն մը մէկ ջուրի մէջ լուացող] եւ ամբողջատի-
րական կեցուածքին³²: Ասկէ աւելին չ'ընդունիր: Իր հումանիզմը կը հակադրուէր սովորա-
կան հումանիզմին, բայց չէր դադրեր մարդկայնական ըլլալէ: Չատ աղէկ: Բայց այն
ատեն ինչպէ՞ս պիտի կարենայ հակադրուիլ Կլիֆըրդի քննադատութեան: Ինչպէ՞ս պիտի
կարենայ փրկել իր մարդկայնականութիւնը, ինչպէ՞ս պիտի կարենայ գերծ մնալ հակա-
սութենէ: Յակայարձակումը կը կատարուի նախ չորս կէտերու շուրջ:

1) Սայիդ կը յիշեցնէ որ ինքն էր առաջինը Միհացեալ Նահանգներու մէջ, առնուազն
հումանիստ գիտութիւններու մարզէն ներս, որ անդրադարձած ըլլայ Ֆուկոյի գործին: Այս
մէկը գիտենք արդէն իսկ. խօսքը 1975ի հատորին մասին է, որուն մէջ կայ Ֆուկոյի
Archéologie du savoir գիրքին երկար քննարկումը, մտածողական համաժիրի մը մէջ որ
բացարձակապէս կապ չունի Ֆուկոյին հետ, քանի որ այդտեղ բանասիրական լժակի մը
որոնումն է խնդրոյ առարկան: Այսինքն (յիշեցում մըն է միայն) ուրկէ՝ սկսիլ, ո՞ո չնչին
կամ անծանօթ մնացած մանրամասնութենէն, ո՞ո գաղտնի սաղմէն, որպէսզի բանասիրա-
կան խնդրը կարենայ ուռճանալ, նշանակալից համադրութիւն մը արտադրել, որպէս ժա-
մանակաշրջանի մը, վայրի մը, մշակոյթի մը, համաժիրի մը համադրութիւնը կամ համա-
պատկերը: Եւ ուրեմն ու ամէն պարագայի՝ Սայիդի առաջին պատասխանն այն է, որ ին-
քը Ֆուկոյական մեթոդաբանութեան դաս չունի ստանալիք, քանի որ ինքն էր առաջինը:

2) Ասկէ անմիջապէս ետքը, Սայիդ կը բացատրէ որ հումանիզմը չ'սկսիր եւ չի վերջա-
նար էապաշտ եւ ամբողջատիրական ձգտումներով: Այս մէկն ալ տարօրինակ փաստարկ
մըն է, քանի որ այդ չէր Կլիֆըրդին ըսածք: Յարցը ծրագիրի եւ մեթոդի, հումանիզմի եւ
հակա-հումանիզմի հակադրութեան մէջ էր:

3) Ուրեմն պէտք կայ նոր՝ երրորդ փաստարկի մը: Այս անգամ Սայիդ կը բացատրէ որ
պատասխան եւ դաստիարակութեան հումանիստական իդէալները տակաւին ի գօրու



Են ամենէն գրկուածներուն հայքայթելու համար անհրաժեշտ ուժը անարդար պատերազմներուն եւ զինուորական գրաւումներուն դէմ պայքարելու ուղղութեամբ, եւ հոս՝ ի մտի ունի ի միջի այլոց (կ'ենթադրեմ) Պահեստինցիներուն վիճակը: Փաստարկը առարկութիւն չի վերցներ: Բացի անկէ որ շատ ծուռ պատճառաբանութիւն մըն է: Կարծէք՝ Ֆուկոյի հակա-հումանիզմը (քանի որ ան էր դիտարկուածը) անարդար պատերազմներու եւ զինուորական գրաւումներու կողմնակիցն ըլլար:

4) Եւ վերջապէս կ'անցնինք հակաճառութեան չորրորդ հանգրուանին: Այստեղ՝ Սայիդ կը կրկնէ Ամերիկայի մէջ սովորութիւն դարձած հակա-յարաբերապաշտ [anti-relativist] յանկերգը, որուն համաձայն Ֆուկոյական ծեւի տեսութիւնները իրական դէպքերը կը մեկնաբանեն որպէս լեզուական էֆելուներ, ինչ որ վիճաբանութեան հոկ չի կարօտիր, կ'ըսէ Սայիդ, քանի որ այդ տեսութիւնները ի սկզբանէ իրենք իրենց կը հակաճառէն, տրուած ըլլալով «the historical impact of human agency and labor», այսինքն՝ մարդկային դերակատարութեան եւ աշխատանքին պատճական ազդեցութիւնը: Այս վերջին փաստարկը ցոյց կու տայ, որ Սայիդ վերջնականապէս որոշած է չհասկնալ Ֆուկոյի տեսութիւնները եւ կրկնել ամերիկան հասարակ տեղիբները լեզուական յարաբերականութեան մասին:

Ահաւասիկ ուրեմն չորս փաստարկ ու չորս պատասխան, մէկը միւսէն ծուռ: Ես առաջինն էի: Յումանիզմը չի սահմանափակուիր համալսարաններուն մէջ դասաւանդուած ապաքաղաքական գրականագիտութեամբ եւ բարոյապաշտութեամբ: Յումանիզմը արդարութեան կողմն է (եւ ուրեմն հակա-հումանիզմը՝ անարդարութեան): Ֆուկոյական տիպի տեսաբանութիւնները յարաբերապաշտ փիլիսոփայութեան մը վրայ իիմնուած են, որ կը ժխտէ իրական աշխարհի վրայ մեր ունեցած ազդեցութիւնը: Ահաւասիկ.

Այս ատեն կը հաւատայի եւ այսօր ալ կը հաւատամ, որ կարեի է հումանիզմը քննադատել հումանիզմի անունով: Եթէ գիտակից ենք անոր գործած չարիքներուն, ապրած ըլլալով երրոպակեդրոնութիւնը եւ կայսրութիւնը, կրնանք տարբեր տեսակի հումանիզմ մը բանաձեւել, որ ունենայ աշխարհաքաղաքացիական բնոյթ, որ գրուածքներուն ու լեզուին հանդէպ հոգատարութիւն ցոյց տայ, ի վիճակի ըլլալու համար անցեալի մեծ դասերը քաղելու, ինչպէս ըրած են օրինակ Աւրոպախ եւ Լեռ Սպիցը...: Յումանիզմի կրիզին եթէ նայինք, հոն կայ այն աշխարհիկ գաղափարը, որուն համաձայն պատճական աշխարհը ստեղծուած է մարդոց եւ կիներուն կողմն, եւ ոչ թէ Աստուույ, եւ կրնայ հետեւաբար հասկցուիլ բանականօրէն, Վիկոյի Նոր Գիտութիւնը գիրքին մէջ բանաձեւուած սկզբունքին համաձայն: Իրապէս ճանաչելի է այն միայն որ մենք մեր ձեռքովը կառուցած ենք: Կամ նոյն բանը տարբեր ձեւով ըսելու համար. կրնանք իրերը ընթանել անոնց կառուցումի եղանակին համաձայն: Վիկոյի բանաձեւը պատճութեան անցած է verum/factum հաւասարութեան կերպով, ինչ որ կը նշանակէ թէ, որպէս պատճութեան մէջ գտնուող մարդկային էակներ, կը ճանչնանք ինչ որ կը կառուցենք մեր ձեռքով...³³:

Կը վերադառնանք հետեւաբար նոյն կէտին: Ինչպէս հակազդել այս տեսակի հաւատոյ հանգանակներուն: Յիանալ ըստածին ապշեցուցիչ միամտութեա՞ն վրայ, թէ հիանալ բանասիրական հումանիզմը հիմնող փաստարկումի կրկնողական բնոյթի՞ն վրայ: Խորունկ կրկնութիւն մըն է ի հարկէ, քանի որ երկու հարիւր տարիէ ի վեր բանասիրական հումանիզմը անով կը սնանի: Ո՞ր փաստարկը: Այս մէկը որուն համաձայն մարդ ըսուածը self-made արարածն է, ինչպէս պիտի ըսէին անգլերէն: Ինքն իր արտադրութիւնն է: Ինքն է արտադրողը եւ ինքն է արտադրուածը: Չունի ուրիշ էռթիւն: Ասկէ կը բխին պատճագիտապաշտութիւնը [historicism] եւ աշխարհիկութիւնը [secularism]: Բայց ասկէ կը բխի նաեւ բանասիրութեան վրայ դրուած շեշտը, քանի որ բանասիրութիւնը ըստ էռթեան՝ ինքնաստեղծ մարդուն գիտութիւնն է, եւ նոյնիսկ՝ բացարձակ գիտութիւնը, ինչպէս կ'ըսէր էռնեստ Ռինան: Ապշեցուցիչ միամտութիւնը բանաձեւումին մէջ չէ միայն: Յետեւանքներուն մէջ է նաև: Եթէ ճիշդ է որ բանասիրութիւնը մարդուն գիտութիւնն է, եթէ ճիշդ է որ մարդկութեան յիշողութիւնն է (բան մը որ կրկնուած է Ֆրիդրիխ Շլեֆլէն մինչեւ Մաքս Միւլը,

2008



Մաքս Միւլլըրէն մինչեւ Ռընան, Ռընանէն մինչեւ Աւրոպախ, եւ Աւրոպախէն մինչեւ Եղուարդ Սայիդ, եւ ուրեմն այսքան մեծ անուններու հաւանութիւնը վայլելով՝ չի կրնար սխալ ըլլալ, ճիշդ է նաեւ որ ան արեւմտեան մարդու մշակոյթին առանցքն է: Ինչ որ ալ ընենք ու ըսենք, արեւմտեան մարդն է որ կ'արտադրէ մարդուն բացարձակ գիտութիւնը:

Այս ձեւով Սայիդ ձեռքի մէկ շարժումով ջրած եղաւ Կլիֆըրդի նկատողութիւնները: Եւ-րոպակեդրոն եւ կայսերապաշտ հումանիզմը պէտք է քննադատուի ուրիշ հումանիզմի մը անունով, այս մէկը՝ աշխարհաքաղաքացիական, գրուածքներուն նկատմամբ հոգատար, այսինքն Աւրոպախի եւ Վիկոնի հումանիզմը: Ահաւասիկ մէջբերածս, այս անգամ անգլերնով.

I believed then and still believe, that it is possible to be critical of humanism in the name of humanism and that, schooled in its abuses by the experiences of Eurocentrism and empire, one could fashion a different kind of humanism that was cosmopolitan and text-and-language-bound in ways that absorbed the great lessons of the past...

Կայ ուրեմն երկու տեսակի մարդկայնապաշտութիւն: Մէկը արեւելաբան ու արեւելապաշտ, միահեծան, ինքնակեդրոն, կայսերապաշտութեան մեղսակից, նաեւ հալածախտական կարծրացումներուն մեղսակից, եւ ուրիշ մը, որ... ճիշդ հակառակն է, որ կը պարունակէ իր մէջ պատմական, ազատ մարդու մը գաղափարը, մարդու մը որ իր արարքներուն տէրն ու տիրականն է, որ ինքզինք կը կազմաւորէ իր մշակութային արտադրանքներուն ընդմէջէն: Ըսի վերը որ Սայիդեան արեւելապաշտութեան այս մեկնարանութիւնը (որ Սայիդին իսկ մեկնարանութիւնն էր) այսօր ամերիկեան համալսարաններուն մէջ ամենէն տարածուածն է, նոյնքան հումանիստական գիտութիւններու բաժանմունքներէն ներս - որոնք այդտեղ կը գտնեն իրենց գոյութիւնը արդարացնող եւ յաւերժացնող փիլիսոփայութիւն մը - որքան արեւելագիտական բաժանմունքներէն ներս, որոնք (կրնամ վստահեցնել ձեզ) բացարձակապէս չցնցուեցան Սայիդեան քննադատութենէն, ու խաղաղ սիրտով կը շարունակեն իրենց բանասիրական աշխատանքը, յաղթահարելէ ետք ուրսունական բուլականներու իրենց տագնապը: Բայց նոյն մեկնարանութիւնն է նաեւ, որ կը տիրութեած ըստած մարդէն ներս, որ թերեւս յետ-օպուլետատիրական է, բայց ասով չի դադրիր ըլլալէ բանասիրական եւ ուրեմն մարդկայնապաշտ: Եւ քանի որ «հիմնկալութիւն» [hospitality] կը յանձնարարուէր ու կը գովաբանուէր Եղուարդ Սայիդին կողմէ, ամերիկեան համալսարանը պիտի շարունակէ հանգիստ սրտով, ամենայն անմեղութեամբ, հիւրընկալել երրորդ Աշխարհի մշակոյթները, եւ մոռնալով (կամ չմոռնալով երբեք) որ հospitality բարին մէջ hospitalը կայ, այսինքն՝ հիւանդանոցը, մնալ ինչ որ էր՝ բաղաքակրութեան բժշկապետները քով քովի բերորդ երրորդ Աշխարհի հիւանդանոցը:

Քանի որ մէկողի՝ մենք պիտի համարձակինք այդ փիլիսոփայութեան հակադրել երեք դրոյքներ.

1) Յումանիզմը երկու չէ: Կայ միայն մէկ մարդկայնապաշտութիւն, որ բանասիրական հումանիզմն է: Չկայ մէկ կողմը արեւելապաշտ բանասիրութիւն մը, Ռընանի կամ Սաքս Միւլլըրի անուններով յատկանշուած (տարօրինակ կերպով՝ վերջինիս անունը գրեթէ չի յիշուիր *Orientalism* գիրքին մէջ), եւ միևս կողմը՝ ոչ-արեւելապաշտ բանասիրութիւն մը, Աւրոպախինը, որ ըլլար աշխարհի մշակոյթներու բազմազանութեան բաց, ընդգրկող, հիւրընկալ, հիւրասէր, հաւասարապաշտ, աշխարհաքաղաքացիական վեհանձնութեամբ օժուած, ազգային սահմանափակումներէն անդին մտածող, Weltliteraturի բանասիրութիւնը: Կը յիշեցնեմ վերջին անգամ մը ինչ որ կ'ըսուէր 2003ի Յառաջարանին մէջ. «Ուրիշ ժամանակի մը եւ տարբեր մշակոյթի մը հանդէպ հեռաւորութեան կամ թշնամութեան զգացումներուն անյարիր ըլլալով, Weltliteraturին կիրարկուած բանասիրութիւնը կ'ենթադրուէր խոր կերպով հումանիստական ոգի մը, որ կը տարածուէր սրտբացութեամբ եւ ... հիւրընկալութեամբ»: Ոչ եւ ոչ: Նոյն բանասիրութիւնն է հոս եւ հոն: Ոչ մէկ փախուստի ճամբար: Եւ կարծեմ սկսայ բացատրել վերը, թէ ինչո՞ւ չկայ փախուստի ճամբար, երբ ըսի որ «մարդ»ուն գիտութիւնը, այդ բացարձակ գիտութիւնը որ բանասիրութիւն կը կոչուի, էապէս մաս կը կազմէ արեւմտեան մարդու մշակոյթին, հաստատութիւններուն, ինքնածրագրաւորումին: Եւ այս իրողութիւնը ո՞վ բացայատ դարձուցած է աւելի փայլուն ու համապարփակ կերպով քան թէ նոյն ինքն՝ Եղուարդ Սայիդը: Ո՞ր գիրքը ցոյց տուած է, ամե-



նայն ճկունութեամբ, մանրանասնութեամբ, պահանջուած խստութեամբ, եթէ ոչ *Orientalism*ը: Ասկէ կը բխի, հիմա՞ կը հասկնանք, Եդուարդ Սայիդը ինքն իր դէմ կարդալու, եւ *Orientalism* գիրքը իր հեղինակին դէմ փրկելու անհրաժեշտութիւնը:

2) Զկայ ու չի կրնար ըլլալ գաղութատիրութեան հումանիստական քննադատութիւն մը: Ինքն իր մէջ հակասութիւն մըն է այդպիսի բան նը: Յակասութիւն մըն է, որովհետեւ գաղութատիրութիւնը հումանիզմի բնական շարունակութիւնն է, ի բնէ եւ ի ծնէ արտադրանքը: Ոչ թէ ծաղրանկարային հումանիզմի մը շարունակութիւնն ու արտադրանքը, ոչ թէ էապաշտ եւ ամբողջատիրական հումանիզմի մէկ ընձիւղը, այլ՝ Սայիդին իսկ նկարագրած եւ փափաքած հումանիզմին հետեւանքը, ինքնակերտ մարդուն, պատմական մարդուն, մշակոյթի մարդուն, ինքն իր գործը ու ինքն իր արտադրանքը հանդիսացող մարդուն հումանիզմին բխումը: Մէկ խօսքով՝ գաղութատիրութիւնը ինքնին հումանիզմ է, լիովին եւ բոլոր հմաստներով՝ հումանիստական է:

3) *Orientalism* գիրքը չէ եւ չի կրնար ըլլալ «օրինտալիզմ» երեւոյթին հումանիստական քննադատութիւն մը: Եթէ քննադատութիւն է, կրնայ ըլլալ միմիայն հակա-հումանիստական քննադատութիւն, Միշել Ֆուկոյի «հինախօսական» եւ «սերնդաբանական» իմաստով: Անշուշտ այս ըսկելով գացած կ'ըլլանք Սայիդի մեկնաբանութեան դէմ: Բայց *Orientalism* գիրքը արեւելապաշտութեան քննադատութիւնը չէ միայն իր միահեծան, կայսերապաշտ, գաղութատիրական, քաղաքական ծեւին տակ: Արեւելապաշտութեան քննադատութիւնն է որպէս հաստատութիւն եւ տրամասութիւն՝ դիսկուրս: Այդ առունով եւ այդ առունով միայն բանասիրութեան ծագումաբանական քննադատութիւն մըն է: Եթէ հակասութիւն մը կայ ուրեմն գիրքին մէջ, այդ հակասութիւնը չի գտնուիր նոյնիսկ հոյն ուր ճեյս Կլիֆըրդ կ'ուզէր տեսնել զայն, ծրագիրի եւ իրագործումի միջեւ հակադրութեան, անյարիրութեան մէջ, կամ հեղինակի մը կողմէ իր իսկ սկզբունքներուն նկատմանը հետեւողական չըլլալուն մէջ: Յակասութիւնը շատ աւելի խորունկ եւ շատ աւելի հետաքրքրական է: Յակասութիւն մըն է որուն մասին Եդուարդ Սայիդ կոչուած անձը ոչ մէկ բացատրութիւն կրնար տալ: Մէկ կողմէ՝ *Orientalism* գիրքը օրինտալիզմի երեւոյթին, ուրեմն բանասիրութեան, ծագումաբանական քննադատութիւնն է, այն՝ Բայց միևս կողմէ՝ երկու դար հնութիւն ունեցող բանասիրական ծրագիրին իրագործումին է նաեւ: Այդ ծրագիրը կը պատկանի ճանաչումի արդիական կերպաւորումին, որ ծնունդ տուած է, պիտի ըստ Միշել Ֆուկոյ, հումանիզմ՝ մարդկայնականութեան մարդուն: Ահաւասիկ ուրեմն գիրք մը որ միաժամանակ քննադատութիւնն է եւ կատարելագործումը նոյն առարկային եւ նոյն ենթակային՝ բանասիրութեան: Այդ է, որ զայն կը դարձնէ հանճարեղ գիրք մը, իր հեղինակէն անկախ: Անբողջ դժուարութիւնը կը կայանայ հասկնալուն մէջ, թէ ինչպէս նոյն գիրքը կրնայ ըլլալ (եւ անհրաժեշտ է որ ըլլար) այդ երկուքը (բանասիրութեան քննադատութիւն եւ բանասիրութեան կատարելագործում) միեւնոյն պահուն, միեւնոյն գործողութեամբ: Մէկ կողմէ՝ բանասիրութեան Ֆուկոյական, ուրեմն հակա-հումանիստական քննադատութիւն մը: Միևս կողմէ՝ հումանիստ բանասիրութեան գագարնակէտը: Այս հարցումին գոհացուցիչ պատասխան մը բերելու համար, դեռ շատ աշխատանք կայ կատարելիք:

Դիմա այս երեք դրոյթները պիտի ամփոփեն: 1) Յումանիզմը մէկ է, ոչ թէ երկու, եւ նոյն է պարագան բանասիրութեան: 2) Զկայ եւ չի կրնար ըլլալ գաղութատիրութեան մարդկայնապաշտ քննադատութիւն մը, որովհետեւ գաղութատիրութիւնը արդի եւրոպական հումանիզմի կողմէ ներշնչուած, անկէ ուզուած, անկէ սպառազինուած քաղաքական թեւն է: 3) Բանասիրութիւնը կորիզն է *Orientalism* գիրքին գործառնութեան: Այն է որ կառուցագերծումի կ'ենթարկուի, բայց այն է նաեւ որ կ'իրագործուի, կը կատարելագործուի այդ գիրքին մէջ: Այս երեք կետերը կը կարօտին ապացուցումի, աւելի խոր, աւելի լայնախոհ, աւելի համբերատար ապացուցումի մը քան թէ հոս հրամցուցածն: Եւ իրականութեան մէջ՝ պէտք է կարենայինք մէկ շարժումով, մէկ փաստարկով, երեքը մէկ ապացուցել:

2.3. Նախորդ պարբերութեան մէջ՝ «Գաղութատիրութիւնը ինքնին հումանիզմ է» ըսի ու անցայ: Այդ նախադասութիւնը, այդ առաջադրութիւնը կը կրկնէ ու կը յարասէ իմ փիլիսոփայական ուսուցիչներս մէկուն՝ Ֆիլիփ Լակու-Լաբարդի գրածը, իր 1987ի *La Fiction du politique* հատորին մէջ, ուր կ'ստը շատ աւելի ցնցիչ կերպով՝ «Le nazisme est un

2008



20

humanisme» այսինքն՝ «Նացիզմը ինքնին հումանիզմ է»³⁴, որ իր կարգին կը կրկնէր ու կը յարաւէր ժամ-Պոլ Սարտրի հօչակաւոր «L'existentialisme est un humanisme» [Գոյութենապաշտութիւնը ինքնին հումանիզմ է] համրածանօթ բանաձեռը (որ 1947ին լոյս տեսած գիրքի մը վերնագիրն էր): Լակու-Լաբարթին նախադասութիւնը այնքան անհասկացողութիւն յառաջացուց Աներիկայի մէջ մասնաւորաբար, հումանիզմի ջատագովներուն մօտ անշուշտ, բայց նաև Յայդեգըրի մասնագէտներուն մօտ, որոնք պէտք է քիչ մը աւելի շրջահայեցութիւն ցոյց տային ու յիշէին *Brief über den Humanismus*ի վերլուծումները: Եւ ինչո՞ւ նացիզմը ինքնին հումանիզմ մըն է, պիտի հարցուի: ճիշդ նոյն պատճառներով, ինչ պատճառներով գաղութատիրութիւնը ինքնին հումանիզմ մըն է: Որովհետեւ նացիզմը իր գագարնակէտին, իր կատարեալ իրագործումին հասցուցած է մարդուն արդիական ենթիւնը որպէս ինքնարտադրութիւն, որպէս ինքնակերտումին գործօն եւ ինքնակերտումի արդիւնք: Մարդը ինքնակերտ էակն է: Ինքն իր ձեռքով ինքզինը կերտող էակն է: Գիշապոյտյ յառաջացնող կարգախօսք մըն է այս մէկը, գիտեն, եւ սակայն Վիկոյէն ի վեր՝ այդ ձեւով է որ կը սահմանուի մարդուն մարդկայնութիւնը: Ասկէ մէկ քայլ անդին անցնելով՝ մարդուն մարդկայնութիւնը գեղագիտական է ըստ էութեան: Այս վերջին քայլը անշուշտ բացատրութեան կը կարօւի: Ներկայ համաժրին մէջ բացատրութիւնը պիտի ըլլայ պարտադրաբար արագ եւ կարճառօտ: Լակու-Լաբարթ բառախաղով մը կը սիրեր արտայայտել այդ գաղափարը, ինչպէս կը սիրեն ընել յաճախ փիլիսոփաները. կը խօսէր նացինալ-էսթետիզմի նասին յատկանշելու համար նացինալ-սոցիալիզմը: 2002ի Քերթուածի քաղաքականութիւնը գիրքին մէջ, այդ տպաւորութիւնը կը ձգէ որ բանաձեւումը կը կարօւի մեղմացումի³⁵: Բայց 1987ին ամէն ինչ բացայաց ու յստակ էր: Ահաւասիկ նախադասութիւնը ուր առաջին անգամ ըլլալով կ'երեւի մարդուն մարդկայնութիւնը որպէս «գեղագիտական» կամ «գեղարուեստական» յատկանշող բանաձեռը, նախ ֆրանսերնով, յետոյ միայն հայերենով.

La communauté à l'oeuvre et au travail (national-socialisme comme national-esthétisme) s'oeuvre, si l'on peut dire, et se travaille elle-même, accomplissant de la sorte le procès subjectif par excellence, c'est-à-dire le procès de l'auto-formation et de l'auto-production³⁶.

Գործող եւ աշխատող համայնութիւնը (նացինալ-սոցիալիզմը որպէս նացինալ-էսթետիզմ) կը «գործէ» ինքզինը, եթէ կարելի է այդպէս ըսել, կ'աշխատի ինքն իր վրայ, այդ ձեւով ի կատար ածելով ենթակայական [սուլյեկտիվ] գերագոյն շարժմանը, այսինքն ինքնակերտումի եւ ինքնարտադրեան պրոցեսը:

Երբ կ'ըսէ «la communauté à l'oeuvre et au travail», քով քովի կը դնէ ֆրանսերեն օսւր բային երկու իմաստները, «աշխատիվ» եւ «գեղարուեստական գործ մը արտադրել»: Ինչ որ կը բնորոշուի այդտեղ նացիներու ներյայտ ու երբեմն ալ բացայաց աշխարհահայեցքին մէջ՝ համայնքի, համայնութեան, ազգի, ժողովուրդի, Volkի, Gemeinschaftի ընթանումն է: Եւ եթէ պատահի որ ընթերցողը լաւ չհասկնայ հոս ըսուածը, ահաւասիկ տարբեր ձեւ մը նոյն բանը ըսելու, աւելի պատկերազարդ: Վիկոյէն երկու հարիւր տարի ետքը, ահա ինչ կը գործ Գեօրգըս, նացի պարագլուխը, նացիական քարոզչական մեթնային պատասխանատուն, 1933ին երգահան ու երաժշտագէտ Ֆուրտվէնգլըրին ուղղուած նամակի մը մէջ.

Քաղաքականութիւնն ալ արուեստ մըն է, մինչեւ իսկ բոլոր արուեստներուն մէջ՝ ամեն վեհը, ամենէն ընդարձակը, եւ մենք՝ գերմանական քաղաքականութիւնը կերտողներս, մենք զմեզ կը զգանք որպէս արուեստագէտներ, որոնց վերապահուած է իրեն բարձրագոյն պարտականութիւն, հում զանգուածն մեկնելով՝ կերպաւորել, կերպարնք տալ ժողովուրդի լման ու տոկուն պատկերին³⁷:

Եթէ ուրեմն ճիշդ է, որ հումանիզմի փիլիսոփայութեան համաձայն՝ մարդուն էութիւնը ինքնակերտ ըլլալն է, եթէ ճիշդ է հետեւաբար որ մարդուն մարդկայնութիւնը ըստ էութեան գեղագիտական է, եւ եթէ ճիշդ է վերջապէս որ այս մէկը արդիական ժամանակաշրջանի գերագոյն որոշադրումն է, գերագոյն յատկանշումը, այն ատեն՝ զարմանալի պիտի չքուի որ արուեստի գիտութեան (այսինքն՝ բանասիրութեան, որպէս գրականութեան գիտութիւն) վերապահուած ըլլար այդ էութիւնը անգամ մը եւս «հաւաքելու» պարտականութիւնը, երիք Ալբրապախի կամ Եդուարդ Սայիդի գործերով, որոնք ուրիշ բան չեն ըներ



Եթե ոչ մեզի պատմել կրկին ու կրկին Արեւմուտքի, արեւմտեան մարդու, բանասիրականգեղագիտական պատմութիւնը: Այդ է որ կ'ըսէ բառացի եւ տառացի կերպով Աւրոպախի 1952ի յօդուածը, որուն խօսքը եղաւ արդէն իսկ բազմաթիւ անգամներ սոյն էջերու երկայնքին: Բանասիրութեան պարտականութիւնն է վերջնականապէս ինքն իր մէջ հաւաքել մարդուն էութիւնը: Ի՞նչ ձեւով: Անոր արուեստին պատմութիւնը պատմելով, բայց նաեւ նոյն այդ արուեստի գիտութեան, այսինքն՝ բանասիրութեան պատմութիւնը պատմելով: Սայիդի *Orientalism* գիրքին թելադրանքով, բանասիրութիւնը չի պատմեր միայն արուեստը: Կը պատմէ ինքինք երբ կը պատմէ արուեստը: Այդ ընելով՝ ինքն իր մէջ կը հաւաքել մարդուն մարդկայնութեան գեղագիտական էութիւնը: Մարդը կերպաւորողն է եւ կերպաւորուածը, կերտողն ու կերտուածը, երկուքը նոյն շունչով, նոյն գործողութեամբ: Բանասիրութիւնը այդ գործողութեան գիտութիւնն է: Յո՞ն է, որ երկու երեսները՝ կերտողն ու կերտուածը երեւան կու զան իրենց միաւորմամբ եւ փոխադարձ պայմանաւորուածութեամբ: Ընթերցողը կը յիշէ, որ վերը «միանտութիւն» բառը գործածեցի, յատկանշելու համար արեւմտեան հումանիզմի կրկնութիւնը Սայիդեան մօտեցումով: Յնարաւոր է ընտրել ի հարկէ: Կամ չափազանց խորունկ բան նըն է հոս բացատրուածը, որ երկու դարէ ի վեր կը զբաղցնէ փիլիսոփաները, բանասէրները եւ արուեստագէտները: Կամ ալ անյատակ միամտութիւն նըն է: Մարդը ինքնակերտ էակն է: Ըստ այնմ իր հաւաքական էութիւնը գեղագիտական է:

Յիշեցնեմ միայն (կրկին՝ չափազանց արագ ու կարճառօտ ձեւով, մէկ պարբերութեամբ միայն, որպէս պատկերազարդում), որ 1914ին Պոլսոյ մէջ ծնունդ առած ու զարգացած *Մեհեանի* սերունդին (այսինքն՝ այն սերունդին, որուն մէջ հաւաքուած էին ի. դարու մեծագոյն հայ արուեստագէտները) խորագոյն համոզումը այն էր թէ կրնանք ըլլալ ինչ որ ենք, այսինքն՝ հաւաքել մեր հաւաքական էութիւնը, միմիայն արուեստագէտին միջամտութեամբ: Ցրուած, տարանջատուած, կոտորակուած, իր էութենէն դատարկուած հաւաքանութիւն նըն էինք, օտարացած մենք մեզի: Պէտք ունենք սեփականացնելու ինչ որ մե՛րն էր: Եւ այդ ընելու համար կը սպասէինք որո՞ւն: Անշուշտ՝ արուեստագէտին: Այս մարդիկը փիլիսոփաներ չէին, անկասկած: Իրենց համար՝ ազգայնացնելը, այսինքն՝ էութիւնը հաւաքելը, հաւասար էր գեղարուեստականացնելու: Իրենցը ուրեմն արդիական հումանիզմի ազգայնական տեսակն էր: Որ ազգայնական ըլլալով՝ չէր դադրեր հումանիզմի տեսակ մը ըլլալէ: Ինքնակերտ մարդուն գեղագիտական էութիւնը կը վերակոչէին: Կ'ուզէին գեղագիտացնել լեզուն, ազգը, համայնութիւնը: Յամայնացումը իրենց համար գեղագիտացում էր³⁸:

Նախորդ պարբերութիւնը փակագիծ նըն էր, ուրիշ ոչինչ: Կ'ուզէի ցոյց տալ, թէ ինչպէս ամբողջ սերունդ մը կրնար իր խորագոյն հրամայականները քաղել ժամանակի ոգիէն, արդի մարդու որոշադրումէն, հումանիզմն: Ո՞ւր հասած էինք: Կ'ուզէինք բացատրել, թէ ինչո՞ւ նացիզմը ինքնին հումանիզմ նըն էր: Բացատրութիւնը այն է, որ հիմնուած էր ան ամբողջութեամբ հումանիզմի ծնուցիչ սկզբունքին վրայ, եւ ուներ որպէս ծրագիր մարդուն հաւաքական գեղագիտացումը: Պէտք կա՞յ կրնելու Գէօրգլսին ըսածը. «... մենք զմեզ կը զգանք որպէս արուեստագէտներ, որոնց վերապահուած է իրեւ բարձրագոյն պարտականութիւն, հում զանգուածէն մեկնելով՝ կերպաւորել, կերպարանք տալ ժողովուրդի լման ու տոկուն պատկերին»: Ապշեցուցիչ յայտարարութիւն նըն է, պէտք է խոստովանիլ: Ցոյց կու տայ, ինչպէս միշտ, թէ ոճրագործները մեզմէ հասարակ մահկանացուներէս շատ աւելի խելացի կ'ըլլան: Եւ հիմա կը հասկցուի, թէ ինչո՞ւ նացիզմի մասին սկսանք խօսիլ: Նացիզմի ծրագիրն էր մարդուն էութիւնը հասցնել իր գեղագիտական իրագործումին, որպէս հաւաքական «գործ», այսինքն արտադրանք եւ արտադրութիւն, գործողութիւն եւ արդիւնք: Իրենց նպատակն էր մարդկութեան գեղագիտական կերպաւորումը, կերտումը: Իսկ ինչպէս կը կատարուի մարդկութեան գեղագիտական կերտումը: Անշուշտ՝ մաքրագործելով՝ ինչ որ գեղագիտական չէ: Բայց մաքրագործելը բացասական կողմն էր միայն գործողութեան: Նոյն գործողութեան դրական կողմը «նոր առասպելաբանութեան» մը կերտումն էր: Այդ է պատճառը, որ նացիզմի տեսաբանական հիմքը Ալֆրեդ Ռոզենբերգի գիրքն է՝ ի. դարու առասպելը³⁹. Քաղաքական գործունեութիւնը հասկցուած որպէս առասպելի միջոցաւ մարդուն մարդկայնութեան գեղագիտական կերպաւորումը, այդ է որ Լակու-Լաբարթ, մեր վախճանեալ ուսուցիչը, կը կոչէր ֆրանսերէն բառով՝ *fiction*: 1914ի Մարտին, *Մեհեանի* իր յօդուածին մէջ, Յակոր Օշական

2008



կը յայտարարէր հետեւեալը, որպէս իր սերունդին ներկայացուցիչը. «պէտք ունինք տիեզերական կեղծիքի մը...»: Կ'ուզէր ըսել անշուշտ՝ առասպելի մը, առասպելաբանութեան մը: Պէտք ունինք նոր առասպելաբանութեան մը, գեղագիտանալու համար, ազգայնանալու համար, համայնանալու համար: Գեղագիտացումով միայն կարելի է կերտել ազգ մը: Յումանիզմի հրամայականն էր: Եւ աւելի ապշեցուցիչը այն է, որ այլուեղի «տիեզերական կեղծիք» բառերու կողջին Օշական փակագիի մէջ դրած է ֆրանսերէն բառ մը, ինչ որ ենթադրել կու տայ որ ֆրանսերէն բառը իր մտքին մէջն էր, ու ասոր համազօր հայերէն արտայայտութիւն մը ստեղծած էր, ըստով «տիեզերական կեղծիք»: Իսկ ո՞րն է այդ ֆրանսերէն բառը: Թող զարմանալի չքուի: Անշուշտ fiction: Յասնելու համար մեր հաւքական էրտեան, հաւքելու մենք զնեզ, պէտք ունինք fictionի մը, հնարապատումի մը, նոր առասպելաբանութեան մը:

2.4. Յիմա վերջին մօտեցումով՝ ուրիշ ճամբայ մը պիտի կտրեմ, աւելի հասկնալի դարձնելու համար բանասիրութեան եւ գաղութատիրութեան միջեւ գոյացող էական կապակցութիւնը: 1784ին Վիլիամ Շոնս Կալկարայի մէջ կը հիմնէր Ասիական Ընկերակցութիւնը, որ պիտի ընդգրկէր այդ շրջանին Յնդկաստանի մէջ հաւաքուած բոլոր գիտուններն ու վարչականները: Ինքն է որ առաջին անգամ ըլլալով, այդ գիտական ընկերակցութեան առջեւ խօսուած իր հերթական ծառերէն մէկուն ընթացքին, պիտի արտայայտէր հնուերոպական լեզուներու գերդաստանի մը գաղափարը, մէկնելով սանսկրիտի եւ Եւրոպայի դասական լեզուներու միջեւ նորագիւտ նմանութենքն: Այդ գաղափարով հիմքը կը դնէր ժմ. դարու համեմատական լեզուաբանութեան, եւ խորքին մէջ՝ ամբողջ «արդի բանասիրութեան» (այդպէս կը կոչէ զայն Եդուարդ Սայիդ, մինչդեռ Միշել Ֆուկոյ պէտք իսկ չ'զգար «արդի» աւելցնելու, կը կոչէ զայն պարզապէս «բանասիրութիւն», այնքան բացայաց է իրեն համար որ ան բացարձակապէս արդիական է, որպէս մարդկայնապաշտութեան մարդուն բացարձակ գիտութիւնը): Վիլիամ Շոնս կոչուած այդ հիմնադիրը անշուշտ ինքն ալ բրիտանական կայսրութեան վարչական մարմնին մաս կը կազմէր: Յնդկաստան որկուած էր որպէս օրէնսգէտ, այսինքն՝ քաղաքացիական եւ քաղաքակիրը օրէնքին ներկայացուցիչը բնիկներուն դէմ յանդիման: Բայց այդ օրէնքը չէր կրնար բնիկները կառավարել ուղղակի ճանքով: Պէտք է կառավարուէին իրենց իսկ օրէնքով: Եւ ուրեմն պէտք է իրենք յայտնաբերէին իրենց սեփական օրէնսդրութիւնը: Կը տեսնէր թէ որքան հիւրնկալ, սրտքաց ու լայնամիտ է գաղութատիրական իշխանութիւնը: Որքան մէծ է գաղութատիրութեան հումանիզմը եւ մարդկայնութիւնը: Բանասէրներու այդ խմբակին պատականութիւնն էր ուրեմն բնիկներու օրէնսգիրքերը բարգմանել անգլերէնի եւ այդ բարգմանութեամբ իսկ՝ զանոնք վերածել օրէնսդրութեան եւ օրէնսգիտութեամ⁴⁰: Այդտեղ է որ կը սկսի արդի գաղութարարութիւնը: Կը սկսի բանասիրութեամբ: Գաղութատիրուածը այլեւս հում մարմնին մը չէ, որ պիտի գործածուէր պարզ գործիքի մը նման, ինչպէս կ'ընթէին Սպանացիները ատկէ տակաւին դար մը առաջ Յարաւային Աներիկայի իրենց գաղութներուն մէջ: «Սեփական օրէնսդրութեան» եւ այդպիսի օրէնսդրութեան մը միջոցաւ կառավարելու հնարաւորութեան գաղափարը հասունցած էր լման ժմ. դարու ընթացքին հասնելու համար այդ հանճարեղ գիւտին, գերազանցապէս արդիական գիւտին, որ է բնիկին գիւտը: Գիտենք արդէն իսկ, թէ ո՞վ է բնիկը: Այն արարածն է, որ անկարող է ինք-զինք ներկայացելու, բարին կրկնակի կամ բազմակի հմաստերով: Ուրեմն ապրող էակը չէ, այր կամ կին: Կերպար մըն է: Որպէս կերպար՝ բանասէրն կրկներեսն ու հակերեսն է: Այդ առումով՝ բնիկը չունի ո՞չ մէկ գիտակից յիշողութիւն ինքն իր մասին, իր անցեալին, իր «սեփական» մշակոյթին մասին: Ենթադրաբար ուրեմն՝ աղէտի մը արդիւնքն է, սեփական յիշողութեան հասած աղէտի մը արդիւնքը: Պէտք ունի բանասէրն յիշելու համար ինք-զինք որպէս պատմական էակ: Բանասէրը հետեւաբար բնիկին կը յիշեցնէ իր անցեալը: Բայց միայն այդ չ'ըներ: Կը յիշեցնէ նաեւ որ բնիկը ունի անցեալ մը, որ ինքն ալ պատմական էակ մըն է: Առանց բանասէրին, բնիկը ուրկէ՝ պիտի գիտնար որ ունի ո՞չ միայն պատմութիւն մը իր ետին, այլեւ պատմականութիւն մը արձանագրուած ինքն իր մէջ: Բանասէրը կը յայտնաբերէ ու կ'արթնցնէ բնիկին պատմականութիւնը: Այդպէս է որ առաջին անգամ ըլլալով՝ կը գործադրէ ինքնակերտ մարդուն մարդկայնութիւնը, հումանիզմը: Բայց բնիկը նաեւ, եւ միաժամանակ, այն մէկն է որ չունի իր մէջ օրէնսդրական աւանդոյթին գիտութիւնը: Փառք Աստուծոյ, գաղութատիրը իր կորքին է, պիտի կարենայ բնիկին աւանդութիւնը գիտութիւն դարձնել, ու մինչեւ իսկ զայն անգլերէնի կամ ֆրանսերէնի բարգմանել, որպէսզի օգտուի բնիկը (եւ ինչո՞ւ չէ՝ նաեւ բանասէրը) այդ բարգմանութիւններէն:



Այսպէս է որ բանասիրութիւնը, ինքնակերտ մարդուն գիտութիւնը, ձեռք ձեռքի կը գործէ գաղութատիրոց հետ: Կամ աւելի ճիշդ՝ ոչ մէկ տարրերութիւն կայ մէկուն եւ միւսին միշեւ: Վիլիամ Շնոնս երկուքն էր միաժամանակ. առաջին բանասէրը եւ առաջին գաղութարարը:

Ի՞նչ ուժով դաս՝ տիրելու, կառավարելու արուեստին վերաբերեալ, բայց նաեւ՝ բնիկի գաղափարը եւ բնիկի իրականութիւնը արտադրելու արուեստի մարզէն ներս, բանասիրութեան կողմէ եւ գաղութատիրական իշխանութեան կողմէ, բան մը զոր Անգլիացիները հնարած են Ժ. դարու վերջաւորութեան դանդաղ հասունացումով մը (կամ ընդհակառակը՝ մէկ անգամէն 1784ին), եւ յետոյ ընդարձակուած է գաղութատիրական ամբողջ աշխարհին, մասնաւորաբար Ավրիկէի մէջ Ժ. դարուն: Քաղաքացիական օրէնսդրութիւնը կը հակադրուէր աւանդական օրէնսդրութեան, որ բնիկին յատուկ էր, եւ միայն իրեն⁴¹: Բնիկին յատուկ օրէնսդրութիւնը կրնար բանիլ որպէս օրէնք ու ներկայացուցչական (ինչպէս կառավարման) համակարգ միմիայն որովհետեւ կար նախօրօք բանասիրութեան կողմէ հաստատուած թարգմանական եւ ճանաչողական յարաբերութիւնը անոր նկատմամբ: Գաղութատիրական կառավարութիւնը կը գործէր բնիկի բանասիրութեան ընդմէջն: Այդ ծեւով է որ կը գործադրուէր ինքնակերտ մարդուն մարդկայնութիւնը՝ հումանիզմը: Գաղութատիրութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ հումանիզմը իր բանասիրական հանգամանքով: Այդ գաղութատիրութիւնը (արդիականը, ոչ թէ Սպանացիներունը) չ'աշխատիր ուղղակի մարմիններուն վրայ: Կը գործէ շատ աւելի նուրբ ու անգայտ նիւթեղէնով մը, կը գործէ որպէս կերտող իր կերտածին վրայ, որ է բնիկը: Եւ հոս ալ, բնական է, չկան երկու տեսակի բնիկներ: Այն բնիկը որուն այցելութեան կ'երթային եւրոպացի արեւելապաշտ մեծ ճանքորդները՝ Շատորբիանէն եւ Լորդ Պայրընէն մինչեւ Լամարտին եւ Ֆլորեր, տեսնելու համար թէ ովք էր այդ անասունը որ անկարող էր ինքզինք ներկայացնելու եւ պատկերացնելու, նոյն բնիկն է զոր Ֆրանսացիներն ու Անգլիացիները կը պահէին աւանդական օրէնսդրութեան արգելարանին մէջ բանտարկուած, իրենց ափրիկեան գաղութներէն ներս:

2008


4



24

Թ ա ն օ թ ա գ ր ո ւ թ ի լ Ա ն ե ր

- 1 *Power, Politics, and Culture. Interviews with Edward Said* [Տիրութիւն, քաղաքականութիւն եւ մշակոյք: Յարցազոյոյնըներ Եղուարդ Սայիդի հետ]: Խմբագիր եւ յառաջարանի հեղինակ՝ Gauri Viswanathan, Vintage Books, Նիւ Ենրկ, 2001: Գարդի Վիսուանաքան Կոլումբիա համալսարանի անգլերէնի բաժանունքին մեջ դասառու է, եւ Եղուարդ Սայիդի ամենն փայլուն աշակերտներն մեզը: Յեղինակն է *Masks of Conquest: Literary Study and British Rule in India* [Յափշտակութեան դիմակներ: Գրական ուսմունք եւ բրիտանական տիրակալութիւն Հնդկաստանի մեջ] անուն գիրքին, Columbia Univ. Press, Նիւ Ենրկ, 1989: Յարցազոյոյն հայերն մասնակի թագամանութիւնը տես հնդնագիրի սյն համարին մեջ:
- 2 *Beginnings, Intention and Method* [Ակզբանաւորութիւններ: Դիտաւորութիւն եւ մեթոդ], Basic Books, Նիւ Ենրկ, 1975: 1997ին վերատպուած Granta Books հրատարակչատունէն, Լոնդոն:
- 3 *Erich Auerbach: Mimesis: The Representation of Reality in Western literature* [Միմեսիս. Իրականութեան պատկերացումը արեւութեան գրականութեան մեջ], գերմաներէն թարգմանուած Willard Traskի կողմէ, նոր յառաջարանով մը Եղուարդ Սայիդի գրիշէն, Princeton University Press, 2003. Ալրպախ ուղղագործիւնը հնարջ մըն է իմ կողմէս: Յիները «աւ» գերմաներէնի «աս» պէս կը հնչէին:
- 4 Ըստը Քրիստոֆ Պրածո անունով գրականագէտ մըն է: Տես Christophe Pradeau, Tiphaine Samoyaut, Où est la littérature mondiale? Saint-Denis, 2005, էջ 15 եւ 22: Ալրպախի յօդուածը լոյս տեսած է նախ *Weltliteratur: Festgabe für Fritz Strich zum 70. Geburtstag* հատորին մեջ, խմբագրուած Walter Muschgesի եւ Emil Staigerի կողմէ, Franke հրատարակչատունէն (Բերն, 1952). Նոյն հրատարակիչը զայն վերատպած էր 1967ին, տես E. Auerbach, *Gesammelte Aufsätze zur romanischen Philologie*: Անգլերէն թարգմանութիւնը երեւցաւ *The Centennial Review* մեջ, թիւ 13 (1969), էջ 1-17.
- 5 Herbert Lindenberger հաշիւը կատարած է Ալրպախի 1952ի յօդուածին զացող յուրմներուն Սայիդի լման գործին մեջ, *Beginnings* (էջ 36, 68-69, 72-73, 76, 324), *Orientalism* (էջ 259-260), *The World, the Text, and the Critic* (էջ 7-8, 16), *Culture and Imperialism* (էջ 45, 317-318, 335-336). Տես, «On the Reception of Mimesis» [Միմեսիսի ընկալումին մասին] յօդուածը *Literary History and the Challenge of Philology. The Legacy of Erich Auerbach* [Գրականութեան պատմութիւն եւ բանասիրութեան գրաւականը]. Էրիք Ալրպախի ժառանգութիւնը] հատորին մեջ, Seth Lererի դեկավորութեամբ, Stanford Univ. Press, 1996: Տես յօդուածը էջ 195-213 եւ ծանօթութիւնը էջ 294:
- 6 *Orientalism*, էջ 258: Այս հարցին եւ այս տողերուն պիտի վերադառնամ հոս աւելի անդին, թիւ 2.4 պարբերութեան մեջ: *Orientalism* գիրքէն մէջբերումներս կը յուրին 2003ի հրատարակութեան (Vintage Books, Նիւ Ենրկ):
- 7 *Orientalism*, էջ 259:
- 8 Անդ:
- 9 *Power, Politics, and Culture*, էջ 29: Թարգմանութիւնը տես ներկայ համարին մեջ, բնագիրի էջերու համարակալութեամբ:
- 10 *Power, Politics, and Culture*, էջ 36-37:
- 11 James Clifford, «On Orientalism», նախ յօդուածի ձեւով լոյս տեսած, հիմա տրամադրելի *The Predicament of Culture. Twentieth Century Ethnography, Literature, and Art* [Մշակոյքի վիճակը: հ. դարու ազգագործութիւն, գրականութիւն եւ արուեստ], Harvard Univ. Press, 1988, էջ 255-276: Ajaz Ahmad, «Orientalism and After: Ambivalence and Metropolitan Location in the Work of Edward Said» [Արեւելապատութիւն եւ անկէ անդին: Երկիրհնութիւն եւ մայրաքաղաքային տեղադրում Եղուարդ Սայիդի գործին մեջ], տրամադրելի *In Theory: Classes, Nations, Literatures* [Տեսականութիւն: Դասակարգեր, ազգեր, գրականութիւններ] գիրքին մեջ, Verso, Լոնդոն, 1992, էջ 159-220.
- 12 Տես Joseph Conrad and the Fiction of Autobiography [ճողեք Կոնրադ եւ հնդնակենսագրութեան առասպելը], Columbia University Press, 1966:
- 13 *The Question of Palestine* [Պաղեստինի հարցը], Vintage Books, Նիւ Ենրկ, 1980: *Covering Islam: How the media and the experts determine how we see the rest of the world* [Իսլամի մասին զեկուցելով: Ինչպէս լրատուական համակարգը եւ մասնագէտները կ'որոշեն թէ ինչպէս պիտի դիտենք արտաշխարհը], Pantheon Books, Նիւ Ենրկ, 1981.
- 14 *Culture and Imperialism* [Մշակոյք եւ կայսերապաշտութիւն], Vintage Books, Նիւ Ենրկ, 1994: *The World, the Text, and the Critic* [Աշխարհը, գրուածը եւ քննադատը], Harvard Univ. Press, 1983: Վերջինս Ամերիկայի համեմատական գրականութեան Ընկերակցութեան Ռընէ Վելլեկ մոցանակը ստացած է: *Humanism and Democratic Criticism* [Յումանիզմ եւ ժողովրդավարական քննադատութիւն], Columbia Univ. Press, 2003: Յու՝ Երրորդ գլուխը կը կոչուի «Վերադարձ բանասիրութեան»:



- 15 Այս մասին տես Պոլ Բովէի գիրքը, որուն նպատակն էր Սայիդի բանասիրական եւ հումանիստական մտածողութեան պատմական ծագումն ու յետնամասերը բացայայտել, ի հարկէ որպէս Սայիդի բացարձակ ջատագով. *Paul Bové, Intellectuals in Power: A Genealogy of Critical Humanism* [Մտաւորականներու տիրութիւնը. Քննական մարդկայնապաշտութեան ծագումաբանութիւն մը], Columbia Univ. Press, New York, 1986: Յու ընթերցողը պիտի գտնէ լուսաբանիչ էջեր Երիք Ալըրպախի եւ Եղուարդ Սայիդի բանասիրական ծրագիրներուն միջեւ բացայայտ շարունակականութեան մասին: Իսկ Սայիդի «աշխարհիկ» դիրքորոշումներուն մասին, տես նոյնքան ջատագովական յօդուածները՝ Aamir Mufti, «Auerbach in Istanbul: Edward Said, Secular Criticism, and the Question of a Minority Culture» [Ալըրպախ Պոլսոյ մէջ: Եղուարդ Սայիդ, աշխարհիկ քննադատութիւն եւ փորամասնական մշակոյթի հարցը], *Critical Inquiry*, հասոր 25, թի 1 (աշուն 1998), էջ 95-125, եւ Bruce Robbins, «Secularism, Elitism, and Other Transgressions: On Edward Said's "Voyage in"» [Աշխարհիկութիւն, ընտրապաշտութիւն եւ այլ զանցումներ: Եղուարդ Սայիդի «Voyage in»ի մասին], *Social Text*, թի 40 (աշուն 1994), էջ 25-37: Այս հոսանքին անդրադառնող, զայն քննարկող ու քննադատող աշխատանք մը ունի Կիլ Ամիճար, իր «Secularism» փորձագրութեամբ: Տես Gil Anidjar, *Semites: Race, Religion, and Literature*, Stanford Univ. Press, Stanford, 2007:
- 16 *Orientalism*, էջ 1: Ընդգծողը ես եմ: Ընդգծուած նախադասութիւնը անգլերէնով հետեւեալն է. «The main thing for the European visitor was a European representation of the Orient and its contemporary fate»: «Հնարանք» բառով կը փորձեմ թարգմանել անգլերէն (ու ֆրանսերէն) invention բառը:
- 17 «...a style of thought based upon an ontological and epistemological distinction between “the Orient” and (most of the time) “the Occident”: Տես *Orientalism*, էջ 2:
- 18 Անդ, էջ 3:
- 19 Անդ, էջ 12:
- 20 Thomas Trautmann, *Aryans and British India*, University of California Press, 1982:
- 21 «Said's critique of Orientalist procedures for enclosing and characterizing “the Orient” may be applied to the presumably more precise and even 'natural' entity of culture...» [«Արևելք»ը պարփակելու եւ յատկանշելու նպատակով մտածուած արեւելապաշտ գործողութիւններու Սայիդեան քննադատութիւնը կրնայ կիրարկուիլ այն ենթադրաբար աւելի ճշգրիտ եւ նոյնիսկ «քննական» առարկային որ է մշակոյթ կոչուածը] (*The Predicament of Culture*, էջ 273), բայց «But however the culture concept is transcended, it should, I think, be replaced by some set of relations that preserves the concept's differential and relativist functions...» [Բայց ինչ ձեւով որ մշակոյթի յղացքն անդին անցնինք, իմ կարծիքովս զայն պետք է փոխարինել յարաբերութիւններու ցանցով մը որ ինքն իր մէջ կը պահէ յղացքին տարբերակերտ եւ յարաբերապաշտ գործառոյթները] (անդ, էջ 274):
- 22 David Kopf, «Hermeneutics versus History,» *Journal of Asian Studies*, 39, 3, 1980, էջ 495-506, վերատպուած *Orientalism. A Reader* (ed. Alexander Lyon Macfie, NYU Press, 2000) հասորին մէջ, ուր ներկա մէջբերումը կը գտնուի էջ 202:
- 23 Անդ, էջ 200:
- 24 Այս մասին ընթերցողը կը յդեմ օրինակ Լեւոն Զեքիեանի անգլերէն հասորին՝ Boghos Levon Zekian, *The Armenian Way to Modernity. Armenian Identity Between Tradition and Innovation, Specificity and Universality*. Università degli Studi Ca' Foscari di Venezia, Supernova, 1997:
- 25 Այս երկրորդ բաժնին մէջ՝ պիտի հետեւիմ (որոշ յապատճեններով եւ յաւելումներով) նոր լոյս տեսած ֆրանսերէն ուսումնասիրութեանս, «Retour de l'humanisme. Humanisme, colonialisme et philologie chez Edward Said» [Հումանիզմի վերադարձը: Յումանիզմ, գաղութասիրութիւն եւ բանասիրութիւն Եղուարդ Սայիդի մօս], Retours du colonial? [Գաղութասիրականի դա՞թը] հասորին մէջ, Կարթին Քոքիոյի խմբագրութեամբ, Nantes, 2008:
- 26 Edward Said, *Orientalism*, էջ xxii-xxiii.
- 27 *Orientalism*, էջ xxix:
- 28 *Orientalism*, էջ 15:
- 29 Անդ: «Ուզուած մարդկային գործ»ին կը հակադրուի «unconditioned ratiocination»ը [Դատարկ բացադարձը]: Սայիդ հու շեշտը կը դնէ արեւելապաշտութեան պատմական խարսխումնին վրայ: Ն'ուզէ զսել, որ արեւելապաշտութիւնը ո՛չ արկած մըն էր պատմութեան մէջ, ո՛չ ալ մտաւորականներու քնահաճոյը: Նախադասութիւնը կը շարունակուի այսպէս. «...իր բոլոր մանրամասնութիւններով, իր ամբողջ արժեքով, առանց անտեսելու նաեւ սերտ կապակցութիւնը մշակութային աշխատանքին, քաղաքական հոսանքներուն, պետութեան եւ վերջապէս՝ տիրութեան տեսակարար իրողութիւններուն միջեւ»:
- 30 Սայիդի տեսապէս մշակուած հետաքրքրութիւնը ճանբաժիշտա Վիկոյին նկատմամբ գաղտնիք

2008




մը չէ: Իր առաջին կարեւոր յօդուածներէն մէկը Վիկոյին նուիրուած էր՝ «Vico: Humanist and Autodidact» [Վիկո, հումանիստ եւ ինքնուս], *The Centennial Review*, 11, 3 (1967): *Beginnings* գիրքը, Ալբրապահին ընդմէջն, ամբողջութեամբ զետեղուած Վիկոյի բացայաստ հովանաւորութեան տակ: Ան է որ հեղինակին կ'ընձեռէր մեթոդաբանական յումը, երբ ցոյց տալ պէտք էր մարդկային գործին աշխարհիկ «սկզբնաւորութիւն»ը, գիտնալով որ բանասիրութեան համադրական ծրագիրը այդ մարդկային գործին հաւասարիլն է: Սայդի վերջին անգամ մը վերադարձած է Վիկոյին, գրելով Ալբրապահի *Mimesis*ին յառաջարանը, վերատպուած *Humanism and Democratic Criticism* գիրքին մէջ: Եթէ ընթերցողը կ'ուզէ բան մը սորվի Վիկոյի գործածութեան մասին *Beginnings*ի մէջ, զինք կը յդեմ Շեյլը Վայսի յօդուածին՝ Hayden White, «Criticism as Cultural Politics» [Քննադասութիւնը որպէս մշակութային քաղաքականութիւն], *Diacritics*, 6, 3 (աշուն 1976), էջ 1-3: Տես նաև Սայդի պաշտպանութիւնը (մասնաւորապէս Շեյլը Վայսին դէմ) Տիմ Բրեննան, «Places of Mind, Occupied Lands: Edward Said and Philology» [Մտքի վայրեր, գրաւեալ հողեր. Երուարդ Սայդի եւ բանասիրութիւնը], *Edward Said, A Critical Reader*, Michael Sprinkerի խմբագրութեամբ, Blackwell, Oxford, UK, եւ Cambridge, USA, 1992: Շեյլը Վայսին չէր տեսներ անշուշտ բանասիրութեան կերպնական հանգամանքը որպէս «մտաւորական արկածախնդրութեան բնատիպը» (արտայայտութիւնը Բրեննանին կը պատկանի): Բայց ապշած էր Երուարդ Սայդի մօտ տեսնելով հումանիստական ծրագիրին համակարգային զարգացումը:

- 31 Եջադրումի նշումները կը համապատասխանեն *The Centennial Review*ի հրատարակութեան (թիւ 13, 1969): Այսօրուան նպատակներուս համար այս մէջբերումները բաւարար են: Բայց կ'ուզեմ տարբեր առիթով վերլուծութիւն ենթարկել զանոնք, աւելի լայն համածիրի մը մէջ:
- 32 *Humanism and Democratic Criticism*, էջ 9:
- 33 *Humanism and Democratic Criticism*, էջ 11: Գրուածքներուն եւ լեզուին հանդէպ հոգատարութիւն ցոյց տուող հումանիզմը անշուշտ բանասիրական հումանիզմն է: Պարզ աւելորդաբանութիւն մըն է ըստածը:
- 34 Philippe Lacoue-Labarthe, *La Fiction du politique* [Քաղաքական հնարապատումը], Փարիզ, 1987, էջ 138: Շեղինակը հոս ծեռ կ'առն վերստին ժան-Լիւր Նանսիին հետ *Le mythe nazi* [Նացիստական առասպելը] (*La Tour d'Aigues*, 1991) գիրքով առաջարկած իր վերլուծումները: Նոյն վերլուծումներուն վերադարձած է անգամ մը եւս իր վերջին գիրքերն մէկուն մէջ՝ Heidegger. *La Politique du poème* [Շայդեգը: Քերուածի քաղաքականութիւնը], Փարիզ, 2002, վերջաբանով մը որ կը կոչուի «L'Esprit du national-socialisme et son destin» [Նացինալ-սոցիալիզմի ողին եւ անոր ճակատագիրը], որուն պիտի ակնարկեմ կրկին քիչ մը ետքը: Դժբախտաբար՝ Ֆիլիփ Լակու-Լաբարտը անժամանակ մահով մը վախճանեցաւ 2007ի Յունուարին: Ընթերցողը կը յդեմ իմ մէկ գրութեանս, իրանցուած որպէս յարգանքի տուլք, Փարիզի *Lignes* հանդսին կողմէ իրեն նուիրուած համարին մէջ (Ապրիլ 2007): Նիւ Ենրիկ NYU համալսարանին մէջ յուշ-երեւոյի մը ընթացքին իր մասին խոսածիս մէկ հատուածն է միայն այդտեղ ֆրանսերէն թարգմանութեամբ հրատարակուածը:
- 35 Heidegger. *La politique du poème*, էջ 163, ուր կ'ըստի թէ այդ բանաձեւը «քիչ մը ճիւաղային» էր [un peu monstrueuse]:
- 36 *La Fiction du politique*, էջ 112: Անգլերէն տարբերակին մէջ՝ փակագիծը բացակայ է: Արկածով անհետացա՞ծ թէ հեղինակին (կամ թարգմանիչին) կողմէ գրաբնուած՞ծ: Գաղափար չունիմ:
- 37 Մէջբերումը փոխ կ'առնեմ Լակու-Լաբարտը, տես *La Fiction du politique*, էջ 93: Լակու-Լաբարտ իր կարգին զայն փոխ առած էր Շիլդբարդ Բրեննանը, տես Hildegarde Brenner, *La politique artistique du national-socialisme* [Նացինալ-սոցիալիզմի գեղարուեստական քաղաքականութիւնը], գերմաներէն թարգմանուած, Փարիզ, 1980, էջ 273:
- 38 Ինչ որ ներկայացուցի հոս տասը տողով բացատրուած է ընթերկար *Le Deuil de la philologie* ֆրանսերէն հատորին (Ժընեւ, 2007, MétisPresse) 400 էջերով:
- 39 Alfred Rosenberg, *Der Mythos des Zwanzigsten Jahrhunderts*, լոյս տեսած 1930ին: Կայ անգլերն թարգմանութիւն մը, 1982ին լոյս տեսած:
- 40 Տասնեակներով յօդուածներ ու գիրքեր գրուած են Վիկիամ Շնուսի եւ բրիտանացի հնդկագէտներու մասին: Յիշենք Երկու սրանչելի փորձագրութիւններ, որոնք կը պատկանին Բերնըրդ Կոհնի գրիչին. Bernard Cohn (1928-2003), «Notes on the History of the Study of Indian Society and Culture», Վերատպուած *An Anthropologist among the Historians* գիրքին մէջ, Նիւ Դելիի, 1986, եւ «The Command of Language and the Language of Command», այս մէկը լոյս տեսած *Colonialism and its Forms of Knowledge* հատորին մէջ, Princeton Univ. Press, 1996, գրուած Միշել Ֆուկոյի անմիջական ազդեցութեամբ: Ընթերցողը տեղեկութիւններ պիտի գտնէ նաև վերը յշշուած Թոնաս Դրաուտմանի *Aryans and British India* աշխատասիրութեան մէջ:
- 41 Նոս ընթերցողը կը յդեմ Մահմուդ Մամդանիի ստեղծած ստորոգութիւններուն եւ իր լուսաբանիչ վերլուծումներուն: Տես Mahmood Mamdani, *Citizen and Subject: Contemporary Africa and the*



Legacy of Late Colonialism [Քաղաքացի եւ հպատակ: ժամանակակից Ավրիլկէն եւ ուշ շրջանի զաղութասդրութեան ժառանգութիւնը], Princeton Univ. Press, 1996: Այդ ստորոգութիւններն ու վերլուծումները յետոյ կիրարկուեցան նոյն հեղինակին կողմէ հասկնալու համար ցեղասպանական տենչին ընկերաբանութիւնը իր յաջորդ գիրքին մէջ՝ *When Victims Become Killers: Colonialism, Nativism, and the Genocide in Rwanda* [Երբ զոհերը կը դառնան դահիճներ: Գաղութատիրութիւն, բնիկութիւն եւ ցեղասպանութիւնը Ռուանդայի մէջ], Princeton Univ. Press, 2001:



2008
4



Ակզենտաւութիւններ

Դարցագորոյց Եղուարդ Սայհի հետ
[Լոյս տեսած 1976ին *Diacritics* հանդէսին մէջ]

[19] Այնպէս կը քուի, որ ձեզի համար աշխարհ (*world*) եւ աշխարհայնութիւն (*worldliness*) յղացքները յօդաւորումի կարողութիւն մը կը նետեն, կամ ըսենք՝ լժակ մը, որուն միցոցաւ ակադեմական քննադատը ի վիճակի կ'ըլլայ գրուածքներու վերաբերեալ իր աշխատանքը տեղադրելու հասարակական եւ քաղաքական խնդիրներու ժիրէն ներս: Արդեօք կրնայի՞ք աւելին ըսել աշխարհայնութիւն յղացքին օգտակարութեան եւ / կամ վիճարկողական ուժին մասին, այնպէս՝ ինչպէս որ դուք կը գործածեք զայն: Ի՞նչ է նշանակութիւնը այն երկդիմութեան որ ունի անգերեն բառը - *wordliness* որպէս այս-աշխարհին-մէջ-ըլլալ, առօրեայ առարկայականութիւն, շօշափելիութիւն, ընկերայնութիւն, ընդդէմ *worldlinessի* որպէս քաղաքավար ու քաղաքակիրթ մշակոյթի նշանը, աշխարհիկութիւն, նորամսութիւն:

[24] Թօյլաստրեցէք որ խօսք քիչ մը մասնաւորեն, ի հարկէ սահմանափակուելով այն մարզին՝ զոր ամենալաւը կը ճանչնամ: Ինչպէս ըսի վերը, միշտ մտահոգութիւն մը եղած է ինծի համար այդ հեռաւորութիւնը որ մերն է՝ այս երկրին արհեստավարժ մտաւորականներունը, [25] արտաշխարհի նկատմամբ: Պարզացում է ըսելը որ համալսարանական գրաքննադատներու մեծ մասը ծոյլ գեղագէտներ են, որոնք կը նախընտրեն Տենմիսընի հայեցողութեամբ բաւարարուիլ² քան թէ Ֆրանց Ֆանոնի կամ Բարինգտոն Սուրիի յարուցած հարցերուն մէջ թաքիտուիլ³: Եթէ ունիք բախտը (կամ դժբախտութիւնը, ըստ ձեր դիտանկիւնին) ուրիշ աշխարհամասի մը ծանօթ ըլլալու (իմ պարագային՝ Մերձաւոր Արեւելքն է, արաբական եւ մահմետական հասարակութիւնը), հարց կու տաք դուք ձեզի թէ արդեօք ի՞նչ բան անկէ սպրդած է արեւմտեան հասարակութենէն ներս, բացի ծաղրանկարային ուրուագիծ մը, այդ կարեւոր բայց չնաշխարհիկ ու հեռաւոր իրականութեան մասին: Չի բաւեր ըսել, թէ «օստար» աշխարհամաս մը որ արեւմտեան իրականութեան մաս չի կազմե՞ր չի կրնար լաւ ճանչցուիլ: Շատ աւելի հետաքրքրական ու շատ աւելի շահեկան է գիտնալ թէ ինչպէս եւ ինչո՞ւ այդքան վատ ճանչցուած է: Ի՞նչ գիտէր օրինակ միջնադարու Արեւմուտքը մահմետականութեան մասին: Այդ նիւթին շուրջ գիրը մը ունի Ո.Վ. Սութքը⁴, որուն մէջ կայ սքանչելի դիտողութիւն մը. մահմետականութեան մասին անտեղեակ էին, կ'ըսէ, բայց բարդ անտեղեակութեամբ մը, զոր կարելի է գործնապէս ուսումնասիրել որպէս մահմետականութեան մասին դրական գիտութեան մը ձեւերէն մէկը:

Կը տեսնէք անմիջապէս, թէ ուր կը տանի այս ըսածս. ուղղակի Նիցչէի կողմէ յաճախակի կատարուած նկատողութեան, որուն համաձայն գիտութիւն եւ գիտութեան կամեցողութիւն անբաժանելի են, եւ երկութը միասին՝ մեկմաքանութիւններ են, շահագործուած, համակարգային, հումկու մեկնաբանութիւններ: Ինչ կը վերաբերի Արեւելքին, ասոնք վերացական կերպով չէ՝ որ տեղի ունեցած են: Ակսայ այսպէս «Արեւելք»ը ուսումնասիրել կամ աւելի ճիշդ ինչ որ կը կոչեմ Արեւելքի արեւելականացումները: Բան մը որ զիս մղեց ոչ միայն դեպի արեւելագէտներու բանասիրութիւնը, այլև դեպի պատմութիւն, աշխարհագորութիւն, կրօնք, որոնք բոլորը միասին՝ արեւմտեան գիտութեան ճիշդաւորումները կը հանդիսանան, որպէս գլխաւոր առարկայ ունենալով Արեւելքը: Այդ ընելով՝ նկատի ունեի ի միջի այլոց՝ արդիական արեւելագիտութեան սկզբնաւորութիւնը ժթ. դարու առաջին տասնամեակներուն, արեւելագիտական հաստատութիւններու (ընկերակցութիւններու, հետազոտութեան եւ բարգնանութեան յատկացուած դրամագլուխներու, ակադեմական բաժանմունքներու) աճը, Արեւելքի մէջ հետզհետէ աւելի ուժեղ գաղութատիրական ներկայութիւնը, տնտեսական, դիւնագիտական եւ վերջապէս զինուրական առումներով, ու բազմաթիւ առաջնակարգ արուեստագէտներու գործերը, ներառեալ՝ Ֆլորեր, Ներվալ, Լէյն, Բըրտոն, Դիսրայէլի, Յիգոյ, Գօրէ⁵, եւ այլն, եւ այս բոլորին միջեւ եղած կապակցութիւնը: Աւել օրինակ Ունանի գրիչն ելած աշխատավիրութիւն մը⁶, եւ զայն տեղաւորեցէք շահադիտական ցանցի մը ծիրաններէն ներս (շահերը, ի դէպ, միշտ ստեղծուած են. կ'արժէ հարց տալ թէ ի՞նչ ձեւով կը ստեղծուին եւ ի՞նչ պատճառներով), որ զինք



կապակցութեան մէջ կը դնէր Գորինոյին հետ⁷, Ֆրանսայի դիւանագիտական գործակալութիւններուն հետ, համեմատական մարմնազնութեան հետ⁸, եւ մասամբ նորին, որոնք բոլորը Արեւմուտքի արեւելագէտին ուղեղին վրայ իրենց հետքը ձգած են եւ վերջին հաշուով անկէ ջնջած են ամէն ինչ, բացի ուրուագիծ մը, որուն տրուած է «Արեւելք» անունը: Ուսումնասիրութեան գիշաւոր մասը կը գրադի այն ծնւերով, որոնց միջոցաւ արեւելագիտական գրուածքները կը փորձեն Արեւելքը վերակառուցել գրութենական մակարդակի վրայ, [26] այնպէս ինչպէս թէ «հրական» կամ բուն Արեւելքը իրաւունք չունենար արեւմտեան գիտակցութեան մէջ ընդունուելու: Այս ամբողջը կարելի է դիտել Նապոլեոնի *Description de l'Egypte* մէջ⁹, աւելի ուշ՝ Սիլվսերի դը Սասիի ծաղկաքաղներուն¹⁰, ետքն ալ՝ Լեյնի եւ Ֆլուպերի համապատկերներուն մէջ:

Արեւելագիտութեան նկատմամբ իմ հետաքրքրութեանս կիզակէտը եղած է այդ գործակցութիւնը մէկ կողմէ տրամասական եւ արխիւային գրութենականութեան մը եւ միւս կողմէ՝ աշխարհային իշխանութեան մը միջեւ, մէկը ըլլալով միւսին նշանաբանը եւ ցոլացումը: Որպէս համակարգային տրամասութիւն, արեւելաբանութիւնը գրաւոր գիտութիւն է, բայց նաեւ աշխարհի մէջ տեղի կ'ունենայ, աշխարհի մասին կը խօսի, այնպէս որ իրականութեան մէջ՝ գիտութենէ աւելի բան մըն է: Ուժի բանեցում է, քանի որ երբ հարցը կը վերաբերի Արեւելքին՝ արեւելաբանութիւնը գրոնական եւ գրոծոն գիտութիւնն է, որուն միջոցաւ Արեւելքին գրութենապէս յանձնուած է Արեւմուտքին, գրաւուած է Արեւմուտքին կողմէ, իր հարստութիւններէն կրուած նոյն Արեւմուտքէն, մարդկային առումով քանուած կրկին Արեւմուտքին կողմէ: Այդպիսի Բէյկընեան իրագործումներէ մեկնելով, դժուար չէ տեսնել օրինակ՝ որ գիտութեան գիշաւոր մասը գրուածքներու մէջ կը մտնէ պատմական օրինաչափութիւններու, նաեւ՝ ընկերային եւ տնտեսական ուժերու, աշխարհային իրադարձութիւններու համաձայն, որոնց ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է ու հրատապ: Եւ ըսած կ'արժէ մասնաւորաբար այսօր գրաքննադատի մը հանար, որ իր հաստատութենական լուսանցքայնութեան հետեւանքով՝ կարծէք կը բաւականանայ դուրսէն դիտորդ մը մնալով աշխարհէն ներս կատարուածին վրայ: Մեր մեկնաբանական աշխարհային ինաստութիւնը ձեւով մը ամէն ինչի կիրարկած ենք, բացի մեզմէ: Փայլուն կերպով գիտենք գրուածքի մը աճպարարութիւնները պակառուցել, քննադատական մերոդի մը կոյր կտտերը երեւան բերել, բայց կարծէք մինչեւ այսօր չենք գիտցած ինչպէս նոյն թերնիքները կիրարկել աշխարհի մէջ գոյացող գրուածքներուն, ասոնց նիւթականութեան, ասոնց կարողութեան՝ թշուառութիւն կամ ազատագրում պատճառելու, Սիշել ֆուկոյի բառը գործածելով՝ ասոնց կոթողայնութեան¹¹: Արդինքը այն է, որ գրուածքը մեզ կը դիւրէ, կը համոզուինք որ ան գրուածք է միայն, առանց անդրադառնալու որ այդ ըսելը այդքան նեղմիտ կերպով ոչ միայն միամիտ ըլլալ է, այլեւ՝ կոյր:

Կերադառնալով աշխարհի իրականութեան, փափաքելի պիտի ըլլար որ գրուածքներու քննադատը քննարկել այն տրամասական համակարգը, որուն համաձայն «աշխարհ»ը բաժանուած է, տնօրինուած, աւարումի ենթարկուած, պիտակներու արժանացած, որոնց համաձայն «մենք» մարդկային ենք եւ «հրենք»՝ չեն, ու մասամբ նորին: Պիտի անդրադառնար որ նոյնիսկ բանասիրութեան նման անվտանգ կրթանք մը որքան կարեւոր դեր խաղացած է այդ շարժընթացին մէջ: Ինչ որ աւելի եական է՝ պէտք է ջանալ քողազերծել գրուածքներու գաղտնապահութիւնը, մենաշնորհումը, երբ անոնց պարագայական բանձրութիւնը եւ մեխանկցութիւնը ծածկուած են արուեստի կամ «պարզ» գրութենականութեան այլաշխարհային փայլատակումով:

Երբ «քանասիրութեան» յուացքին պատմութիւնը կը վերակազմէք, [27] արդեօք հակասութիւն մը կը տեսմէք մէկ կողմէ բոլոր ազգերը որպէս մարդկային հաւասար նկատող գաղափարին (Յերդըր) եւ միւս կողմէ ազգերու նուիրապետական անհաւասարութեան գաղափարին միջեւ, վերջինս ենթադրուած ըլլալով «վեզուներու տոհմածառ»ի մը հայեացքին մէջ¹²:

Առաջին ակնարկով՝ այն, հակասութիւն մը կայ: Նոր լոյս տեսաւ, Այզայիա Պերլինի հեղինակութեամբ, Վիկոյի եւ Յերդըրի նուիրուած ուսումնասիրութիւն մը¹³, որուն համաձայն Յերդըր մշակութային գետնի վրայ բազմազանութեան հաւատացող մըն էր, հակադրուած մշակութային ազգայնականութեան եւ մշակոյթներու միջեւ նուիրապետական բա-

2008



30

Ժանումներուն: Բայց այդ՝ ճշմարտութեան մեկ երեսն է միայն: Առաջին շրջանի Յերդը իր ժամանակաշրջանի տիպական ներկայացուցիչն էր, երբ «Արեւելք»ը կը նոյնացնէր Դին Կտակարանի պատմութեան: 1769ի և 1774ի միջեւ՝ ընդարձակեց Արեւելքի մասին ունեցած իր պատկերացումը, մէջը ներառնելով Պարսկաստանը, Եգիպտոսը եւ Փինչիկիան, եւ սկսաւ այդ աշխարհին վերագրել նախնականութեան ստորոգելին: Յետոյ, այս անգամ 1785ի շուրջ, երբ Անգլիական Դիւլիս ակադեմիան գործութիւնը ու միեւնոյն ժամանակ՝ սանսկրիտ լեզուն կատարուած թարգմանութիւնները սկսած էին տարածուիլ, Յերդը դարձաւ յունական արուեստի մեջ սիրահարն ու պաշտպանը: Իծեսի մէջ, բացայստորէն կը յայտարարէ որ Եւրոպացի մը համար՝ հելլենական գեղագիտութիւնը նախամեծար պէտք է համարել ասիականին բաղդատմամբ: Եւ իր ուշ շրջանի գործերուն մէջ՝ բազմաթիւ յարձակումներ կան արեւելեան ժողովուրդներու աստուածիշխանական եւ բրնատիրական կիրառումներուն մասին: Ինչ որ ըստ իս՝ պէտք է նշնարել Յերդը մօտ այդ ձգտումն է՝ Արեւելքին տեւաբար ստորադասելու Արեւնուտքցիին բաղդատմամբ, եւ այդ եղած է գրեթե միշտ տիեզերականացնող գիտութիւններու, օրինակ՝ ժմ. դարու սկիզբի բանասիրութեան եւ համենատական քերականութեան կեցուածքը: Երկու Շլէգը ըրած են այդ, Յումբուլը ըրած է, Բոպը ըրած է:

Եւ սակայն այդպիսի բաղդատութիւններ երբեք չեն կրնար անմեղ զլլալ, արժեւորում է անկախ կատարուիլ: Դէպի լեզուական տոհմածառերու եւ համախմբումներու նույիրապետութիւնները առաջնորդող ձգտում մը կայ այդտեղ, որուն արմատը իմ կարծիքով պէտք է տեսնել երեք բան արժեւորելու ցանկութեան մէջ. ա) ներկան (կամ ներկայի որոշ հանգամանք մը), բ) Եւրոպան եւ գ) Նոյնինքն՝ գիտութիւնը: Արեւ օրինակ Շլէգը: Յնդիկներու մասին իր 1808ի գիրքին մէջ ցոյց կու տայ սանսկրիտի ու յունարէնի արմատներուն նմանութիւնները, յետոյ՝ այդ երկութիւն եւ արդի Եւրոպական լեզուներուն միջեւ նմանութիւնները¹⁶: Արեւելքի մասին իր պատկերացումը այն է, որ ան դասական ու անհունապէս հեռաւոր տարածք մըն է, որուն ազդեցութիւնը սակայն զգալի է մինչեւ այսօր միմիայն արդի Եւրոպական լեզուներուն, հետեւաբար՝ քաղաքակրթութիւններուն մէջ: Արեւելքը այդտեղ վայր մը չէ ուր կ'ապրին այսօրուան արեւելքցիները, ուր անոնք կ'աշխատին ու կ'արտադրեն: Պատեան մըն է, իրական արդի աշխարհէն հեռու, բայց անոր «հնքնատպութեան» փայլը փոխադրուած է Եւրոպայի վրայ: Եւրոպան է, որ մէջտեղ բերած է այն մտածողները որոնց մերողները (այս պարագային՝ համենատական բանասիրութեան մեթոդները) կարելի դարձուցած են այդ ինքնատպութեան յայտնութիւնը եւ գործածութիւնը: Այնպէս որ «հնդեւրոպական» արտայայտութիւնը երկու անհաւասար մասեր բաղկացած է: Առաջին կեսը ընկերնած է անցեալին մէջ, երկրորդը՝ կենսալից է, նախաձեռնարկ [28] ու գործօն: Բոպի¹⁷ աշակերտներուն մասին կ'ըսուի, որ կը վիճէին որոշելու համար թէ «հնդեւրոպական»ը արդեօք պէտք է փոխուէր «հնդկագերմանական»ի¹⁸: Այդտեղ կարելի է տեսնել լարջուն ազգայնականութիւնը, որ իր գլուխը կը ցցէ, բայց անխուսափելի էր, կը խորհիմ, այն վայրկեանէն սկսեալ երբ բանասիրութիւնը որակական տարբերակումներ կը կատարէր լեզուական զանազան խնդբառութիւններուն միջեւ, եւ երբ արդիականութիւնը գուգորդուած էր Եւրոպական ներկային հետ:

Շլէգըի եւ իրեն հետ նոյն այդ աւանդութեան պատկանող բոլոր բանասէրներու աչքին՝ հնդեւրոպականը կը զատորոշուէր սեմականէն: Վերջինս յօդաւոր էր (լեզուն կը բանէր արմատներու համակարգով մը, որուն կ'աւելնային վերջածանցներ եւ նախածանցներ), հետեւաբար իրեն կը պակսէր բեղմնաւոր կարողութիւնը, չէր կրնար կատարել գեղարուեստական պաշտօններ: Մինչդեռ առաջինը կենսունակ էր, գեղագէտ, բեղուն, օրգանական կարողութեամբ օժտուած: Այդ լեզուաբանական զատորոշումին մէջ (եթե այդպէտք է կոչել զայն), ունիք ցեղային տեսաբանութիւններու սաղմը, քանի որ դժուար պիտի չըլլար ատկէ ետք ցեղային տիպեր կառուցելը, լեզուաբանական զատորոշումներէն մէկնելով: Ամբողջ ժմ. դարու ընթացքին, բոլոր բանասէրները կրկին ու կրկին՝ նոյն հակադրութիւններու ցանցով աշխատած են: Իր *Le Mythe aryen* գիրքին մէջ, Լեւոն Պոլիակով¹⁹ ուսումնասիրած է սերտ կապակցութիւնը որ կայ մէկ կողմէ՝ ցեղապաշտութեան եւ միւս կողմէ՝ «արիական տիպ»ի նման գաղափարներուն միջեւ, տիպ մը որուն յատկանիշները՝ Եւրոպական ենթադրեալ «լեզուախումբ»ի մը յատկանիշներն էին: Բայց Պոլիակով անշուշտ գրեթե նկատի չ'առներ այն պարագան որ գոնէ Եւրոպացիներու աչքին՝ «Սեմականներ»ը միայն Յրեանները չէին, այլեւ՝ Մահմետականները, եւ որ լման մտաւորական




նախագիծը որուն նպատակն էր փաստել արեւելեան (այսինքն՝ սեմական) անկումայնութիւնը իրականին մէջ կը գործածուէր օրինաւոր դարձնելու համար ամբողջ Արեւելքի գաղութիրական ներգրաւումը: Բայց այսօրուան մտաւորական թիւրմբռնումներու հետեւանքով՝ աչքերնիս կը գոցենք այն իրողութիւններուն դիմաց որոնք չեն համապատասխաներ մեր անմիջական նպատակներուն: Պատմութեան քմծիծաղներէն մէկն է տեսնելը որ Պոլիակովի գիրքին նման գործ նը, որ ուժեղ յարձակում մըն է ցեղապաշտ տեսաբանութիւններուն դէմ, դուրս կը ձգէ պատմութեան այն մասը որ ցոյց պիտի տար թէ որքա՞ն աներեւակայելի կերպով լայն էր այդ ցանցը որ կը գործածուէր մէկտեղելու համար արեւելքիները եւ սեմականները:

Բայց շեղեցայ ձեր հարցումէն: Վերադառնալով ձեր ըսածին, յարակարծաբար կը տեսնենք թէ «տարբեր ազգեր»ու գաղափարին վրայ հիմնուած հաւասարութեան պատկերացումները մէկ կողմէ, եւ միւս կողմէ բոլոր որակական լայտուն դատումները որ կատարուած են ազգերու եւ ցեղերու անհաւասարութեան մասին, իրականութեան մէջ ձեռք ձեռքի կը յառաջանան: Լայն առումով, իրենց այդ ձեռք ձեռքի յառաջանալը ուժի եւ իշխանութեան հարց մըն է, որուն հետորական խորհրդանիշը «մարդկայնութիւն» բառն է: Ամէն անգամ՝ երբ «մարդկայնութիւն» կամ «մարդկութիւն» բառը կը գործածուէր, կարծէր անմիջականօրէն կը ցոլացնէր այն ծշմարտութիւնը որ զայն գործածողը կը ներկայացնէր, կարող էր ներկայացնելու, մարդկութեան ծշմարտութիւնը, ընդէմ մարդկութեան մեծագոյն մասին, որ անկարող էր նոյնը ընելու: Գրաբնադատներու պարտականութիւնն է ուսումնասիրել ԺԹ. դարու Երոպական գրականութեան մէջ սփռուած ընդհանրացումներու, մասնաւորաբար՝ մարդակեդրոն ընդհանրացումներու տարածման մասին: [29] Վստահ են, որ այդ ձեւով պիտի անդրադառնայինք թէ վիպապաշտներէն սկսեալ՝ գրական արտադրութիւնը եւ վերը բացատրած իմաստովս քաղաքական զատորոշումները գիրար կը քաջալերեն ու կ'ուժեղացնեն:

Արեւմտեան մտածողութեան մէջ Չնաշխարհիկի կերպարը սովորաբար ինքն իր մէջ փոխադրած է «Կալիբրան»ի հարցադրութիւնը, կուգեն ըսել՝ Չնաշխարհիկը, որպէս չհաղորդուող կամ միայն լուսանցքային կերպով հաղորդուող էակ, որ վերէն պարտադրուած, տիրապետող լեզուին մէջ կը բանի¹⁹: Այս անխօսութիւնը կրնայ յանգիլ ըմբռստացումի կամ ենթարկուածութեան, բայց երբեք՝ տիրող մշակոյթին մէջ ճնշուած տարրի ներծուլումին: Ինչպէս կը տեսնէք լեզուական այս հարցը, նկատի ունենալով ձեզ նման գրողները, որոնք ստիպուած են ընդունելու գաղութիրութեան լեզուն որպէս իրենց (ձեր) արտայայտչամիջոցը:

Ճիխ եւ բարդ հարցադրութիւն մըն է: Առաջին բանը որ միտքս կու գայ այդ խօսքն է որ ունեցած է Զուիցերիոյ բրիտանական դեսպանը՝ Լորտ Դերուենդ, ճոյսի յուղարկաւորութեան արթրով, Զիւրիիկի մէջ: Տէր ու տիրականի շեշտով մը (թերեւս անգիտակցաբար) ըսած է որ Իռլանդացին մը համար՝ ճոյս փառայել կերպով ցնցած ու իր թմբիրէն արթնցուցած է մեր հին աղուոր անգլերէնը: A glorious shaking-up, կարծեմ այդ էր իր գործածած արտայայտութիւնը: Ի՞նչ քմծիծաղային ելոյք, երբ կը խորիս որ սկիզբէն մինչեւ վերջ՝ ճոյսի մտահոգութիւններէն մէկը եղած է այն՝ որ Բէն ճննաընի լեզուն իր (Ստեֆընի) լեզուն չէր (ինչպէս կը բացատրէ անմոռանալի կերպով *The Portrait*ին մէջ), որ «Christ», «αλε», «master», ու նման բառեր բնականօրէն չին գար իրեն կամ առաջին հերթին եկողները չին: Կը յիշեն նաեւ եմ Սեզերի նկատողութիւնը²⁰, երբ կը պատմէր թէ զինք գոված ատեն՝ Պողըրոն նաեւ իր հիացումը կ'արտայայտէր այն իրողութեան ի տես՝ որ Սեզեր ֆրանսերէն լեզուն կը գործածէր ճիշդ ֆրանսացիի պէս: Սրախօսութիւնը անշուշտ մեծ մասամբ Սեզերի մտքին մէջ էր, բայց իրական էր: Ֆանոնը շատ բան ուներ ըսելիք լեզուին մասին որպէս ճնշումի միջոց, գլխաւորաբար իր սկզբնական շրջանի գործերուն մէջ, թէեւ նորէն կը յայտնուի ան *Les Damnés de la terre* մէջ: Կրնայի նաեւ յիշել ֆրանսերէն նոր լոյս տեսած քանի մը գիրքեր (օրինակ՝ Բալիբար եւ Լապորտ, *Le Français national*, Ժան-Լուի Կալվէ, *Linguistique et colonialisme: petit traité de glottophagie*, կամ տարբեր տեսակի յօդուածներ ճիլիան Սանկոֆի հեղինակութեամբ²¹), որոնք կը զբաղին լեզուի գործածութեան հետ կապուած ընկերամշակութային ճնշումներով, մասնաւորաբար երբ կեդրոնէ մը կը սերին ու կը կիրարկուին գաղութատիրական իշխանութեան ենթակայ խումբերու: Մարսել Կոհենի եւ Յանրի Լըֆեվրի սկզբնական շրջանի գործերն ալ կարեւոր են այդ առումով²²:

2008



Լեզուի քաղաքական հարցը երկու հանգրուաններէ անցած է, կը խորիիմ: Նախ կայ այն շրջանը երբ (ինչպէս Ալճերիոյ պարագային) բնիկ գրողը ստիպուած էր ֆրանսախօս (կամ անգլիախօս) ըլլալու, առանց որեւէ այլընտրանք ունենալու: Անշուշտ կար բնիկ արաբական աւանորութիւն մը, բայց այդ մէկը ենթադրաբար աշխարհին համար չէր նախատեսուած: Վերապահուած էր խորհրդաւոր ու վերացական հարցերուն, ինչպէս էին [30] օրենսդրութիւնը, *հաղիթը*, եւ այլն: Վերը յիշեցի թէ որքան հետեւողականութեամբ գաղութատէրը գաղութատիրուածին կը ստիպէր որ ի՞ր լեզուն խօսի, կամ որպէս ցուցադրութիւն, կամ որպէս տուրք մը որ կը վճարուի ուժեղին քաղաքական տիրապետութեան գլուխը եղող հասարակութեան: Այդպէս խօսւեցնելը կարծեն պէտք է հասկնալ ճիշդ այն պատժական իմաստով զոր Ֆուկոյ երեւան բերած է (Յուկել եւ *Պատժել* գիրքին մէջ), ուսումնասիրելով ուղղագրական կամ քրեական կրթութիւններու բանեցումը եւրոպացի ուսանողներու կամ բանտարկեալներու վրայ, ժ՛Ը. եւ ժԹ. դարերուն: Երբ գաղութներուն մէջ տեղական կամ բնիկ լեզուն կը դասաւանդուէր, միշտ բանտարկուած էր մերեալ կամ դասական լեզուի իր հանգամանքին մէջ: Դաստիարակութեան չենթարկուած բնիկին խօսածը խոհանոցի լեզու մըն էր, ուրիշ ոչինչ: Դաստիարակչական համակարգին պատճառով, քաղբենիութիւնը կ'որդեգրէր ֆրանսերէնը կամ անգլերէնը, ներհուն հապարտութեան զգացումով մը, գիտակցելով նաեւ այն հեռաւորութեան որ դասակարգը կը զատէր եւ գաղութատէրն, եւ խեղճ ու կրակ գիւղացին:

Երկրորդ փուլը կարելի է բաժնել երկու հանգրուանի: Նախ կը ծագի ընդհանուր գիտակցութիւնը այն իրողութեան՝ թէ գաղութատիրական լեզուն կարելի է գործածել աշխատելու համար քաղաքական հակակշիռի համակարգին դէմ: Այդ մասին կը խօսի Ֆանոն, մանրամասնաբար: Յետոյ կու զայ երկրորդ հանգրուանը, երբ յանկարծական դարձ մը դէպի բնիկ լեզուն կը նկատուի որպէս գաղութատիրական ճնշումի դէմ ծառացած հաստատմիտ դիմադրութեան մը խորհրդանիշը: Ալճերիոյ մէջ՝ այս վերջին շարժումը տեղի ունեցաւ երբ ֆրանսացիններուն դէմ քաղաքական ապստամբութեան մաս կը կազմէր արաբերէն սերտելն ու գործածելը: Արդիւնքը այն է, որ այսօր՝ Ալճերացինները արաբերէնի տեսակ մը կը խօսին որ խառնուրդ մըն է բարբառայինի եւ դասականի (գրաւոր լեզուի): Մեծամասնութիւնը Արաբներուն (բացառելով *Պահեստինցինները*, որոնց փորձառութիւնը բազմաթիւ առումներով ննան է Ալճերացիններու փորձառութեան) դժուարութեամբ կը կատարեն անցը մէկն միւսը, այնքան մէծ է անջրպետը երկութիւն միջեւ:

Անգլերէնն ու ֆրանսերէնը այսօր աշխարհային լեզուներ են: Արաբերէնը կամ տեղական խօսակցական լեզու մըն է, կամ արարողական լեզու մը, բայց արդի արաբական քաղաքականութեան հիմնադրիչ պահերէն մէկը եղած է երբ Արել Նասերը իր ճառերը կը գործածէր որպէս առիթ գաղութատիրութիւնը պախարակելու համար Եգիպտոսի բնիկ բարբառով: Ոչ միայն այդ ձեւով կը խուսափէր դասականին բռնազրութեննէն (դասականը արեւելաբանութեան կողմէ ստացած էր տեսակ մը այլաշխարհային անպէտը լեզուի օրինավիճակ, այն աստիճան որ նոյնիսկ շատ մը Արաբներ կը հաւատային այդ առասպելին), այլև Բրիտանիոյ ու Ֆրանսայի կը հակադրէր իր իսկ տուեալներով, ու ձեւով մը՝ իր լեզուական հողին վրայ կը փոխադրէր հակամարտութիւնը: Կատարուածը շատ աւելի տպաւորիչ էր քան ինչ որ կրնաք ըսածներէս հետեւցնել, մանաւանդ երբ խորիիք որ առուազն երկու արաբական երկիրներու սահմանադրութիւնները սկզբնապէս [31] գրուած էին ոչ թէ արաբերէնով, այլ Եւրոպական լեզուով մը, եւ երբ նկատի առնէր նաեւ որ շատ մը արաբական պետութիւններու պատմական արխիւնները գոյութիւն ունին միմիայն Լոնդոնի մէջ եւ անգլերէնով: Որուն կրնաք աւելցնել այն պարագան որ Եւրոպայի մէջ կայ արաբական գրուածքներու մէծ գանձարան մը, արաբական աշխարհէն կորզուած ժԹ. դարու ընթացքին գաղութատիրական իշխանութիւններուն կողմէ: Յու Ֆուկոյի տեսաբնութիւնը արխիւի եւ տրամասութեան մասին իրապէս շօշափելի հանգամանք կը ստանայ: Արդի արաբական պատճութեան մէկ կարենոր մասին արխիւլ կը գտնուի Եւրոպայի մէջ, առանց փոխաբերութեան, հոն պահուած է, հոն է որ ֆիզիքապէս բանտարկուած է:

Արաբախօս շատ մը նշանակալից բանաստեղծներ, վիպագիրներ եւ խոհագիրներ ուժեղ կերպով գիտակից են այս իրողութիւններուն: Փաստորէն դժուարութիւն ունին մարտելու այն կացութիւնը, որուն համաձայն իրենք ուշացած այցելուներ են, բաղդատմանք



մարքսական կամ այլ գաղափարներու, որոնք օգտակար են երբ հարցը կու գայ պաշտպանությունը այդ նոյն մշակոյթին դէմ որ արտադրած է եւ մարքսականութիւնը, եւ գաղութատիրութիւնը: Այդպիսի տարօրինակ համաժրի մը մէջ՝ ինքնատպութիւնը չունի նոյն հանգամանքը որ պիտի ունենար եթէ անոնք «առաջիններ»ն ըլլային: Այդ է պատճառը որ Յարուղ Բլումի ազդեցութեան քարտեսները եւ ուժեղի-տկարի, առաջնահերթ բանաստեղծներու եւ մանկականներու մասին գաղափարները այնքան թելադրական կը գտնեմ:

Կասկած չկայ որ Երրորդ աշխարհի եւ մասնաւրապէս՝ արաբական հասարակութեան դէմ ցցուող մշակութային եւ քաղաքական մեծ հարցերէն մէկը անկախութեան յօդաւորումն է - լեզուական փոխարերութիւնը հոս էական է - եւ հասկցություն համար մղուած պայքարը: Որպէս աշխարհային լեզու, անգլերէնը սպառնական երես մը ունի երբ կ'արտածուի: Կրնայ նոր տեսակի անգրագիտութեան մը պատճառը ըլլալ (Եւ Է), ինչպէս կ'ըսէր Պլաքմզը²³: Այդ անգրագիտութիւնը, երբ կ'ընկերակցի Երրորդ աշխարհի ձգտումին դէախի թեքնիքական վարպետութիւն եւ խելքի ելեկտրոնականացում, լեզուն կը դարձնէ ճնշումի եւ ստրկացումի նոր ձեւ մը: Որովհետեւ եթէ ճիշդ է որ արեւելաբանութիւնը լեզու մըն էր, որուն օրինափակումները [կոտերը] եւ ցանցերը ուրուագծային Արեւելը մը կը զտին, զայն արեւմտեան ճաշակին հրամցությունը համար, նոյնքան ճիշդ է որ Արեւմուտքը կը զտի ինչ որ Արեւելքը ուրուագծային կերպով պէտք է ճանչնայ իր մասին: Այսօր Երրորդ աշխարհի եւ արաբական Երկիրներու մտաւրականները այդ կրկնակի ուրուայնացումները կրնան իրենց յարձակումին թիրախը դարձնել, եւ այդ հնարաւորութիւնը կը պարտին Ֆրեյոդի, Սարքսի եւ ուրիշներու մօտ գտնուող անդրտամասական կարողականութեան²⁴:

Այս միջոցին իմ անձնական աշխատանքս կերպոնացած է արեւելաբանութեան տրամասութեան վրայ, որ պէտք ունի տեղադրությունը, նիւթականացությունը: Կ'ուզեն անոր կառոյցները բացայատել, զայն բնութագրել որպէս լեզու մը որուն հաստատութենական եւ պատժակրթական ներկայութիւնը ջնջած է ու մէկի դրած է Արեւելքցիին մարդկային իրականութիւնը եւ անոր տեղը զետեղած է որպէս նմոյշ արեւելաբանացած Արեւելքը: Այդ տպաւրութիւնն ունին որ արեւելաբանութեան ճնան ճնշիչ լեզուներու գրադարանին մէջ մաքրագործում մըն է կատարածն, որպէսի օր մը ես որպէս Արեւելքցի եւ ինծի հետ՝ ուրիշ Արեւելքցիներ կարենանք խօսիլ, [32] արեւելաբանութեան փոխարեն գործածելով ինչ լեզուն որ մեր հայեացքին համաձայն՝ մեր պէտքերուն կը յարմարի:

Եթէ լաւ կը հասկնամ, տեսաբար կ'ընդգծէք այն կէտը որ արեւմտեան մտածողութեան հիմնական սխալը (կամ աւելի ճիշդ՝ անոր գաղափարաբանական խեղաթիրումը) «արեւելեան» մշակութային ժառանգութեան իմաստէ զուրկ ըլլալու հաւաստումն է, որուն բաղադրիչներն են լեզուի սոորադասութիւնը, խառնուածքի անմշակութիւնը, պատմութեան բացակայութիւնը (իսկ եթէ կայ «արեւելեան» պատմութիւն մը, գրուած է միշտ Արեւմուտքցիին կողմէ ու հրամցուած է որպէս այդ Արեւելքցիին, որ անկարող է ինքն իր պատմութիւնը գրելու), եւ վերջապէս «արեւելեան» գրական աւանդութեան մը չգոյութիւնը: Այդ վերջին կէտը պատմականորէն արդեօք ծշմարտութեան կը համապատասխան²⁵: Եղա՞ծ են տարիներու ընթացքին արաբերէն լեզուով արտադրուած գրականութեան մէջ տարբեր հանգրուաններ (ինչպէս կան օրինակ Եւրոպական վէպի պարագային): Եւ վերջապէս եթէ նկատի առնենք ժամանակակից գրական եւ գեղարուեստական արտադրութիւնը, ի՞նչ դեր վերապահուած է անոր, վերջին տարիներուն արաբական գիտակցութեան արձանագրած հասարակական եւ քաղաքական շրջափոխութիւններուն մէջ արաբական հասարակութիւններուն մօտ: Որքանո՞վ կը ցոլացմէ ան արաբական համաժրէն ներս կատարուած նորագոյն փոփոխութիւնները:

Իրականութիւնն ըսելու համար, իմ տպաւրութիւնս այն է որ արեւելագէտը Արեւելքը դարձուցած է չափէն աւելի իմաստալից, անոր ըսել տալով բաներ որ ո՛չ մէկ տարածաշրջան, ո՛չ մէկ ժողովուրդ ու ո՛չ մէկ կրօնք կրնային բովանդակել այդքան ուրուագծային կերպով, այդքան չոր ու ցամաք: Որնան կ'ըսէր, որ սեմական միտքը «մարդկային ցեղի ստորադաս տեսակ» մըն է: Չէր ըսեր որ ան - կամ զայն արտադրող Արեւելքը - զուրկ է իմաստէ: Երբ եղար Կիմէ եւրոպական ժմթ. դարուն մէջ կը տեսնէր Արեւելեան Վերածնունդ մը, այդ հաստատումին գլխաւոր յատկանիշներէն մէկը Արեւելքի գերարժեւորումն

2008



34

Էր²⁵: Բանժամէն Կոնստան, իր *Journal intime*ին մէջ, այդ երեւոյթին շուրջ ունի կարգ մը սրամիտ նկատողութիւններ: Բայց ինչ որ ճիշդ է այն է, որ արեւելագէտը, եւ Երոպացին ընդհանրապէս, վարժուեցաւ այն գաղափարին թէ ինքը աշխարհին - եւ նոյն ինքն Արեւելքին - պիտի ըստ Արեւելքին ինչ ըլլալը: Եւ վստահ եմ որ նոյն բանը պիտի տեսնէք այսօր երբ «Արեւելքիններ» իրենք իրենց կը պատմեն թէ ինչ է «Արեւմուտք»ը: Ինչ որ հետաքրքրական է արեւելագիտութեան պարագային՝ այն է, որ Արեւելքը մեկնարաննելու արարքը շատ շուտ Վերածուեցաւ Արեւելքի փոխարէն խօսելու (զայն լուցնելու) արարքին, երբ 1798էն ետք՝ Արեւելքը դարձաւ գէնքի ուժով գրաւուած տարածամաս: Անշուշտ ձեր բառերը գործածելով՝ այս ամբողջը կը հրացնուէր Արեւելքին, կ'ըլլար Արեւելքին հաշուոյն, բայց իր կարծիքը երբեք չէր հարցուէր: Ինքը չէր մասնակցեր այդ մեկնարանութիւններուն: Պէտք է յիշէր որ արեւելագիտութեան մտածածը ինքն իր մասին այն էր, թէ իր ըրածը կ'ընէր ի հեծուկս Արեւելքին:

Շատ մը Արաբներ պիտի համաձայնէին, կարծեմ, այն գաղափարին հետ թէ արաբական մշակոյթին ամենէն կարեւոր երեսակը, մահմետականութիւնը բացառեալ, գրականութիւնն է: Այդ գրականութեան գագաբնակէտը, Յեծիրէն ետքը եւ մինչեւ ժմ. դարու Վերջաւորութիւնը, [33] Աբբասեաններու շրջանն է, թ. եւ ժ. դարերուն միջեւ: Ասոնց եւ արդի շրջանին միջեւ կան ուրիշ պահեր որոնք կարեւոր են գրական առումով (օրինակ՝ ժմ. դարու ժամանակագիրները, արձակի եւ բանաստեղծութեան մասնագիտացած եղանակները, եւ այլն), բայց ընդհանուր առմամբ՝ շատ յիշատակելի բաներ չեն կատարուած այդ դարերուն, առնուազն այդ է իմ կարծիքս, եւ իմ կարծիքս անշուշտ որոշ չափով գաւառական է, նիւթին մասնագէտը չեմ: Յիմա չեմ կրնար աւելի երկար խօսիլ Աբբասեաններու շրջանին մասին: Պիտի նմանէր Երոպական Վերածնունդին մասին խօսիլ մէկ պարբերութեամբ: Բայց այն, արտակարգ կերպով հարուստ եւ զարմանալիօրէն հնարամիտ ժամանակաշրջան մըն է արաբական գիր ու գրականութեան համար: Արեւմտեան ընթերցողի մը, ըստենք՝ համեմատական գրականութեան մասնագէտի մը հանար մեծ դժուարութիւնն այն է, թէ որպէսզի կարենայ խօսիլ այդ գրականութեան մասին՝ պէտք է անդադար բացատրութիւնները: Բայց այդ՝ դժուարութիւններէն մէկն է միայն:

Միւս հարցը այն է, որ արեւելագիտութիւնը ընդհանուր առմամբ՝ շատ քիչ զբաղած է արաբական գրականութեամբ, կամ ըստենք՝ այդ գրականութեամբ որպէս արաբական կեանքի արտայայտութիւնը: Այս մէկը՝ ամենէն նշանակալից Երեւոյթներէն մէկն է եթ նկատի առնենք արեւելագիտութիւնը որպէս վարդապետութիւն, եւ տեղ մը՝ այդ Երեւոյթն է որ զիս մղած է արեւելագիտութեան մասին ուսումնասիրութեանս ձեռնարկելու: Կարծես թէ ամէն արեւելագէտ բոլոր Արաբները նկատած է Քուրանի (արեւելագէտներուն կողմէ մեկնարանուած Քուրանի) մէկական մարմնացումներ: Մեթոդաբանական գետնի վրայ՝ այս կեցուածը համազօր է Միհացեալ Նահանգներու պատմութիւնը գրելու որպէս նոր Կտակարանի պատկերազարդում: Երբ նկատի առնեք մինչեւ իսկ մասնագիտութեան անունը - արեւելագիտութիւն, կամ ասոր Ենթարաժամունները՝ մահմետագիտութիւն կամ արաբագիտութիւն - անշուշտ պիտի չկարենար գտնել համապատասխան մարզ մը միւս կողմը: Արաբական Երկիրներուն մէջ չէ զարգացած արեւմտագիտութիւն մը, եւ ո՛չ մէկը պիտի խորհեր որ քրիստոնեութեան մասին աշխատասիրութիւն մը կրնայ փոխարինել Ծէյքսպիրի, կամ Սէն-Սիմոնի ուսումնասիրութիւնը: Եւ ասոնք սովորական Երեւոյթներ են արեւելագիտութեան մարզին մէջ: Վիճակագրական կերպով, վստահ եղէք, գրականութիւնը ամենէն քիչ ներկայացնուածն է արեւելագիտական Ենթամասնագիտութիւններու շարքին մէջ, բացայատ պատճառներով, քանի որ գրականութիւնը պղտոր կը դարձնէ արեւելագէտներուն կողմէ Արեւելքին հանար հնարուած ստորոգութիւնները: Պարզ ու մեկին իրողութիւնն այն է, որ արեւելագէտները կարդալ չեն գիտեր եւ այդ պատճառով՝ կը շրջանցն գրականութիւնը:

Երբ կը հասնիք արդիական շրջանին, շատ աւելի լուրջ խեղաթիւրում մըն է, որ տեղի կ'ունենայ: Բոլոր ազգային վերելքներուն ննան, Յանաշխարհային Պատերազմն ետք սկսած արաբական յեղափոխութեան տարբեր հոսանքները լայն կերպով գրականութեան վրայ կը յենին ժողովուրդին մէջ մուտք գործելու եւ զանգուածները շարժի մղելու համար: Որպէս հետեւանք տեղի ունեցած է արաբական գրականութեան ահեղ զարգացում



մը: [34] Յիմա կարդացէք Արեւմուտքի մէջ ի՞նչ գիրք որ կ'ուզէք արդի Արաբներուն մասին, երբէք պիտի չգտնէք գրականութեան նշումն իսկ, ուր մնաց անոր ուսումնասիրութիւնը: Միջին Արեւելրով զբաղողներու մեծամասնութիւնը այսօր քաղաքական գիտութիւններու մասնագէտներ են, որոնց գիտութիւնը հիմնուած է կարգ մը կարծրատիպերու վրայ արաբական հասարակութեան կամ մահմետականութեան մասին, որոնք կարգախօսքերու ննան փոխանցուած են իրենց, ժթ. դարու արեւելագէտներէն: Նոր եզրարանութեամբ մը գինուած կը մօտենան իրականութեան. կը խօսուի արդիականացումի, ընտրանիներու, զարգացումի, կայունութեան մասին այնպէս ինչպէս թէ այդ տերմինները ունենային համատարած օրինաւորութիւն, բայց իրողութիւնը այն է որ ատոնք իրատորական պաստառ մը կը կազմէն, որ կը ծածկէ մասնագէտներուն խոր տգիտութիւնը իրենց առարկային վերաբերեալ: Արեւելագիտական նոր ժարգոնը զայտնագիտական դիսկուրս մըն է, որուն իմաստութիւնը չի կրնար հասկնալի դարձնել ինչ որ կը կատարուի այսօր օրինակ՝ Լիբանանի մէջ, կամ Խարայէլի կողմէ գրաւուած արաբական տարածքներուն վրայ, չի կրնար օգնել թափանցելու Միջին Արեւելքի ժողովուրդներու կեանքն ներս: Կարծ խօսքով, արեւելագիտութեան ներկայութիւնը կը փաստէ մէկ բան միայն. հետաքրքրութեան բացակայութիւնը դէպի արեւելեան գրականութիւնը, որպէս հասարակութեան մը զարգացումին մէկ էական քաղաքիչ: Կրնար շատ աւելի ճիշդ պատկեր մը քաղել արաբական աշխարհին մէջ տեղի ունեցածին մասին հինգ հատ ժամանակակից բանաստեղծութիւններ կարողալով, կամ վէպէր, խոհագորութիւններ, բան թէ Միջին Արեւելքի Ինստիտուտին, կամ Ռանդ Կորպորէշընին կողմէ հրատարակուած ուսումնասիրութիւններու ամբողջ գրադարանը²⁶, կամ որեւէ գիրք որ հրատարակուած է ասպարեզով արեւելագէտի մը կողմէ, որ Միջին Արեւելքի մասին կը դասաւանդէ Ամերիկայի արեւելագիտական բաժանմունքներն ներս: Բայց այդ երեւոյթը պիտի չզարմացնէ ձեզ, եթէ որեւէ բան գիտէք կամ գրականութեան մասին, կամ արեւելագիտութեան:

Եթէ արեւելագիտութիւնը հասկնաք որպէս Արեւելքի վերաբերեալ պատկերացումներու համակարգ մը, այն ատեն անմիջապէս յստակ կը դառնայ թէ ինչո՞ւ անոր պաշտօններէն մէկը պիտի ըլլար խուսափումը գրականութենէն: Այդ տեսակի համակարգերուն նպատակն է պատմութենէն ծածկել ուսումնասիրութեան առարկան հանդիսացող մարդկային էակը: Շէյլա Ռովբորամի նախադասութիւնը քաղքենի հասարակութեան մը մէջ կիներու ծակատագրին մասին կը պատշաճի նաեւ Արեւելքցիին²⁷: (Անշուշտ ցնցիչ են զուգահեռները որ կարելի է քաշել արեւելքցիներուն, սեւանորթներուն եւ կիներուն միջեւ): Օգտակար կը թուի յիշել Մարքսի արտաքերած նախադասութիւնը Լուի Նապոլեոնի մասին, 18 Brumaire հատորին մէջ: Յոն Մարքս կը խօսի Լուի Նապոլեոնի յաւակնութեան մասին, եր ան ինքզինքը կը նկատէր յետամնաց պատիկ գիւղացիներու ներկայացուցիչը: Մարքս քննիչաղով կ'ըստը հետեւեալը. «Չեն կրնար իրենք գիրենք ներկայացնել. պէտք ունին ներկայացուցիչի մը»: Այդ նախադասութիւնը գեղեցիկ կերպով կ'արտայայտէ արեւելագէտին կեցուածքը արեւելքցին նկատմամբ, միայն այն տարբերութեամբ որ արեւելքցին զոհն էր մեծատարած քաղաքական եւ նշակութային իրաւագրկումի մը, եւ ատկէ անդին նաեւ՝ զինուրական տիրապետութեան: Գրականութեան արտաքսումը հետեւաբար անխուսափելի էր:

Եթէ (որոշ չափով) ճիշդ է որ politica manent, ի՞նչ պէտք է խորհիլ այսօրուան գրաքնադատական դպրոցներու անզայտութեան մասին: Սովորաբար ուժով քաղաքական մտահոգութիւններ ու համակրութիւններ կը ցուցաբերեն, բայց կարծ է անոնց ամէն մէկուն կեանքի տեւողութիւնը, եւ սովորաբար կրակը կը հանգի [35] բանավիճային բախումներով: Այս կացութիւնը ինչպէս կարելի է հաշտեցնել քաղաքական գործունէութեան համար անհրաժեշտ տեւողութեան հետ:

Կասկած չկայ որ քաղաքական գործունէութիւնը եւ գրաքնադատական դպրոցները կը շնչեն տարբեր ժամանակացոյցներով, եթէ կարելի է այդպէս արտայայտուիլ: Մնաց որ քաղաքական խմբակ մը (կամ կուսակցութիւն մը) դատի մը զօրավիճ կը կանգնի եւ ինքն իրեն հաւատարիմ կը մնայ այդ ձեւով, բան մը որ գրական դպրոցները չեն ըներ այսօր: Զիրար դաշնակից նկատող քննադատներու միջեւ կապակցութիւնը շատ աւելի թոյլ է բան թէ կուսակցութեան կամ քաղաքական գործի նուիրուած խմբակի մը անդամներուն միջեւ, ու ձեր նշած տարբերութիւնը կեանքի տեւողութեան մասին ատոր հետեւանքն է

2008



գլխաւորաբար, եւ անմիջական կապ չունի քաղաքական դատի մը աւելի երկարատեւ ըլլալուն հետ: Քննադատը, նոյնիսկ երբ կ'անդամակցի գրական դպրոցի մը կամ հոսանքի մը, այսուհանդերձ իր ըրածը կը նկատէ անհատական կամ անհատականացած գործ մը, որ չունի համագործակցական բնոյք: Անշուշտ քննադատին համար երկրնտրանքի պատճառ է այս վիճակը, այս անյարիութիւնը ընդմէջ լայն իրավիճակի մը, որուն ինքը մէկ մասնիկը ըլլար, եւ իր մեկնաբանելու, ընդգգալու կարողութիւններուն յարաբերաբար առանձնացած կիրառումին: Դժուար է ատկէ դուրս ճամբայ մը գտնել եւ վստահ չեն որ ելք մը կայ:

Յարակից հարց մըն է այն տարողութիւնը որով քննադատութիւնը կրնայ համակարգայնացուիլ: Նշանագիտութեան նկատմամբ ներկայ յափշտակութեան պատճառներէն մէկը օրինակ այն է, որ վերլուծումի կանոնները երեւութաբար կախեալ չեն անհատէն, մէկնաբաններու խմբաւորումին սեփականութիւնն են: Կը յիշեն ինչպէս Ռուսական Պարթ տեղ մը կը խօսէր նշանագիտական հետազօտութեան իդէալին մասին, որպէս համագործակցական եւ անանձնական²⁸: Յամակարգային գրաքննադատութեան մէկ ուրիշ հարցը այն է, թէ քննադատին վերլուծումը վերջին հաշուով՝ նախատեսելի²⁹ է թէ ո՞չ: Կրնաք որպէս օրինակ վերցնել Սորթրոպ Ֆրայի ուսումնասիրութիւնը Դիբենսի մասին, եւ պարզապէս ըսել որ ան տիպականօրէն Ֆրայ-ական է³⁰: Բայց այդպիսի համակարգայնացումի փորձութիւններէն վեր ու անդին, վստահ եմ որ կայ հաճոյքի ու խաղի բաժին մը որեւէ քննադատական արարքի ետին: Քննադատը կրնայ օրինակ ինքն իր դէմ կամ իր իսկ կազմած համակարգին դէմ աշխատի, կամ թերեւս կամովին ու գիտակցաբար ազատագրուիլ իր նախսին ուղղութիւններէն, սովորութիւններէն, դաշնակցութիւններէն: Ռուսական Պարթ տեւաբար այդ ընելով յառաջացած է: Կը կասկածին որ ուրիշ քննադատներ պիտի ուղեին այդ մենաշնորհէն ձերբազատուիլ, նոյնիսկ եթէ դատապարտուած է սահմանափակ մնալու: Դպրոցներն ու համակարգերը յաճախ գոյութիւն ունին որպէս միջոցներ այդպիսի պարագաներէ պաշտպանուելու համար, եւ այդ է պատճառը որ ես խառնուածքով՝ հակառակ եմ համակարգի մը հետեւելու կամ դպրոցի մը պատկանելու գաղափարին: Կը խորիին որ գրաքննադատութիւնը ըստ էութեան յայտնաբերումի եւ ճանաչումի միտող գործունեութիւն մըն է, ո՞չ թէ զուտ հայեցութիւն կամ խիստ տեսաբանական պարտադրանք: Տեսաբանական արտադրանքներուն ծառայողները միշտ վտանգին տակն են չտեսնելու ինչ որ կայ իրենց աչքին առջեւը, կամ երբեք զգտնելու գորուածքին մէջ գոյացող բացայաց պատմական փաստը: Բայց [36] այս անբողջը թերեւս ալ ուրիշ ձեւ մըն է ըսելու որ բացառապէս շահեկան կը գտնեմ ըսենք՝ արխիւներուն մէջէն աւար քաղելը: Ըստեռած հաճոյքէն անդին՝ գլխաւոր նպաստը այն է, որ այդ ձեւով տեսաբանութիւնը կը զգայ ինքն իր վրայ նիւթական (կամ առնուազն արխիւային) իրականութեան դրոշնը: Ինչ որ փոխադարձաբար կը իրահրէ տեսաբանական գործունեութեան նրբերանգները:

Գրութեան մը մէջ ուր նկատի ունէր իր կրթանքին բնոյքը (*Anthropology: Its achievements and future*), քանի մը տարի առաջ Լելի-Ստրու կ'ըսէր որ ազգաբանութիւնը բրնութեան ժամանակաշրջանի մը արդիւնքն էր: «Մարդկային գոյապայմաններուն յատուկ իրողութիւնները աւելի առարկայականօրէն գնահատելու իր կարողութիւնը հետեւանքն է իրավիճակի մը, որուն մէջ մարդկութեան մէկ մասը միւսին կը մօտենայ որպէս թէ ան ըլլար պարզ իր մը... Այն երեւոյքը որ միայն արեւմտեան աշխարհը ծնունդ տուած է ազգաբանութեան որպէս կրթանք չի բացատրուիր իր մտային բացառիկ կարողութիւններով, այլ կու զայ այն իրողութենէն որ չնաշխարհիկ մշակոյթները, մեր կողմէ նկատի առնուած որպէս պարզ իրեր, կրնային ըստ այնմ ուսումնասիրուիլ»³⁰: Զեր ապագայ գիրքը արեւելագիտութեան մասին (կամ աւելի ծիշը արեւելագիտութեան առասպելին մասին) արդեօք փորձ մը չէ մատնանիշ ընելու Լելի-Ստրուին կողմէ վերլուծուած այդ «ազգաբանական կայսերապաշտութիւն»ը: Եւ եթէ այդպէս է, ի՞նչպէս կ'ընելք առասպելը առասպելագերծելու համար: Եւ ո՞ր տեսանկիւնն կը խօսիք (կամ աւելի ծիշը կը գրէք) դուք, Եղուարդ Սայիդ:

Արեւելագիտութիւնը առասպել-համակարգ մըն է, որ կը գործէ իրեն յատուկ առասպելա-տրամաբանութեամբ մը, հօեսորութեամբ մը, հաստատութիւններով: Գործիք մըն է Արեւելքի մասին հաստատումներ արտադրելու համար, եւ կարելի է զայն ուսումնասիրել պատմական եւ հաստատութենական գետնի վրայ որպէս ազգաբա-



նական կայսերապաշտութեան տեսակ մը: Գլխաւոր փաստարկը արեւելագիտութեան մասին այն է, թէ ան միմիայն գիտական կամ երեւակայական ձեւ մը չէ գրելու (ո՞ր ձեւը այդ է միայն), որ ապրէր ինքն իրեն կեանք մը, առանց ունենալու որեւէ նշանակութիւն ո՞չ մէկուն համար բացի արեւելագէտներէն: Այդպէս չէ իրականութիւնը: Կը յաւակնի գործել գիտական առարկայականութեամբ, եւ այսօր ան կատարեալ օրինակ մըն է հասկնալու համար թէ ինչպէս գիտութիւնն ու գրութիւնը կրնան ըսենք՝ սերիլ գրուածքն եւ բերուիլ աշխարհին - ուժի բանեցումով եւ քաղաքական բացարիկ հետեւանքներով: Այսօրուան Արեւելքը չի նմանիր Լեի-Ստրոսին ուսումնասիրած նախագրային ցեղախումբերուն, որոնք անհետացումի ճամբուն վրայ կը գտնուին: Աշխարհի մէկ տարածաշրջանն է, որ Արեւմտեան աշխարհին եւ նասնաւորաբար Միացեալ Նահանգներուն համար՝ ունի մեծ նշանակութիւն վարչաքաղաքական որոշումներու առումով: Ուսումնասիրուածը հետեւաբար գրութեանական ճանաչումի մը վարչական կիրարկումն է, անմիջական (եւ երբեմն՝ սրտաճնլիկ կերպով անմիջական) նպատակներու համար, քաղաքական բնոյրի: Իմ ուսումնասիրութեանս սահմաններն են մէկ կողմէ արեւելագիտութիւնը որպէս երեւակայական աշխարհագրութեան մը նախ-արդիական (ժմ. դարէն առաջ գոյացած) համակարգ, միւս կողմէ արեւելագիտութիւնը որպէս արդիական տրամասութիւն, որուն ժամանակակից նշանակութիւնը ի զօրու է այն նարզին մէջ, [37] զոր Հարոլդ Լասուել կը կոչէ «գիտութիւններու վարչականութիւն»ը³¹: Զիս հետաքրքրողը առաջինէն դէպի երկրորդը անցումի շարժընթացն է:

Ուսումնասիրութիւնս երեք գլխաւոր բաժիններ ունի: Առաջին բաժինը կը կոչուի «Արեւելագիտութեան տարողութիւնը» եւ կը փորձէ բնութագրել արեւելագիտութիւնը որպէս գաղափարներու համախմբում մը, որ Արեւմուտքի մէջ եղած է ի զօրու Շերողոտոսսէն ի վեր, եւ որ իր գագարնակէտին հասած է կրոների, Բալֆուրի, Կիսինգերի եւ այլ քաղաքական գործիչներու հուետորութեամբ: Որովհետեւ հասարակաց տարր մը կայ այդ գաղափարներուն մէջ, որոնք կը կրչուին արեւելեան բռնատիրութիւն, արեւելեան զգայապաշտութիւն, արեւելեան արտադրական եղանակներ, արեւելեան չքեղութիւն: Կեդրոնացումն այդ տրամախոհութեան վրայ է, որով Արեւելքը իմ բառերով՝ կը ներկայացուէր Արեւմուտքի արեւելագիտական բեմին վրայ, եւ որուն համաձայն մինչեւ ժմ. դար՝ Մահմետականութիւնը արեւելեան գլխաւոր յատկանիշն էր: Այդ շրջանին Արեւելքի մասին գիտութիւնը կրնաք գտնել օրինակ Դ'Երրըլոյի *Bibliothèque orientale*ին մէջ³², Աստուածային Կատակերգութեան մէջ, որոց միջնադարեան ժամանակագրութիւններու մէջ, եւ եկեղեցականներուն կողմէ (Պետրոս Շնորհալիի, Գիրեր ող Նոժանի, Լուլերի³³) բազմազան փորձերուն մէջ Մահմետականութեան եւ Մոհամմետի հարցերուն հետ գլուխ ելլելու: Կրօնական բնոյր ունեցող այդ գործերը էապէս կը տարբերին առաջին արդիական եւ ցեղանետ արեւելագիտական ծրագիրներէն, որոնք կը սկսին նոնսի եւ Անքըտիլի լեզուարանական յայտնագործութիւններէն ետք: Երկու ծրագիրները որոնց վրայ կը կեդրոնանամ՝ նապուկնի արշաւն է (իր գիտական թեւով, Եգիպտական հնստիտուտ եւ *Description de l'Egypte*), եւ դը Լեսեպսի Սուլեզի Զրանցքի վարչութիւնը: Երկրորդ բաժնին մէջ՝ «Արեւելագիտական կառոյցներ եւ վերակառուցումներ», կ'ուսումնասիրեմ ժմ. դարու Մերձաւոր Արեւելքին անդրադարձող գլխաւոր գրողները՝ բանասէր, պատմագէտ ու բանաստեղծ: Մեկնակէտս հու՝ Պարոն Դասիկի *Tableau de l'érudition française*ն է³⁴: Ատկէ կ'անցնիմ Յիւգոյին, Կեօթին, Որնանին, Սասիին, Շատորբիանին, Ներվալին, Լամարտինին, Լեյնին, Պըրտոնին, Ֆլուպերին, Դոֆտիին, եւ ուրիշներու³⁵: Բոլոր այս գրողներուն մօտ ինչ որ աշշեցուցիչ է, գիտութեան, պատկերակազմութեան եւ բնանիւթական շտեմարանն է, որնէ բոլորը կը քաղեն իրենց տուեալները, եւ այն ծեւերը որոցմով ամէն մէկը իր եղանակով կը փորձէր հակաշիռի տակ պահել Արեւելքը պատշաճ միջոցներով՝ համապատկեր, ծաղկաքաղ, գրադարան, դասարան, եւ այլն: Այդ միջոցներն ալ իրենց կարգին միասնաբար գործադրուած են տարբեր կրօնական, դաստիարակչական եւ դիւանագիտական հաստատութիւններուն կողմէ, որոնք կ'աշխատէին Արեւելքի մէջ եւ Արեւելքին համար: Այնպէս որ արեւելագիտական երեւակայութեան կառոյցը ուղղակի հեռաձգուած է գաղութատիրական վարչակարգին վրայ, որ իր կարգին՝ կը գործէ Արեւելքի բնակիչներուն պարտադրուած կանոններու, արտաքսումներու, արգիլումներու համակարգով մը: Այս երեք մակարդակները իրար կ'ամբողջացնեն եւ իրարու կ'աջակցին, իրարմով կը վաւերականացուին: Վերջապէս երրորդ բաժինը՝ «Արդի արեւելագիտութիւն», [38] ցոյց կու տայ թէ ինչպէս բրիտանական եւ ֆրանսական արեւելագիտութեան դպրոցները

2008



իրենց գիտական ժառանգութիւնը եւ իրենց գործօն թեքնիքները փոխանցած են ամերիկեան դպրոցին, եւ ինչպէս ասոր հաւատալիքները իրենց կարգին կը ցոլանան թէ՝ կառավարական նրանակաբաշխումի ու համալսարանական դաստիարակութեան կառոյցներէն ներս, թէ՝ ամերիկեան արտաքին քաղաքականութիւնը որոշող շրջանակներէն ներս:

Ուսումնասիրութեան մէկ ծայրէն միւսը, փորձած եմ ցոյց տալ թէ ինչպէս արեւելագիտութիւնը ճկուն համակարգ մըն է, որ առանց էապէս փոխուելու՝ կրցած է մարսել այնպիսի «ուժեղ» փիլիսոփայութիւններ, ինչպիսին են՝ դրապաշտութիւնը, մարքսականութիւնը, դարտիխանականութիւնը, հոգեվերլուծումը, սպենգլերութիւնը, եւ այլն³⁶: Կիճարկողական նպատակս ցոյց տալ է, թէ արեւելագիտութիւնը աշխարհին մէջ ըլլալու ձեւ մըն էր, եւ է, ձեւ մը հաստատումներ յառաջացնելու պէտք եղած հեղինակութեամբ, եւ - ինչ որ էական է - կորանքի վերածուած գաղափարաբանական ներկայութեան եղանակ մը: Այս ամբողջը կը թոյլատրէ որ զբաղին գիտութեան եւ երեւակայութեան, քաղաքականութեան եւ գրականութեան, ազատութեան եւ տիրապետութեան հարցերով, որոնք կը ծագին Առաջին եւ Երրորդ աշխարհներու փոխարաբերութիւններուն մէջ:

Ահաւասիկ ինչպէս կը կատարեն այդ «առասպելագերծում»ը որուն մասին կը խօսէիք: Այդ տպաւորութիւնն ունիմ, որ չափազանց շահագրգռական դիտանկիւն մը որդեգրած են: Արեւելքցի մըն են, որ կը պատասխանէ արեւելագէտներուն, անոնց՝ որոնք այնքան երկար ժամանակ բարգաւաճեցան իր լրութեան վրայ հիմնուելով: Բայց կը գրեմ նաեւ իրենց դէն, քանի որ իրենց կորանքին կառոյցը կը քանդեն, ցոյց տալով անոր գերպատմական, հաստատութենական, հակա-փաստական եւ գաղափարաբանական խեղարիւրումները: Եւ վերջապէս այն տպաւորութիւնն ունիմ, որ կը գրեմ համաքաղացիներուս եւ գործակիցներուս համար, նիւթերու մասին որոնք կը մտահոգեն մեզ բոլորս հաւասարապէս:

Թ ա ն օ թ ա գ ր ո ւ թ ի ւ ն ա ն ե ր

- 1 Եջարիւերը կը հանճառապիսանեն սոյն հարցազոյցին գիրքով իրատարակութեան էջերու համարակայութեան: Տրուած են բաղդատութիւնը դիրացնելու նպատակով: *Ste'm Power, Politics, and Culture. Interviews with Edward Said* [Տիրութիւն, քաղաքականութիւն եւ մշակոյք: Հարցազոյցներ Եղուարդ Սայհիդ հետ], պատրաստուած եւ յառաջարանով մը Գաորի Վիսուանարմի կողմէ, Vintage Books, Նիւ Երլկ, 2001)
- 2 Alfred Tennyson (1809-1892): Ժմ. դարու անգլիացի ամենէն ծանօթ բանաստեղծներէն մէկը, թագաւորական արքունիքի պաշտօնական բանաստեղծը 1850էն ետք:
- 3 Barrington Moore (1913-2005): Ամերիկացի ընկերաբան, որուն ամենէն հոչակաւոր գիրքը կը մնայ 1966ին սպուած *Social Origins of Dictatorship and Democracy: Lord and Peasant in the Making of the Modern World* [Բռնատիրութեան եւ ժողովրդավարութեան ընկերային ժննդարանութիւնը. իշխանը եւ գեղջուկը արդի աշխարհի կառուցումին մէջ] (1966): Գիրքը կ'առաջարկէ քաղաքական վարչակարգերու բաղդատական ծագումաբանութիւն մը եւ հասարակական գիտութիւններու մարդին մէջ կը նկատուի համեմատական մօտեցումին հիմնադրական աշխատասիրութիւններէն մէկը: Franz Fanon (1925-1961) աշխարհահոշակ մտածող մըն է: Մարտինիք ծնած, հոգերոյժ դարձած, ապրած է Ալճերիա մինչեւ 1957 եւ եղած է Ալճերացիներու ազատարական պայքարի ներկայացուցիչներէն մէկը: Եղուարդ Սայհիդ յաճախ կը յղուի իրեն, մանաւանդ *Culture and Imperialism* [Մշակոյք եւ կայսերապաշտութիւն] հասորին մէջ (1992): Իր կարեւոր գործերէն են *Peau noire, masques blancs* [Աև մորք, սպիտակ դիմակներ] 1952ին, *Les Damnés de la terre* [Երկրագունդի անհծեալները] 1962ին: Այս վերջին գիրքը, ուր կը բացատրուի թէ զադութիրական վիճակն ազատագրումը չի կրնար կատարուիլ առանց բռնութեան ու բրտութեան, լոյս տեսած է ժան-Պոլ Սարտրի յառաջարանով:
- 4 Robert W. Southern, *Western Views of Islam in the Middle Ages* [Մահմետականութեան մասին արեւմտեան պատկերացումներ Միջնադարեան ժամանակաշրջանին], Harvard Univ. Press, 1962:
- 5 Այս բոլոր անունները անշուշտ կ'երեւին *Orientalism* հատորին մէջ, երբեմն՝ հատուածական ձեւով, երբեմն գրեթէ մենագրական բնոյթի ուսումնասիրութիւններով: Մենագրականի բնոյթ ունին մանաւանդ առաջին չորս անուններուն նույիրուած էջերը: Gustave Flaubert (1821-1880) Յունաստան եւ Եգիպտոս ճամբորդած է 1849ին, ու վերադարձին իրատարակած է իր *Voyage en*



- Orient* [ճամբրոդութիւն դէպի Արեւելք], լոյս տեսած 1851ին: Նոյն տարին լոյս տեսած է Ներվալ (Gérard de Nerval, 1808-1855) *Voyage en Orient* (գլխաւորաբար Եգիպտոս և Սուրիա, 1842ին): Այս երկուքը Արեւելք ճամբրորդած ֆրանսացի գրողերու փաղանգին մաս կը կազմեն, արեւելագէտներ չին: Մինչդեռ Բըրտոն եւ Լեյն իրենց հատորներով ծառայած են արեւելագիտութեան: Edward William Lane (1801-1876) արաբերէն սորված էր: Եգիպտոսի մէջ իր առաջին կեցութիւնը տերի կ'ունենայ 1825-1828 թուականներուն: Վերադարձին կը հրատարակէ *Manners and Customs of the Modern Egyptians* [Արդի Եգիպտացիներու կենցաղն ու բարքերը], 1836ին: Աւելի ուշ կը քարգմանէ Հազար ու մէկ գիշերները (1838-1840), որուն ծաւալուն ծանօթութիւնները կը հրատարակուին իր մահեն ենք, 1883ին: Sir Richard Burton (1821-1890) արեւելեան լեզուները սորված է Յանշաստան գտնուած շրջանին: Առաջին Ելուացիներէն մէկն է որ ծպուումով հասած է Մերքա: Իր ճամբրութեան գեկոյցը հրատարակած է երեք հատորով (1855-56) *Personal Narrative of a Pilgrimage to El-Medinah and Meccah* [Անձնական գեկոյց ուխտագութեան մը դէպի Էլ-Մեդինա եւ Մերքա] Վերնագրով: Ինըն ալ հրատարակած է Հազար ու մէկ գիշերներու քարգմանութիւն մը, 16 հատորով (1885-1886):
- 6 Ernest Renan (1823-1892) Լեյն եւ Բըրտոնի ժամանակակիցն է, բայց ինքը ճամբրորդ մը չէ եղած, այն ճամբրոներէն որոնք տեղույն վրայ կը քաղին տպաւորութիւններ ու կը հրատարակին ժամանապարհորդական գեկոյցներ: Սեմական լեզուներու ամենէն ծանօթ մասնագէտն էր իր ժամանակին Եւրոպայի մէջ: Յօշակաւոր են իր *Histoire générale et système comparé des langues sémitiques* [Սեմական լեզուներու ընդհանուր պատմութիւն եւ համենատական համակարգ] (1855) եւ իր *Etudes d'histoire religieuse* [Կրօնական պատմութեան ուսումնասիրութիւններ] (1857), ինչպէս իր 1863ի Յիսուսի կեանքը: *Orientalism* հատորին մէջ Եղուարդ Սայիդ իրեն նուիրած է կարեւոր էղեր, որոնք նոր քափ մը ընձեռած են Ունանի գործին նկատմամբ ընդհանուր հետաքրքրութեան (տե՛ս մասնաւորաբար էջ 130-148):
 - 7 Joseph Arthur Comte de Gobineau (1816-1882) ֆրանսացի վիպապաշտ գրող մըն է, որ իր հոչակը կը պարտի մէծ մասամբ իր քազմահատոր խոհագրութեան *Essai sur l'inégalité des races humaines* [Փորձ մարդկային ցեղերու անհաւասարութեան մասին], 1853-1855ին լոյս տեսած, ուր կը պատմուի մարդկային պատմութեան դիւցազներգութիւնը, ցեղային մօտեցումով բայց ո՛չ թէ ցեղապաշտ: Պարսկերէնի իր գիտութիւնը եւ դիւնագէտի իր աստանդական կեանքը զինք կը դասեն ժամանապարհորդ արեւելագէտներու փաղանգին մէջ:
 - 8 «Յանենատական մարմնազննութեան» [comparative anatomy] ներկայութիւնը կրնայ տարօրինակ բուիլ այս ցանկին մէջ, բայց Սայիդ հոյս ի մտի ունի Սիշել Ֆուկոյի *Les Mots et les choses* եւ թժկութեան պատմութեան մասին գիրքերը, որոնց համաձայն կառուցային համանանութիւն մը կայ ժմ. դարու սկիզբը ծագած նոր գիտութիւններուն [եւ աննոց առարկաներուն] միջեւ:
 - 9 Եգիպտոսի արշակն (1798-1801) Նապոլեոն հետու տարած էր մօտ հարիւր յիսուն գիտուններ, տարբեր մասնագիտութիւններով: Վերադարձին, պետական պատուերով, այդ գիտուններու կատարած աշխատանքին արդինքը եղաւ *Description de l'Egypte ou Recueil des observations et des recherches qui ont été faites en Egypte pendant l'expédition de l'armée française* [Եգիպտոսի նկարգրութիւն կամ Ֆրանսական բանակի արշաւանքի օրերուն Եգիպտոսի մէջ կատարուած դիտողութիւններուն եւ հետազոտութիւններուն հաւաքածոյ], որ լոյս տեսաւ 20 հատորով, 1809ին 1822: Արդի արեւելագիտութեան պաշտօնական հիմքն է այս ծերնարկութիւնը:
 - 10 Antoine Isaac Sylvestre de Sacy (1758-1838) Եւրոպայի ամենէն հօշակաւոր արեւելագէտներէն մէկը եղած է իր ժամանակին: Պարսկերէնի եւ արաբերէնի դասասու էր Ֆրանսացի բարձրագոյն հաստատութիւններուն մէջ: Դին սերունդի բանասիրութեան ներկայացուցիչ մըն էր, այն իմաստով որ համենատական լեզուարանութեամբ չէ զբաղած երբեք: Եղուարդ Սայիդ ունի ի մտի Սիլվեստր դը Սասիի գործերէն մէկը, որ կը կոչուի *Chrestomathie arabe ou Extraits de divers écrivains arabes, tant en prose qu'en vers, à l'usage des élèves de l'Ecole spéciale des langues Orientales vivantes* [Արաբական ծառկաքաղ, կամ զանազան արաբ գրողներէ հասուածներ, արձակ ինչպէս չափածոյ, Արեւելեան կենդանի լեզուներու Դպրոցի աշակերտութեան պէտքերուն համար], որ երեք հատորով լոյս տեսած է 1806ին:
 - 11 Սայիդ նկատի ունի *L'archéologie du savoir* [ճանաչչումի հնախօսութիւնը] գիրքին մէջ զարգացած Սիշել Ֆուկոյի տեսութիւնը «արխիւ» եւ «կրոռոյ» շուրջ: Նոյն շրջանին հարցազոյոյից մը մէջ Ֆուկոյ կ'ըսէր հետեւեալը: «J'appellerai archive [...] le jeu des règles qui déterminent dans une culture l'apparition et la disparition des énoncés, leur rémanence et leur effacement, leur existence paradoxale d'événements et de choses. Analyser les faits de discours dans l'élément général de l'archive, c'est les considérer non point comme documents [...] mais comme monuments.» [Պիտի կոչեմ արխիւ... այն կանոններու խաղը, որ մշակոյթի մը մէջ կ'որոշադրեն ասոյթներու յայսնութիւնն ու անհետացումը, անոնց մնացութիւնն ու ջնջումը, անոնց յարակարծական գոյութիւնը որպէս դէպի եւ որպէս իր: Տրամասական իրողութիւնները վերլուծել արխիւի ընդհանուր տարրին մէջ կը նշանակի զանոնք նկատի առնել ո՛չ թէ որպէս վկայութիւններ, այլ որպէս կոթողներ], տե՛ս *Dits et écrits*, հատոր Ա, 1994, էջ 708: Անշուշտ այս բացատրութիւնն ալ իր կարգին կը կարուի յատուկ լուսաբանութեան մը: Սայիդ լաւ գիտէր Ֆուկոյի ճանաչչումի հնախօսութիւնը, որուն դրոյթներու ներկայացումին եւ բնադատութեան ամբողջ գլուխ մը յատկացուցած է իր 1975ի *Beginnings* [Ակզրնաւորութիւններ] գիրքին մէջ:
 - 12 Կարծեմ յստակ է, որ հարցազոյոյը վարողի բերմին մէջ «բանասիրութիւն» բառը հոյս համահաւասար է «համենատական լեզուարանութեան»:
 - 13 Isaiah Berlin (1909-1997), *Vico and Herder. Two Studies in the History of Ideas*, լոյս տեսած Նիւ

2008



Եորկ 1976ին, ուրեմն ճիշդ այն տարին երբ Սայիդ Շերկայ հարցազրոյցը կու տար: 2000 թուականին լոյս տեսա *Three Critics of the Enlightenment: Vico, Hamann, Herder* [Լուսաւորութեան երեք քննադատներ՝ Վիկոյ, Համանն, Հերդը] (Princeton Univ. Press), որուն մեջ վերատպուած են հեղինակին իին ուսումնասիրութիւնները:

- 14 Abraham Hyacinthe Anquetil-Duperron (1731-1805) առաջին եւրոպացի գիտնականն է, որ հնդկական լեզուները սորված է տեղույն լիայ: Շոպրնհանուլը Հնդկաստանի մասին իր գիտութիւնը Անգլիա-Դիւտերոնի թարգմանութիւններն քաղած էր: Սայիդ կ'ակնարկէ Zend Avesta, ouvrage de Zoroastre contenant les idées religieuses et théologiques de ce législateur, les cérémonies du culte religieux et plusieurs traités relatifs à l'histoire ancienne des Perses [Զրադաշտի Ձենտ Աւետան, որ կը պարունակէ այս օրէնտակին կրօնական եւ աստուածաբանական գաղափարները, պաշտամունքի արարողութիւնները եւ զանազան տրակտուատներ Պարսիկներու իին պատմութեան վերաբերեալ հատորին, լոյս տեսած Փարիզ, 1771ին, որ սակայն չէր պարունակէր Զրադաշտականներու սրբազն գիրքին ամբողջութիւնը]:
- 15 Ֆրիդրիխ Շլեֆիլի մասին տես յաջորդ ծանօթութիւնը: Իր երայրը՝ Արգուստ-Վիլհելմ Շլեֆիլ (1767-1845) սանսկրիտ լեզուն սորված է իր ենթօրմէն ետք բայ ինքն է որ այդ ճիւղին առաջին մեծ մասնագէտներն մէկը դարձած է Գերմանիոյ մէջ, հրամցնելով լայնածաւալ թարգմանութիւններ: Իր եղբօրի հետ եղած է վիպապաշտ գաղափարներուն առաջին տարածողը Եւրոպայի մէջ, նախ իր դասախոսութիւններով, յետոյ Մադամ որ Սրայի հետ իր բարեկամութեամբ: - Վիլհելմ ֆոն Շումբուրդ գերմանական վիպապաշտութեան խոշոր դէմքերն մէկն է: Դիւանագէտ, քաղաքական գործիչ, Լուսաւորութեան նախարար, ինքը հիմնած է համալսարանական համակարգը Պրուսիոյ մէջ: Մինչեւ այսօր կը կարդացուին լեզուի փիլիսոփայութեան նուիրուած իր գործերը:
- 16 Խօսուքը Ֆրիդրիխ Շլեֆիլի (1772-1829) *Über die Sprache und Weisheit der Indier* [Յաղագու Շնորհիկներու լեզուին եւ իմաստութեան] գիրքին մասին է: Շլեֆիլ 1802-1804 տարիներուն Փարիզի մէջ սորված է սանսկրիտը, անգլիացի Համիլտոնն, որ այդ շոշանին՝ Հնդկաստանն վերաբարձի ճամբուն վրայ ստիպուած էր Փարիզ ապրելու, քանի որ արգելափակումի պատճառով՝ չէր կրնար ձգել երկիրը: Շլեֆիլին գիրքը համեմատական լեզուարանութեան հիմնադրական հրատարակութիւնն է: Զուտ լեզուարանական գետնի վրայ՝ Շլեֆիլ անշուշտ հոն կը վերաբարձրէր իր վարպետներն սորվածը: Զինքը հետաքրքրողը հնդկական քաղաքակրթութեան հնութիւնն էր: Զայն կը նկատէր եւրոպական մշակոյթի օրդանը: Վիպապաշտ դպրոցին գործը պիտի ըլլար այդ ծագումին վերադառնալ, զայն արթնցնել, նոր բափ մը տալ անոր: Ի դէմ՝ Շլեֆիլի գիրքը առաջինն է նաեւ, որուն մէջ հայերէնի մասին կը խօսուի որպէս հնդեւրոպական լեզու: Շլեֆիլի գիրքը կարեւոր է նաեւ ուրիշ պատճառներով, քանի որ անոր փիլիսոփայական մասը յարձակում մը կը պարունակէ Շելինի հիեապաշտ փիլիսոփայութեան դէմ եւ իրականութեան մէջ՝ ամբողջ հիեապաշտ դպրոցին դէմ, որուն ինքը՝ Շլեֆիլ համոզուած շատագումներն էր ատէկ դեռ քանի մը տարի առաջ: Այս գիրքին լեզուարանական բաժնին վրայ հիմնուած են Միշել Ֆուկոյի *Les Mots et les choses* հաստորին վերյուծումները, հոն ուր հարցը նկարագրել է արդի «բանափրութեան» ծագումնային պահը: *Orientalism*ի մէջ, Սայիդ շատ հակիրծ ակնարկներ ունի միայն այս գիրքին, ու զինքը հետաքրքրողը լեզուի յատկամիշներուն վրայ հիմնուած ցեղային զատորումն է (տես օրինակ՝ էջ 98, 115, 137):
- 17 Franz Bopp (1791-1867) կը նկատուի հնդեւրոպական լեզուներու համեմատական ուսումնասիրութեան հիմնադիրը, իր 1816ի աշխատանքով՝ *Über das Konjugationssystem der Sanskritsprache in Vergleichung mit jenem der griechischen, lateinischen, persischen und germanischen Sprache* [Յաղագու սանսկրիտ լեզուի լօրդական համակարգին, համեմատութեամբ յունարէնի, լատիներէնի, պարսկերէնի եւ գերմաներէնի]: Գերմաներէնը մինչեւ այսօր indogermainisch բառը կը գործածէ որպէս համազօր մէր «հնդեւրոպական»ին:
- 18 Léon Poliakov (1910-1997) ֆրանսացի պատմագէտ մըն էր, որ պատերազմէն ետք՝ իր կեանքը նուիրած է հակասեմական ցեղապաշտութեան պատմութիւնը գորելու: 1955էն մինչեւ 1977, չորս հատորով գրած է Հակասեմականութեան պատմութիւն մը: Սայիդի ակնարկած գիրքը լոյս տեսսած է 1971ին, *Le Mythe aryen. Essai sur les sources du racisme et de l'antisémitisme* [Արիական առասպելը: Ցեղապաշտութեան եւ հակասեմականութեան արմատներուն մասին խոհագութիւն]:
- 19 Հարցազրոյցը վարողը հոս անշուշտ կը յդուի Շեքսպիրի *Othello*իկը թատերգութեան, որուն դեռակատարներն մէկը՝ Կալիբանը յաճախ դիտուած է որպէս զաղութափական յարաբերութեան ենթակուած քնիկի պատկերը: Ակաւասիկ ինչ կ'ըս Միրանդան Կալիբանին. “I pitied thee, / Took pains to make thee speak, taught thee each hour / One thing or other. When thou didst not, savage, / Know thine own meaning, but wouldest gabble like / A thing most brutish, I endowed thy purposes / With words that made them known” (354-59). «Սեղօցայ թեզի, ծիգ բափեցի որ խօսիս, ամեն վայրկեան բան մը սորվեցուի: Երբ դուն, վայրենի, քու հակ ըսել ուզած չէիր գիտեր, այլ կը թրովկիր, անտաշ իրի մը ննան, քու նպատակներդ օժտեցի բառերով, որոնց միջոցաւ ծանօր դարձան թեզի»:
- 20 Aimé Césaire (1913-2008), մարտինիքի սեւամորթ, որ ֆրանսացի եւ ֆրանսախօս բանաստեղծ մըն էր ու քաղաքական գործիչ մը (Երեսփոխան Ֆրանսայի խորհրդարանը 1945էն մինչեւ 1993): Գաղութատիրութեան դէմ գրած ու պայքարած է: Եղած է Ֆրանց Ֆանոնի ուսուցիչը: Իր բանատեղօն գործերն պէտք է նշել հանրածանօք *Cahiers d'un retour au pays natal* [Հայրենի երկիր վերադարձի մը տետրակաները] (1939), իսկ իր խոհագութիւններէն՝ նոյնքան հռչակաւր



Discours sur le colonialisme [Խօսք գաղութատիրութեան մասին] (1950):

- 21 Renée Balibar, *Dominique Laporte: Le Français national. Politique et pratiques de la langue nationale sous la Révolution française* [Ազգային ֆրանսերէնը: Ազգային լեզուի քաղաքականութիւն եւ կիրառումներ ֆրանսական Յեղափոխութեան շրջանին], Փարիզ, 1974: Jean-Louis Calvet, *Linguistique et colonialisme: petit traité de glottophagie* [Լեզուաբանութիւն եւ գաղութատիրութիւն]: Վիրոց տրակտատ լեզուակեռութեան մասին], լոյս տեսած է նոյն տարին, 1974ին: Կայ Վերջին վերահրատարակութիւն մը, 2002 թուականին: Գիրքը ցոյց կու տայ, թէ ինչպէս գաղութատիրութիւնը ունի պարտադրաբար լեզուական ճնշումի քաղաքականութիւն մը, ենթադրաբար գիտական մօտեցումներուն ետին ծուարած, երեմն ալ՝ բացայսու:- Gillian Sankoff լեզուաբանութեան դասասու էր Պենսիլվանիայի համալսարանը: Կ'ենթարին որ Սայնիին նշան յոդուածները անոնք են որոնք են հեղինակին կողմէ 1980ին հաւաքուեցան *Social Life of Language* [Լեզուի ընկերային կեանքը] հասորին մէջ:
- 22 Կ'ենթարին որ Սայնիի ակնարկը կ'երայ *Marcel Cohen* (1884-1974) ֆրանսացի լեզուաբանին, որ Ամստուան Մելիքին հետ գրքակցութեամբ 1924էն մինչեւ 1952 հրատարակած է *Les Langues du monde* [Աշխարհի լեզուները] շարքը: Թերեւս կարդացած էր 1956ի գիրքը *Pour une sociologie du langage* [Ի նպաստ լեզուի ընկերաբանութեան մը]:- Henri Lefebvre (1901-1991) մարքսական ներշնչումով աշխատող ընկերաբան մըն էր, որ ունեցած է լայնածավալ ազդեցութիւն մը մանաւանդ վարսունական քուականներուն: Ունի երեք հասորով մեծակառող աշխատասիրութիւն մը՝ *Critique de la vie quotidienne* [Առօրեայ կեանքի քննադատութիւն], որուն առաջին հատորը լոյս տեսած էր 1947ին եւ երրորդը լոյս տեսաւ 1981ին:
- 23 Richard Blackmur (1904-1965) ամերիկացի բանաստեղծ ու գրական քննադատ մըն էր, որ 1940էն ետք դասաւանդած է Պրինստոնի համալսարանը:
- 24 «Անդրտրամասական»ը հոս կը թարգմանէ անգլերէն «transdiscursive» բառը: Այդ արտայայտութեան մէջ, դիսկուրսը համազօր է «փակ համակարգ»ի եւ ըսուած այն է, որ Ֆրեյսի և Մարքսի մօտ կային տրամասական համակարգերը զանցելու համար անհրաժեշտ տուեալներն ու միջոցները:
- 25 Edgar Quinet (1803-1875), ֆրանսացի գրող ու փիլիսոփայ, Յեղորդը առաջին թարգմանիչը ֆրանսերենով, գերմանական վիպապաշտներուն արձագանքած է իր գործերուն մէջ: Յեղինակն է ի միջի այլոց *Du Génie des religions* [Կրօնքներու հանճարին մասին] գիրքին [1842], որ «արեւելեան վերածնունդ»ի վիպապաշտ գաղափարին զատագովութիւնն է: Սայնի կը մէջբերէ այդ գիրքէն առնուած կիսէին խօսքը՝ «Ասիս ունի իր մարգարեները, Երուպան՝ իր գիտունները» [Orientalism, էջ 79]:
- 26 Middle East Institute և Rand Corporation հետազօտական կազմակերպութիւններ են, երկուքն ալ արտահամալսարանական (առաջինը՝ Վաշինգտոն, երկրորդը՝ Կայփորնիա), որոնց նպատակն է զեկոյցներ ներկայացնել օգնելու համար քաղաքական որոշումի շարժմանութեան մէջ՝ ազդելու համար ամերիկեան քաղաքականութեան վրայ: Երկու կազմակերպութիւններն ալ յատակ ու բացայաց կերպով՝ դիրք բռնած են Միջին Արեւելքի վերիվայումներուն վերաբրնձար: Եղուարդ Սայնիի բարկութիւնը անոնց դէմ զուտ քաղաքական դրդապատճառներ ունի ներկայ պարագային: Այսօր, երեսուն տարի ետքը, կացութիւնը այդ առումով չէ բարեկալուած:
- 27 Sheila Rowbotham (ծնած 1943ին), ֆեմինիստ հեղինակ մըն է, որ մինչեւ վերջերս՝ Սանըստըրի համալսարանը կը դասաւանդէր: Զանրածանօթ է *Beyond the Fragments* հատորը, լոյս տեսած 1979ին, որուն հեղինակներն մէկն է Շեյլ Ուլվորամ: Գլխաւոր դրոյթը հոս այն էր՝ որ յառաջացած երկիրներուն մէջ չկայ ընկերվարութիւն առանց նկատի առնելու կիներու ազատագրումի պայքարը:
- 28 Roland Barthes (1915-1980), ֆրանսացի գրաքննադատ, գրականագէտ եւ նշանաբան, հոչական դարձաւ իր *Le Degré zéro de l'écriture* [Գործեան գերօ մակարդակը] գիրքով 1953ին, ու «Նոր քննադատութիւն» կոչուած դպրոցին հիմնադիրներն էր նկատուի: Վաթունական քուականներու վերջաւորութեան լեզուաբանական նշանաբանութեան հետազօտութիւնները իւրացուց, զանոնք կիրարկելու համար գրական արտադրութիւններուն, ծեւապաշտ մօտեցումին տալով նոր թափ մը: 1977էն մինչեւ իր մահը Collège de France-ի մէջ (ֆրանսայի բարձրագոյն հետազօտական հաստատութիւնը) «Նշանաբանութեան» ամպինին հիմնադիրն ու պատասխանատուն էր, հակառակ անոր որ այդ շրջանին արդէն իսկ սկսած է հեռանալ զուտ կառուցապաշտ վերլուծումի ծեւերն ու կիրարկել աւելի լայն չափանիշներով գրաքննադատութիւն մը:
- 29 Northrop Frye (1912-1991), կանադացի գրաքննադատ ու համալսարանի դասասու մըն էր, որուն գործը մէծ ազդեցութիւն ունեցած է իր ժամանակակիցներուն վրայ անգլիախոս աշխարհին մէջ, որպէս «նոր քննադատութեան» մը հիմնադրութիւն: Իր ամենածանօթ գործերն մէկն է *Anatomy of Criticism* [Քննադատութեան մարմնագննութիւն] [1957], ուր կ'ուզէ գրաքննադատութեան հիմքերը դնել որպէս առանձին կրթանք ու գիտութիւն: Դիրենիսի մասին իր ուսումնասիրութիւնը մատչելի է այսօր *Collected Works*ի գործերու ժողովածուու 17րդ հատորին մէջ:
- 30 Claude Lévi-Straussի նշեալ հակիրծ յօդուածը լոյս տեսած էր 1966ին *Current Anthropology* հանդէսին մէջ (Ե. տարի, թիւ 2):
- 31 Harold Lasswell (1902-1978), քաղաքական գիտութիւններու մասնագէտ, որ կը պատկանէր Չիկագոյի հոչականը եւ չափազանց ազդեցիկ ընկերաբանական դպրոցին: Իր գլխաւոր հարցերն մէկը եղած է ցոյց տալ քաղաքական քարոզչութեան կարեւորութիւնը եւ նոյնիսկ՝ անհրաժեշտ:


2008



42


տութիւնը ժողովրդավար խուած վարչակարգերուն մէջ:

- 32 Barthélémy d'Herbelot (1625-1695) ժ. դարու ֆրանսայի արեւելագէտ մըն էր, Լուսովկոս ԺՊ.ի մօս արեւելեան լեզուներու քարտուղարը ու թարգմանիչը: 1692ին նշանակուած է Collège de Franceի անդամ, որպէս ասորերէնի դասասուու: Իր *Bibliothèque orientale, ou Dictionnaire universel contenant tout ce qui fait connoître les peuples de l'Orient* [Արեւելեան գրադարան, կամ լի-ակատար բառարան որ կը պարունակէ ամէն ինչ Արեւելքի ժողովուրդները ճանչնալու համար] գիրքը, որ քանի մը անգամ վերատպուած է իր կենդանութեան (6 հատորով հրատարակութիւն մը կայ, Փարիզ, 1781ին):
- 33 Pierre le Vénérable (1094-1156) Կլիմիի Թ. արքահայրը եղած է, ու ԺԲ. դարու վերածնունդին մէծ դէմքերէն մէկը: Ինըն է որ Քուրանը արաբերէն լատիներէն թարգմանել տուած է, ոչ թէ անոր արժեքը գնահատելու այլ՝ զայն յարձակումի թիրախն դարձնելու նպատակով: Guibert de Nogent (1055-1125) առաջին խաչակրութեան ժամանակագիրներէն է:
- 34 Bon Joseph Baron Dacier (1742-1833) բանասէր ու պատմագէտ մըն էր, 1799էն սկսեալ Ֆրանսայի Ազգային Գրադարանի ծեռագիրներու պատասխանատու, Արձանագրութիւններու Ակադեմիայի նախազահ 1782էն սկսեալ: 1810ին, Նապոլեոնի պատուերով գրած է *Tableau historique de l'érudition française ou rapport sur les progrès de l'histoire et de la littérature ancienne depuis 1789* [Համապատկեր ֆրանսական հնոտութեան կամ Զեկոյց 1789էն ի վեր իին գրականութեան եւ պատմութեան զարգացումներուն մասին]:
- 35 Այս անուններէն կ'արժէ հոս յիշել Charles Montagu Doughty (1843-1926), անգլիացի գրող ու ճանապարհորդ, որ 1888ին երկու հասորով հրատարակած է *Travels in Arabia Deserta* [ճամբորդութիւններ արաբական անապատին մէջ]:
- 36 Այս ցանկին մէջ անշուշտ՝ «դրապաշտութիւն»ը ԺԹ. դարու positivismն է, որուն առաջնակարգ ներկայացուցիչներն էին Ֆրանսայի մէջ Մէն-Սիմոնը, Անգլիոյ մէջ Սաբենսըրը, իսկ «սպենգլերութիւն»ը գերմանացի Oswald Spenglerի Արեւմուտքի անկումը գիրքն սերած պատմափիլիսոփայական ուսմունքն է:



Զուլիան Վիզոն

Զուլիան Վիզոն հյուսիս-աֆրիկյան ու լատինամերիկյան ժամանակակից գրականության, մշակութային ուսումնասիրությունների, կինոյի, եռադադուրային տեսության եւ գեղերային ուսումնասիրությունների մասնագետ է: Սոնը եղած ի համար սարանի համեմառական գրականագիտության ասխատենս պրոֆեսոր՝ նա դասավանդում է վիզուալ անտրոպոլոգիա, համեմատական գրականություն, մշակույթի տեսություն, արդիականության եւ ետարդիականության տեսություն, փերֆորմանսի եւ գեղերային ուսումնասիրություններ: Ներկայումս երկու գրքերի վրա է աշխատում. մեկը վերաբերում է անհետացումներին Ամերիկաներում (Նյու Յորքում ու Բոււնսու Այրեսում), մյուսը՝ «Մշակութային բռնությանը», ուր նա քննում է «բռնության» դերը քաղաքային տարածքի վերակառուցման մեջ գետում (Սարոկո) եւ ուսումնասիրում է շահիդի (Վկա, մարտիրոս) դերը Պալեստինում՝ ինքնասպան ումբարկուի գործողությունների քննության միջոցով եւ նրա մահվան ու կյանքի եռմահու սահմանմաք: Ի հավելումն ակադեմական հետազոտությունների ու դասավանդմանը՝ Զուլիան Վիզոն նաև ուիչեյ է եւ ինստալացիաների ու վիդեո արտիստ, 1988-ից սկսած՝ վիդեո ու էթնոգրաֆիկ ֆիլմեր է նկարահանել Լատինական Ամերիկայում, Մերձավոր Արեւելքում, Մեղրեբում, Եվրոպայում ու Միացյալ Նահանգներում:



Էդուարդ Սայիդ. լեզվի առևանգման ու փաստի ստուծելու ժուրգ

անգլերենից թարգմանեց Միսար Խոստիկյանը

2001թ. հունվարին Վիենայի Ֆրոյդ ընկերությունը, ուր էդուարդ Սայիդը դասախոսություն պիտի կարդար եգիպտական, հունական ու պաղեստինյան քաղաքակրթություններով Ֆրոյդի հմայվածության մասին, չեղյալ հայտարարեց նրա ելույթը, երբ ընկերության մի քանի անդամներ տեսան Պաղեստինում քար նետող Սայիդի՝ 2000-ի հուլիսին լայնորեն տարածված լուսանկարը: Էդուարդ Սայիդի լուսանկարը՝ թափով ետ պարզած բազուկով, ձեռքին, ըստ երեւույթին լուսանկարում երեւալու համար ոչ բավական խոշոր մի առարկա, հանգեցրեց հետագա գարնանը նրա ատենախոսության խափանմանը: Ինչպես Յոհան Ավգուստ Շուլայնը՝ ընկերության նախագահը տեղեկացրեց «Նյու Յորք թայմսին». «Մեր ընկերության բազմաթիվ անդամներ մեզ ասացին, թե չեն կարող ընդունել, որ իրավիրենք կողմնակալ պահեստինցու, որ քարեր է շպրտում իրայելցի զինվորների վրա»: Այնուամենայնիվ, լուսանկարը պարուրող առասպելը բացվեց հաջորդ օրերին «Նյու Յորք թայմսի» տպագրած բազմաթիվ ճշտումներում, ուր վերջապես պարզա-

2008



բանվում էր, թե Սայիդը պահակազորի մոտակայքում որևէ կերպ չի գտնվել, ոչ էլ հսրայելի պաշտպանության ուժերին է նշան առել, այլ՝ 300 մետր հեռվում մի դատարկ պահակատան, Լիբանանի սահմանին:

Ապա 2003-ին, Սայիդի մահվանցից հետո, «Նյու Յորք թայմսը» տպագրեց Սայիդի մահախոսականը (գուցե պետք է ասե՞մ մահախոսականները), որն ի հայտ բերեց ավելի բազմինաստ մեկնարանություններ: 2003 թ. սեպտեմբերի 25-ի մահախոսականը շփոթել էր Սայիդի ընտանեկան տունը, Կահիրեի փոխարեն՝ Երուսաղեմ, շփոթել էր Երուսաղեմի տրոհման ժամանակը, 1949-ի փոխարեն 1947թ., շփոթել էր նաև Սայիդի վերջին գիրքը՝ «Ֆրոյդի ու ոչ-եվրոպացին» (տպագրված Քրիստոֆեր Բոլասի եւ Ժաբլին Ռոուզի հետ): Սեպտեմբերի 26-ի մահախոսականը հոդվածի վերեւում խոշոր տառատեսակով «Հավելված ճշգրտում» է դնում, բայց այս մահախոսականը՝ նույն վերնագրով ինչ նախորդը, հոդվածի հրապարակումից գրեթե մեկ շաբաթ հետո՝ հոկտեմբերի 1-ին² ավելացված ակտուալ «ճշգրտումով», ծայրեժայր բոլորովին այլ լեզու և բովանակություն ունի. «Պրն. Սայիդ»-ը փոխարինված է «դոկտոր Սայիդ»-ով, «Պաղեստինի համար ժողովրդական ճակատը» փոխարինված է «Պաղեստինի համար Զորջ Յարաշի ժողովրդական ճակատ»-ով, եւ վերջապես «քար նետելու միջադեպն» է ներառված: Սեպտեմբերի 25-ի մահախոսականը չի հիշատակում այս իրադարձությունը, մինչեւ սեպտեմբերի 26-ի մահախոսականը ավարտում է Սայիդի կյանքի ամփոփումը այդ «սկանդալով».

«2000-ի հուլիսին դոկտոր Սայիդը խճվեց լայնորեն հրապարակված լուսամկարին առնչվող միջազգային անախորժության մեջ, ուր նա պատկերված էր Լիբանանի սահմանին հրայելական պահակակետի վրա քար նետելիս: Դոկտոր Սայիդը, որ այդժամ ճանապարհորդում էր ընտանյոք հանդերձ, այդ արարքն անվանեց պարզ, «ուրախություն խորհրդանշող ժեստ»՝ հրայելի կողմից հարավային Լիբանանի գրավման ավարտի կապակցությամբ»:

Բերնստայնի մահախոսականը վերածվում է Սայիդի մասին քաղաքական գնահատականի, նրա վստահելիությանը իբրև գիտնականի՝ «քարի միջադեպի» պատճառով հարցի տակ դնելով³ նրա անդամակցությունը համալսարանին, «քաղաքական» հայացքների եւ արար առաջնորդների նկատմամբ⁴ նրա՝ իբր անքավարար քննադատության հետ մեկտեղ: Վերջապես մահախոսականն ավարտվում է եղուարդ Սայիդի աշխատանքի մասին իմ երբեւէ կարդացած ամենանհեթեր անդումներից մեկով. «Իր վերջին տարիներին դոկտոր Սայիդի գրական արտադրանքը ավելի ու ավելի քաղաքական դարձավ»:

Բերնստայնի երկու մահախոսականներն եւ նշում են, որ Սայիդի աշխատանքն իր գործունեության ողջ ընթացքում, բացի գուցե երաժշտական քննադատությունից «The Nation»-ի համար, մշտապես քաղաքական է եղել՝ սկսած «Օրիենտալիզմ»-ից, որը Արեւմուտքի մշակութային վերընճայումը* կապում է նրա կայսերապաշտության ու գերիշխանության քաղաքականության հետ, մինչեւ «Մշակույթ եւ կայսերապաշտություն»-ը, որը ցույց է տալիս թե Զեյն Օսրինը «կայսերապաշտությանը տվեց մշակութային օրինականություն»: Եթի փորձում եմ հասկանալ՝ պարոն Բերնստայնը ինչ նկատի ունի՝ ասելով, թե Սայիդի աշխատանքը ժամանակի ընթացքում դարձավ «ավելի ու ավելի քաղաքական», պարզվում է, որ Սայիդի աշխատանքը քաղաքականորեն մեկնաբանվում էր «ավելի ու ավելի» անախորժ ձեւու:

Բերնստայնի պես շատ ընթերցողներին կարող է թվալ, որ տեքստերը, ինչպիսիք են «Օրիենտալիզմն» ու «Մշակույթ եւ կայսերապաշտություն», բարեհաջող ու «ապահով» հանձն են առնում Արեւմուտքի մշակութային, քաղաքական, տնտեսական գերակշռությունը եւ իշխանության այդ միաձույլի հաստատմանը նպաստող բոլոր հաստատությունները: «Ապահով» բառն են գործածում, որովհետեւ Արեւմուտքի գաղութատիրական հրամայականը հարցի տակ առնելով՝ այս տեքստերը «քացահայտորեն» չեն կապում հանգույցները: Ինչեւէ, Սայիդի վաղ տեքստերից ցանկացածը կարդալիս հարկ չկա աչք կլոցել տեսնելու համար՝ ինչպես մշակութային գերակշռությունը Արեւմուտքով մեկ փոխակերպվում, քարգմանվում է զավթման եւ այն ուղեկցող օրինականացմանը, ինչին վաղորդ ուղղված էր Սայիդի «Օրիենտալիզմ»-ը.

*ռեպերենտացիա, (ծնթ. թարգմ.)



«Ես կասկածում եմ՝ արդյոք հակասակա՞ն է, օրինակ, ասել, թե անզիացին ուշ 19-րդ դարում Հնդկաստանում կամ Եգիպտոսում հետաքրքրված էր այդ երկրներով, որոնք իր մտքում Բրիտանական գաղութի կարգավիճակից երբեք հեռու չէին։ Սա ասելը կարող է բոլորովին տարբեր թվական ասելը, թե Հնդկաստանի եւ Եգիպտոսի մասին ամբողջ ակադեմական գիտելիքը ինչ-որ կերպ երանգավորված, ներշնչված, բռնադատված է վիթխարի քաղաքական փաստով։ Այնուամենայնիվ, դա է, որ ասում եմ օրինատալիզմի այս ուսումնասիրության մեջ»։

Այսպես ծնվեց «օրինատալիստի» սահյան վերասահմանումը՝ եզրույթ, որ այլեւս չի ոգեկոչում սաֆարիների փառավոր օրերը ծառաների հետ «Վայրի» Հնդկաստանում, ոչ էլ Դելակրուայի կտավներում խաղարկված հարեմների սակավազգեստ կանանց։ Փոխարենը՝ «օրինատալիստը» դարձավ նվաստացուցիչ եզրույթ, որը նշազատում է այս փառաբանված կայսերական տեսիլները, իբրև միանգամայն խնդրահարույց։ Այսպիսով, պետք է տարակուսել, թե Բերնստայնը ինչ «ավելի ու ավելի քաղաքականի» ընկալում ունի, եթե Սայիդի բոլոր մշակութային եւ գրական տեքստերը ուղղված են ակտուալ քաղաքական իրադրություններին, պատմություններին, մշակույթներին ու գրականություններին՝ ելնելով անցյալ գաղութատիրությունների եւ ներկա նոր-գաղութացվող աշխարհի բանից։

Ես խոր կասկած ունեմ, որ Բերնստայնի եւ Սմիթի սեւեռումը Սայիդի քաղաքականացմանը ամբողջապես կենտրոնացած է նրա «քար նետելու» վրա գույգ իմաստով։ ուղղակի՝ 2000 թ. լուսանկարը, եւ խորհրդանշական՝ իբրև մոտավորաբես այդ ժամանակահատվածում ԱՄՆ-ում բնագավառի ուսումնասիրությունների դեմ բորբոքված ավելի մեծ հակահարվածի մաս, որը Սայիդի պես տեսաբաններին դիտարկում էր իբրև ահաբեկիչների՝ ԱՄՆ-ը կամ Խորայելը քննադատող քաղաքական որեւէ հայտարարության պատճառով։ Սա է բանի միջուկը. ոչ թե այն, որ Սայիդը պապաքաղաքական էր եղել «Օրինատալիզմ»-ում, այլ այն, որ Սայիդը շարժվել էր մշակութային ու քաղաքական նշանների ակադեմիկ մեկնաբանի դերից, այս լուսանկարի շնորհիվ, դեպի գործողի ու օրինատալացված պատկերացումով պաղեստինցու դերը, այն է՝ քար նետողի։

Ուրեմն, այս միջադեպից եւ 1999-ին Սայիդի ինքնակենսագրության («Առանց տեղի») իրատարակությունից հետո էր, որ Սայիդի ամենաոլիներին քննադատները կմեղադրեն նրան իր պատմությունը⁵ կեղծելու համար, կգործածեն միայն չակերտներ նրան որպես «պաղեստինցու» անդրադառնալիս, եւ, փաստորեն, միայն մի երկուսն են Սայիդի գրվածքները քննադատում նրա կյանքի վերջին տարիներին⁶։

Սայիդի աշխատանքին դիմելու փոխարեն՝ աջերի մեջ հակում կա գիտակցաբար անտեսելու կամ մերժելու Սայիդի ինքնությունը՝ որպես պաղեստինցու (ճիշտ այնպես, ինչպես այսօր Խորայել պետության ներսում, ուր մերժվում է միլիոնավոր պաղեստինցիների վերադառնալու իրավունքը), ինչպես նաև փորձ՝ Սայիդին հանարելու «ահաբեկչության զատագով»⁷, Միացյալ Նահանգների մի շարք հանրահայտ գիտնականների հետ մեկտեղ, ովքեր քննադատում են պատերազմները իրաքում ու Աֆղանստանում կամ Պաղեստինի օկուպացիան։ Այսպիսով, եղուարդ Սայիդը, ի տես բոլոր ոչ-ասողների, այդ օրը Արեւմտյան Ավիհին քար վերցնելով, դարձավ իրապես պաղեստինցի, ուստի կապ հաստատվեց տարիների նրա նտավոր արտադրության եւ ահաբեկչի գործունեության օրինատալիստ խորհրդանշական ժեստի միջեւ։ Սայիդը իր ամենաանխնա քննադատների ճշմարիտ լինելը ցույց տվեց (թե ինքը իրոք «ահաբեկիչ» էր) մի տարօրինակորեն դիալեկտիկ-ռեֆլեկտիվ դիրքից՝ ինքը օրինատալիզմի առարկա դառնալով։

Սայիդի անձը համար գրոհների է ենթարկվել աջերի (Բերնարդ Լեուիսի, Դանիել Փայփսի, Ֆուուադ Աժմանի ննաններից մինչեւ վերջերս Զաստրս Ռեյդ Ուեյներ) ու նույնիսկ ձախների, հատկապես Այզաք Ահմադի կողմից։ Մինչ Լեուիսն ու Փայփսը դիտում էին Սայիդին իբրև հակաարեւմտյան (Փայփսը՝ անվանելով նրան ահաբեկիչ, եւ Ուեյները՝ մեղադրելով «պաղեստինցի» լինելու պնդումները կեղծելու մեջ), Ահմադը գոնե որոշակի մտավոր խստապահանջությամբ է հակադարձում Սայիդին Արեւմուտքով հափշտակված համարելով՝ դրա գրականությամբ ու երաժշտությամբ, անվանելով Սայիդի մտքի կառուցվածքը «էապես պահպանողական» ու մեղադրելով նրան կայսերապաշտությունը «զինավորապես իբրև այլընտրանքային տարաստությամբ հակադրվելու կարոտ մշակութային երեւույթ նկատի ունենալու մեջ»։ մի քննադատություն, որ ձախից այլոք էլ էին կատարել։

2008



Մինչ որոշ քննադատներ գտնում են, թե բոլոր կողմերն իրավացի են՝ Սայիդին տեսնելով իրեն ինչ-որ կերպ իր սեփական հնքնությանը, Միացյալ Նահանգներին ու ձախերին դավաճանողի⁸, ես այս փաստարկները համարում են ոչ ավելի, քան ցուցադրական մտավորականավարի բամբասանքի թերթային այունակներ, որոնց առաջնային նպատակը Սայիդի աշխատանքի կենտրոնական հարցադրումների քննարկումից խոսսափելն է եւ այսպիսի քննադատությունների արծարությամբ խնդիրներով Պաղեստինում եւ Իրաքում ի հայտ եկող իրական ցեղասպանություններից շեղելը:

Իրոք երկուսն էլ՝ ձախերն ու աջերը, հնարավոր է մասամբ չվրիպեն, բայց ոչ այն պատճառով, որ Սայիդը անազնվորեն մի մշակույթը գերադասել է մյուսից, այլ որովհետեւ այսպիսի պոտենցիալ հակասությունները մեր բոլոր անհատական հնքնությունների ճշմարտություններն են կրում, որոնք եթե երբեւ, ապա հազվադեպ են եղակի: Ես կանոնեմ, որ Սայիդ՝ քար նետող մտավորականը, ամբողջապես պահում է իր տեսադաշտում եւ Էդուարդ Սայիդ անձը, եւ միաժամանակ Արեւուտքի տիտուր իրավիճակը, «Լյոր Յորդան»՝ լրագրողների անկարողությունը՝ ընթացական այս՝ առերեւույթ հակասական պատկերները մշակութային ու քաղաքական մտածողի, ով քար վեցրեց եւ նետեց ի ցույց համերաշխության՝ սատարելու բռնության ավարտը Լիբանանի սահմանին:

Բայց հետո այս լրագրողները տեղեկացան՝ ակադեմական արտադրության բոլոր ճիշերից, որոնք լրեցվում եւ տնտղվում են սեպտեմբերի 11-ից սկսած, ավելի հատկանշականորեն՝ 2002-ից, երբ Դանիել Փայփսը՝ բոլորովին աչքի չընկնող մի վարժարանական, ստեղծեց «Կրթանոցի հսկիչը»՝ նորօրյա նաքարթստական մի ցանցակայք, ուր գետեղված էին իր հորջորջած՝ Միացյալ Նահանգներին թշնամի դասախոսների փաստապանակները (եւ ավելին, մինչեւ իսկ իրայելը քննադատողներինը), և ուր հսկողության տակ առնվեցին Միացյալ Նահանգների ակադեմական սրահներում ձախ եւ ոչ-ամերիկյան համարվող ամեն ինչ եւ ամեն ոք⁹:

Հետագայում, 2002-ին, «Կրթանոցի Հսկիչը» կայքից հանեց ուր պրոֆեսորների փաստապանակները՝ այժմ փոխարինելով «հանձնարարված պրոֆեսորների» ցուցակով, որոնց «հավասարակշիռ» է հորջորջում: Շատերի կողմից դառնացած ու ձախողված համարվող համալսարանականը, որ հերսոտ մնաց Սայիդի աշխատանքից, որն ի դեպ խոչընդոտելիս էր եղել իր սեփական ակադեմական կարիերային՝ Փայփսը, այնուամենայնիվ, ստացավ իր քաղաքական ճանաչումը Զ.Ու. Բուշի վարչակալության ընթացքում 2003-ին եւ 2005-ին Միացյալ Նահանգների Խաղաղության ինստիտուտի խորհրդում ընտրվելով եւ դրանից առաջ Պաշտպանության դեպարտամենտում (խաղաղ պաշտպանություն)՝ ծառայելով Ահաբեկչության եւ Տեխնոլոգիաների գծով Հասուկ Հանձնարարության Ուժերում (2001-2002 թթ.): Ի հավելումն Բուշի դարաշրջանի օրինականացման՝ Փայփսը Նոր Ամերիկյան Հարյուրամյակի ստորագրյալ է եւ սեպտեմբերի 11-ին հաջորդող առաջին երկու տարիների ընթացքում անընդհատ հետապնդում էր համալսարանականներին, որոնք չեն համաձայնում ջիհադի¹⁰, մադրասայի եւ այլ սահմանումների հետ, որ չեն անդրադարձնում Փայփսի խիստ պահպանողական կեցվածքը:

Փայփսը դաստիարակվել էր ակադեմական միջավայրում եւ վերջապես փիլիսոփայության դոկտորի իր կոչումը ստացավ միջնադարյան իսլամի պատմության գծով Հարվարդում 1978-ին՝ նույն թվին, երբ Միջին Արեւելքի ուսումնասիրությունների մարզը ցնցվեց Սայիդի «Օրիենտալիզմի» հրապարակման՝ արմատական շարժ կատարելով այդ բաժիններում աշխատանքի ընդունման մեջ, որոնք ընդիանուր առնամք այլեւս հանակիր չեն կայսերապաշտ նախաձեռնությունները արդարացնող գիտնականներին: Մի երկու կարճատեր վերապահումներից բացի, մերժված ակադեմիայի կողմից՝ Փայփսը աշխատեց Արտաքին քաղաքականության հետազոտման ինստիտուտում (աջթեյան թինք թանք*), իհմնադրեց Միջին Արեւելքի Ֆորումը եւ «Միջին Արեւելքի եռամյայն» հանդեսը (երկուսն էլ՝ ֆորումն ու իր հանդեսը, նպաստում էին Միջին Արեւելքում, հատկապես Իրաքում, հարձակողական ռազմական ներխուժմանը):

Իր նորաբուլս կարիերան ստանձնելիս Փայփսը գրել է ռասայական տրամատավորումն** արդարացնող բազմաթիվ հոդվածներ՝¹¹ պնդելով իրաքցիների անպատրաստությունը ժողովրդավարությանը, որ նրանք կարիք ունեն «ուժեղ մարդու» (դիկտատորի), քանի ապրում են «դասվադրության տեսությունների աշխարհում»¹², զգուշացնելով արեւմտյան ազգերին մուսուլման գաղթականներ չընդունել, քանի որ նրանց «սովո-

* Հետազոտական, գիտական կենտրոն (ծմթ. Խմբ.)

** պրոֆիլավորում (ծմթ. Քարգմ.)



րույթները ավելի տագնապալի են, քան ուրիշներից շատերինը»¹³: Յավասարապես անհանգստացնող է Փայփսի գրածը Ուաշինգտոն D.C.-ի օդակածեւ մայրուղու նշանառու հրձիգ Զոն Սուլամների մասին, այն պնդմամբ, որ Սուլամները «ինքն իրեն ընկալում էր որպես Միացյալ Նահանգների դեմ ուղղված ջիհաղի հետիուն զինվոր»¹⁴, եւ հարակից մի հոդված, ուր նա քննում է «լավ հաստատված ավանդույթը ամերիկյան սեւամորթների, ովքեր իսլամ են ընդունում իրենց երկրի դեմ շրջվելով»¹⁵:

Մի երկու տարվա ընթացքում, 1999-ից մինչեւ 2003-ը, Փայփսը ճանաչման հասավ, որ թարմացնող էր աջերից շատերի համար, քանի որ նա ծեռնամուխ եղավ սանձելու հակամերիկյան ոգին, որը ոմանց ընկալմամբ վտանգում էր Միացյալ Նահանգները¹⁶: Բայց լուրջ գիտնականների մեծամասնության համար Փայփսը համարվում էր ոչ այլ ինչ, քան «պատերազմի կավատ»¹⁷ կամ կեղծավոր նորելուկ, ում միակ նպատակն է հարուցել սարսափ, ատելություն եւ աջակցություն արեւմտյան հովանավորությամբ բռնությանը՝ մուսուլմանական աշխարհի դեմ:

Ավելին, 2003-ի հիստերիան, որ Փայփսը սկսել էր երեք տարի առաջ՝ մասամբ սեպտեմբերի 11-ին հաջորդած ընդհանուր վախի հետևանքով, մասամբ էլ Բուշի ռազմատենչ վարչակարգի շնորհիվ, ընթացք ստացավ, երբ նրա ջանքերը հասան Կոնգրես, եւ ԱՄՆ Ներկայացուցիչների Պալատը հաստատեց «Միջազգային ուսումնասիրությունները բարձրագույն կրթությունում 2003-ի ակտը»¹⁸ (HR 3077), որը ստեղծեց խորհրդատու հանձնաժողով՝ համալսարանական մարզի ուսումնասիրությունների ծրագրերը «ուսումնասիրելու» նպատակով¹⁹: Ի հավելումն, այս օրինագիծը դաշնային հիմնավճարը կախվածության մեջ էր դնում հենց այդ հանձնաժողովի կողմից արտոնվող ուսումնական ծրագրից²⁰: Այս ամենը մեկից, ով մեծապես մերժվում է ամերիկյան ծախերի կողմից որպես «իսլամաֆոր» ու «մոլեռանդ», բայց զարմանալի չէ, որ Խոկվեց մի վարչակարգի մեջ, որը այնքան հագեցած էր քաղաքական ռազմատենչությամբ ու Մերձավոր Արեւելքի նկատմամբ մշակութային տգիտությամբ, որքան որ ողողված էր պատերազմը մղելու նոր-պահպանողական ազդակներով՝ նոյն պարադրամ հիմքի վրա, ինչ Սայիդի բնօրինակ հրապարակումը՝ «Օրիենտալիզմը», այն է՝ մուսուլմանները «ելել են մեզ բոլորիս սպանելու»:

Մոտակա պատմության նույնիսկ ավելի աղավաղված եզրույթները, որ ճանապարհ հարթեցին ծայրահեղ աջերի ամենօրյա քաղաքական բառապաշարի համար, պարադոքսալ ձեւով իրենց հակադիր նշանակությունները հանգրվանեցին կամ օգտագործվեցին այլակարծությունը լրեցնելու: Օրինակ՝ «ահարեկչության դեմ պատերազմի» վաղ օրերին «օստարեկյա մարտիկներ»-ը երբեւ չեր վերաբերում ԱՄՆ-ի կամ բրիտանական զինվորներին, «ինքնատյաց հրեաները» վերաբերում էր Ամերիկայի ակադեմական հրեաներին, որոնք դատապարտեցին իրաք ներխուժումը, «ջատագովները» իրաք եւ Աֆղանստան ներխուժման դեմ գրողներն էին, որ նաեւ առաջարկում էին ամերիկյան քաղաքական գործիչներին քննել սեպտեմբերի 11-ի պատճառները, իսկ այլ պիտակների շարքում՝ «ահարեկիչներին համակրող» էր դասվում յուրաքանչյուրն, ով Գուանտանամոյի կամ Բաղրամի բանտերում մարդու իրավունքների չարաշահումների հարցն էր բարձրացնում:

Այսիսով, չնայած HR 3077-ը չհաստատվեց սենատի կողմից, բայց ցույց տվեց, որ Դանիել Փայփսի պես հերսոտած համալսարանականը կարող է վտանգել մտավոր ինքնավարության ամբողջ կրթական ավանդույթը Միացյալ Նահանգներում, որ նրա նեռ-մաքարիստական կեցվածքը ամբողջապես գրկաբաց ընդունվեց ԱՄՆ կառավարության կողմից սեպտեմբերի 11-ից սկսյալ եւ շարունակում է փթթել աջեւյան այս թիմք թանքների գրպաններում, եւ ցույց տվեց որ Սայիդի 1978-ի տեքստում ուրվագծած օրիենտալիստական առեղծվածը յուրաքար կարող է տեղ տալ հզոր հակադարձության՝ հումանիստ, արար-մուսուլման, ներգաղթած եւ գիտական խստություն ունեցող ամեն ինչի դեմ:

Տիսուր փաստ է, որ նոր-պահպանողական խոյացումը Միացյալ Նահանգներում տեղի ունեցավ ժարգոնի, անվանարկումների, բացեիրաց ստերի եւ առավելապես պատմական փաստերի վճռական անտագոնիստական ժխտման հիմքի վրա՝ ի նպաստ սնապատումների, անհիմն լրագրողական հորինվածքների²¹: Յրաժարվեցին հետախուզության մասնագետներին լսելուց Կենտրոնական Հետախուզական Վարչության²² ներսում: Լրագրողներն ու կառավարությունը խոսքները մեկ արեցին, որի պատճառով փաստերը «խայտարդետ» են, եւ լրագրողները այժմ պնդում են, թե պատասխանատու չեն տեղեկությունների գնահատման համար նախքան առաքումը²³:

2008



Բոլորովին զարմանալի չէ, որ իրաքում այժմ առաջխաղացող քաղաքացիական պատերազմը փաստորեն ապապրկած էր Դանիել Փայփսի կողմից երկու տարի առաջ²⁴ Ու-աշինգթոնում պատերազմի հանդեպ անփույր ու կեղծարար մոտեցմանք: Փաստերը, սակայն, մնում են փաստեր. այժմ միլիոնից ավելի իրաքցիներ գոկվել են կյանքից, եւ հազարներ սպանվել ներխուժող ուժերից՝ զավումը արդարացնող առասպելների հետեւ-անքով: «Ահաբեկչության դեմ պատերազմը» լի է թյուրիմացություններով, որ ես են պահում երկխոսությունից, հերքում պատմական եւ քաղաքական փաստերը՝ մինչեւ ար-մատները ներառելով օրիենտալիստական պատվիրանները: Փաստը տեղ չունի այսօր քաղաքական տրամասության մեջ, քանի որ վերջին ութ տարիների ընթացքում պատե-րազմի նոր-պահպանողական հրահրումը վիճարկող ցանկացած որ ենթադրվում է նրանց շարքում, ով «դեմ է մեզ»²⁵, կոչվում է «ոչ-մատերիկացի» եւ որոշ դեպքերում բան-տարկված ու պիտակավորված է՝ «ահաբեկիչ»: Ավելի տիտուր է, որ ամերիկացիներից շա-տերը չեն վստահում թե՝ իրենց կառավարությանը, թե՝ լրատվամիջոցներին²⁶ վերջին յոր տարիներին ի հայտ եկած ստերի հետեւանքով, բայց առեղծվածորեն հաստատություն-ների, լրատվամիջոցների եւ պետության հյուսած ստերի արդյունքում՝ փաստերին ամե-րիկացիների հասու լինելը միջնորդավորվում է ապակողմնորոշված վարչակազմի բնագդներով եւ կեղծող լրատվամիջոցներով, որոնց համար «փաստերի ստուգումը» այ-լեւս անելիքների ցանկում չէ²⁷:

Այստեղ Ստեֆըն Քոլբըրթ՝ աջեւյան բանահանդեսի (թոք-շոու) պարողիան է մտա-բերվում, ով խուսափելով փաստերից՝ նախապատվությունը տալիս է «ճշտոտությանը»²⁸: Պարողիկ կերպար Քոլբըրթը արտացոլում է ներկա վարչակազմն ու զանգվածային լրատվամիջոցները, որ ձեռնարկել են իրաքի օրիենտալացնող գաղութացումը. «Եթե ու-զեմ հավատալ, որ Արաջին համաշխարհային պատերազմը սկսվել է 1941-ին, դա իմ աստվածատուր իրավունքն է՝ իբրև ամերիկացու»: Սա է Քոլբըրթի կոչած «առանց փաստ գոտի»-ն: Ինչպես զվարճալի է տեսնել Քոլբըրթին կամ Զոն Ստյուարտին շաբա-թական չորս անգամ «կեղծ լուրեր» ներկայացնելիս, նմանապես մտահոգիչ է, որ ձախ ամերիկացիները ունեն միայն այս երկու կատակերգու ալիքները, որոնց պիտի դառնալ՝ տեսնելու միջազգային կամ տեղական քաղաքական ընթացիկ տեսարանի որեւէ համո-զիչ հեռուստատեսային քննադատություն: «Առանց փաստ գոտին» այսօր իրականու-թյուն է եւ սարսափելիորեն դարձել է փաստը հորինվածքից տարբաժաննելու միակ ապա-օրիենտալացնող միջոցը՝ թեւել հեգնությամբ եւ աշխարհի աջեւյան անհնաստ հայացք-ները կրկնելու միջոցով: Քոլբըրթի թարմացնող հարցազրույցները ձախ հեղինակների հետ երեմն կորզում են. «Պարոն, ինչո՞ւ եք ձեր երկիրն ատում», մինչ Քոլբըրթը խուսա-փում է փաստացի որեւէ բանից՝ նորությունների իր տարբերակը տալով այնպես, ինչպես ինքն է ուզում: Իբրև քաղաքական պարողիա սա զվարճալի է, իբրև չարագուշակ հա-յացք լրատվամիջոցների եւ կառավարության փոխկապվածությամբ ճշնարտության տեղ անցած առասպելներին ողբերգական:

Մենք պետք է սկսենք հասկանալ՝ ինչպես եդուարդ Սայիդի աշխատանքը դարձավ ոչ թե «ավելի ու ավելի քաղաքական», այլ անշուշտ ավելի ու ավելի էնայիրիկ՝ հետազոտե-լով փաստերին առնչվող հենց այս օրիենտալիզմ-սարքելու հանելուկը, իր եւ մեր ապ-րած նոր-գաղութացվող աշխարհում փաստերի հանդեպ աճող արհամարհանքի պատ-ճառով: Քննադատական «ահաբեկչության դեմ պատերազմի» նկատմամբ, ինչպես դրա սկզբնավորումից հետո շատ գիտնականներ, Սայիդը կամրջեց օրիենտալիզմի իր քննա-դատական տեսությունը ուղղակիորեն «ահաբեկչների» դեմ Բուշի վարչակազմի գգուշ-ացումների մարտավարությանը. «Հատկապես վատ է, երբ ահաբեկչությունը կցվում է կրոնական եւ քաղաքական վերացարկնանը եւ ռենուկտիվ առասպելներին՝ հեռու մնա-լով պատմությունից ու դատողությունից» («Հավաքական կիրք»): Սայիդը խոր կասկած էր տածում արեւմուտքի թմրկահարության հանդեպ՝ հիմնված Ալ Քաեդայի ջոկատների օրիենտալիզմացվող վերացականության վրա, որ ուր ասես կարող էին լինել, եւ արաբնե-րին իբրև ահաբեկիչներ ներկայացնող կրկնվող պատկերների հանդեպ: Շատ բան չի փոխվել «Օրիենտալիզմի» համատեքստից մինչ 2001-ը, ինչ Արեւմուտքում մեզ են տր-վել արաբների կրկնվող պատկերներ՝ իբրև իրացիոնալ, վստահության անարժան, հա-կարեւմտյան, հակադեմնկրատ, անազնիվ ու վտանգող: Նույնիսկ շորերն են վտանգող՝ լայն փեշերը կարող են բաքցնել ինչ ասես, իդի կանայք կարող են ոմբակիր լինել, կա-նանց, նաեւ տղամարդկանց գլխաշորերը այժմ կասկածով ու վախով են ընկալվում: Եկեք վերադառնանք «Օրիենտալիզմ»-ում Սայիդի ուրվագծած օրիենտալիստական-



օրիենտալ տարբաժանմանը.

«Ինքնին իր մեջ, իբրեւ հավատալիքների համախումբ, իբրեւ վերլուծության մեթոդ, օրիենտալիզմը չի կարող զարգանալ: Իրոք, զարգացման դոկտորինալ հակաթեզն է այն: Դու կենտրոնական կրվանը սեմիթների կասեցված զարգացման առասպելն է: Այս կաղապարից այլ առասպելներ են բխում, որոնցից յուրաքանչյուրը ցույց է տալիս սեմիթին իբրեւ արեւմուտքու հակառակը եւ իր սեփական թուլությունների անդառնալի զոհ: Իրադարձությունների ու հանգամանքների կիտումով սեմիթական առասպելը ճյուղավորվեց սինճիստական շարժման մեջ. մի սեմիթը օրիենտալիզմի ծանապարհով գնաց, մյուսը՝ արաբը, հարկադրվեց օրիենտալ ծանիքան բռնել: Ամեն անգամ վրան ու ցեղ հայցելին՝ առասպելն է կիրարկվում, ամեն անգամ արաբական ազգային բնութագիր հասկացությունը ոգեկոչելին՝ առասպելն է կիրարկվում: Այս գործիքների տիրապետությունը մտրի վրա աճում է դրանց շուրջ կառուցված հաստատությունների հետ: Ամեն օրիենտալիստի համար, բառացիորեն, երերացող իշխանությունը սատարող համակարգ կա՝ հաշվի առնելով օրիենտալիզմի տարածած առասպելների անկայությունը: Համակարգն այժմ պսակվում է պետական հաստատություններով: Ուստի արաբական օրիենտալ աշխարհի մասին գրելը այժմ ազգի հեղինակությամբ գրելն է, ոչ թե կոչտ զաղափարախոսության արտոնությամբ, այլ բացարձակ ծշմարտության անհարց հավաստիությամբ, որին բացարձակ ուժն է թիկունք» (307):

HR 3077 օրինագծից կարելի է ընկալել, որ արաբների ուսումնասիրությունը ենթադրվում էր իբրեւ «ուղեցույցի կարիք» ունեցող: Գիտնականների մեջ արաբների բարձր տոկոսի պատճառով (ռասան գործոն էր այս օրինագծում) Փայփսն ընդունակ եղավ այս բանը հասցնել ԱՍՍ Ներկայացուցիչների Պալատ, եւ, վերջիվերջո, HR3077-ը ժամացույցը եւ տալու փորձ էր՝ վերադառնալու մի դարաշրջան, երբ օրիենտալիզմ նշանակում էր գիտելիքի հոսքը վերահսկել՝ փոխարինելով փաստը առասպելով: Այս ամենը պարզապես օրիենտալի «հսկողությունից դուրս գալու» պատճառով. իր դասընթացի ծրագիրը կազմելու համար օբյեկտիվության «անբավարարությամբ», «ահաբեկչության դեմ պատերազմին» չաջակցելով՝ պետության հեղինակությունը հարցադրելով, եւ «ներգծվելու» իր անընդունակության շնորհիվ՝ օրիենտալն ինքը դարձավ ահաբեկիչ: Մենք վերադարձել ենք Հանրինգրոնի քարտեզում ակնհայտ դարձված զաղափարախոսությանը, ուր պարզորեն կարող եք տեսնել «Արեւմուտքն» ու «մնացածը»:

Արար ու մուսուլման հետազոտողներին սեպտեմբերի 11-ում ներգրավված ահաբեկիչներին չըննադատելու համար հայածող Դանիել Փայփսի եւ գլխավոր լրատվամիջոցների ամբողջ քննադատության մեջ Սայիդը՝ այդ քննադատության մասնակից շատ գիտնականներից մեկը, ապակառուցում էր ահաբեկչությունը, ինչպես ապակառուցել էր օրիենտալիզմը:

«Ինչպես մուսուլմաններն են բազմից վիճարկել՝ չկա մեկ իսլամ, կան իսլամներ, ինչպես կան Ամերիկաներ: Այս բազմազանությունը ծիշտ է բոլոր ավանդույթների, կրոնների կամ ազգերի դեպքում, չնայած դրանց հարողներից ոնանք փորձել են սահմաններ գծել իրենց շուրջ եւ իրենց հավատը բժախմորորեն ամրակցել: Այնուամենայնիվ, պատմությունը շատ ավելի բարդ եւ հակասական է, քան վերընծայվում է ամբոխավարների կողմից, որոնք շատ ավելի պակաս են ներկայացուցչական, քան անդում են նրանց հետեւորդներն ու ընդդիմախոսները... (1907-ին Զողեթք Քոնրադը ապշեցնող հանառությամբ արքստիպիկ ահաբեկչի դիմանեկարը պատկերեց, ում հեգնաբար կոչեց «պրոֆեսոր»՝ իր «Գաղտնի գործակալը» վեպում: Սա մարդ է, ում միակ խնդիրը մի պայթեցնող սարք կատարելագործելն է, որը կաշխատեր ցանկացած հանգամանքներում, եւ ում ձեռքի գործը պայթյունի հանգեցրեց՝ մի խեղդ տղայի միջոցով, որն անտեղյակ ուղարկվել էր Գրինվիչի աստղադիտարանը ոչնչացնելու, իբրեւ հարված «մաքուր գիտությանը») («Հավաքական կիրք»):

Այս բառերը կարդալու երկու ուղի կա, իհարկե: Հավատում եմ՝ Սայիդը երկու ընթերցուն էլ մտադրել էր: Առաջինն այն է, որ ահաբեկչությունը գործում է գիտության (բանականության) դեմ եւ իշխանությանը հակադրվող անդումներում հուսահատ բռնարաքներ իրականացնելիս՝ հաճախ կերակրվում է անմեղներով: Այստեղ երկրորդ ընթերցուն այն է, որ ցանկացած անուն կրող բռնություն, ինչպես Քոնրադի վեպում, գործում է բանակա-

2008



50

նության լիակատար հակադրությամբ և ազդում է պատերազմից խեղված ու տնտեսապես աղքատացած ազգերի վրա Արեւմուտքից դուրս, բայց նույնպես ներառում է Արեւմուտքի դիմակայումը բանականությանը. «Մյուս կողմից, վիթխարի ռազմական եւ տնտեսական հզորությունը, ինչպիսին Միացյալ Նահանգներն են տիրապետում, ինաստության ու բարոյական տեսողության երաշխիք չեն, մասնավորապես, երբ հաստակողությունը առաքինություն է համարվում, եւ հավատում են, թե բացահիկությունը ազգի ճակատագիրն է»²⁹: Այսպիսով, ինչպես օրիենտալիզմն է ցուցանում, թե օրիենտալը առասպել է, կարծրատիպ, օրիենտալն էլ Միացյալ Նահանգների նման արեւմտյան տերությունների իշխանության զորությունը շփորում է ինաստության հետ: Քանի Սայիդը մեզ ցույց է տվել տարիների ընթացքում Ասիայում ու Մերձավոր Արեւելքում եվրոպական գերիշխանության հետեւանքով օրիենտալ առասպելի հաջողությունը, պարզ է, որ Միացյալ Նահանգները հանձնառել է այդ ֆիզիկական ու տրամասական դերը:

«Ահարեկչության դեմ պատերազմի» յուրաքանչյուր օրվա հետ Սայիդը հետեւողականորեն գրոհում էր փաստերի պակասությանը ամերիկյան քաղաքական մշակույթի ու լրատվյան մեջ.

«Տայեր լրատվամիջոցների փոքրոգությանը իրաքի դեմ անիրավ ու անարդար պատերազմի պատրաստման ընթացքում եւ նայեք՝ որքան սակավ լրուսարանում եղավ իրաքի հասարակությամբ պատժամիջոցների հարուցած հսկայական վնասների վերաբերյալ, եւ պատերազմի դեմ աշխարհով մենք հորդացող կարծիքներին՝ հարաբերականորեն որքան սակավաթիվ հաշվետվություն: Դազիվ թե մի լրագրող, Դելեն Թոնասից զատ, վարչակազմին կանգնեցրած լինի խնդրի առաջ աչք ծակող ստերի ու թխված «փաստերի» համար, որ նախքան պատերազմը հյուսվեցին իրաքի շուրջ՝ իրեն Միացյալ Նահանգներին վերահաս ռազմական վտանգի: Ծիշտ ինչպես այժմ նույն կառավարության պրոպագանդիստների կապերը արձակվել են, որոնց ցինիկաբար հորինած եւ բազմացրած «փաստերը» զանգվածային հչեցացման գեներերի մասին հիմա քիչ թե շատ մոռացված են կամ էլ արժանանում են ուսերը թռվելու վերաբերմունքի՝ իրեն բանին չառնչվող, երբ լրատվական ծանրամիտները քննարկում են իրաքի ժողովրդի ահավոր, բառացիորեն աններելի իրավիճակը, որ Միացյալ Նահանգները միանձնաբար եւ անպատճանատու ստեղծել են այնտեղ» («Ուշել Քորիի իմաստը»):

Սայիդը ընդունում է, որ «փաստերը» ոչ միայն կարող են ստեղծվել, այլեւ որ հասարակական հիշողությունը լրիվ կախված է այդ «փաստերը» մատուցող լրատվամիջոցներից, որոնք տեսանելի են դարձնում պատահած վայրագությունները, քանի որ չերեւացողը պարզապես գոյություն չունի, իրադարձությունները պատկերելով այնպես, որ աննեղ կողմները թվան ինչ-որ կերպ մեղավոր: Ցավոր, երբ ճշմարտությունները վերջապահես ի հայտ են գալիս, վտանգավոր ձեռւով փոքր արժեք են ունենում, քանի որ «փաստերի» ու «հորինվածքների» բաժաննան գիծը այն աստիճան լղոզված է, որ լրատվամիջոցները դարձել են պետությանը անքակտելիորեն կապված: Եվ այսպես, Միացյալ Նահանգների երկրորդ ներխուժմունք իրաք, «Անդրիի լրատվությունը» հանդիսականների համար կեղծ վստահության միջոց դարձավ լրատվության աղբյուրների նկատմամբ, քանի մեզ ցույց էր տրվում զինվորականների ու լրագրողների կյանքը կարծես «իրական հաղորդմամբ»: Լրատվությունը լրիվ ձախողվեց, քանի որ չկար որեւէ բան հարցադրելու խթան ոչ պատերազմի կեղծ պատճառները, ոչ «քշնամու կրակից» փախչող լրագրողների վախեցած դեմքերը: Հանդիսատեսը միայն իր աչքերն ուներ՝ հավատալու, եւ տեսածը ցնցող էր, բայց Յոլիկուդի ցանկացած կինոյի պես՝ ամեն մասնիկով նախագրված: Այսպիսով, լրատվամիջոցները Միացյալ Նահանգներում սկսեցին լրագրության նոր ուղղություն (մասամբ «Ֆոքս նյուօֆի» շնորհիվ), ուր լրագրողները այլեւս չեն գեկուցում, այլ փոխարենը ստեղծում են նորություններ՝ անմիջապես տեղում պատերազմը քաջալերող նեկնաբանություններ անելով, արտահայտելով իրենց քաղաքական հայացքները, հազվադեպ ստուգելով կամ հարցի տակ առնելով փաստերը: Արդյոք զարմանալի՝ որ ամերիկացիների մեծանասնությունը գաղափար չունի, թե Մերձավոր Արեւելքը նախկինում ծախողված կայսրության բատերաբեն է եղել Բրիտանական գաղութատիրական ջանքերով, որն իր օրում նույնպես ստերի³⁰ հիման վրա էր գործում:

Ուրեմն, երբ կարդացի Սայիդի մահախոսականի երկու տարբերակները, ին մի մասը ծիծաղեց, քանի որ սա ռելիզիոնիստական մոտեցման տեսակ է լրագրությանը եւ պատ-



մությանը, որին Սայիդը, որպես գիտնական, գնահատական է տվել: Իմ մի ուրիշ մաս վշտացած է, որովհետեւ շարունակական «Էրատոպիջ»՝ «Վիխակների շտկման» (գործնականում երկու անգամ հրատարակված) դարաշրջանում խաղարկվում է այն, որ ցանկացած թերթում կամ լրատվության աղբյուրուն ճշտումը ետ չի բերում վնասը: Այս դեպքում վնասը չի գործում հատկապես իբրև ացումենտum ad hominem է եղուարդ Սայիդի հանդեպ (նրա ժառանգությունը իր տեղն ունի), բայց գործեց՝ բոլոր պահեստինցիներին «հանգեցնելով» օրենքին անհնազանդութան շարժման՝ առանց այդպես պատկերելու պատճառի: Խսրայելի պետականության եւ պահեստինյան ճնշման 60 տարիների ընթացքում գլխավոր լրատվամիջոցները բոլոր պահեստինցիներին, իրենց տառապանքի դիմաց, պետք է անմեղ խսրայեցիների վրա բարկությունն ուղղած քար նետող երիտասարդի ու իսլամիստական քարոզի պատճառով ինքնասպան ոճբակրի կլիշեները ցույց տան: Կլիշեներից ոչ մեկը չի պատասխանում պահեստինցիների տասնամյակների տառապանքներին, որ այդպիսի արարքների անհերքելի պատճառն են: Փոխարենը, ռեւիզիոնիստ պատճությունները ցույց են տալից այս բռնարարքներն իբրև պահեստինցիների սովորական կացութափ: Խսրայելի ու Պաղեստինի առնչությամբ ըստ էության փաստն ու հնարանքը անորոշելի են Միացյալ Նահանգների լրատվամիջոցներում, որոնք հազվադեպ են որեւէ խորությամբ հիշատակում պատճական իրադրությունը, փոխարենը՝ «բռնության շարք»-ի մասին բոլոր լուրերը պահելով՝ արագ պատկերների եւ ձայնի կարծ պատճառների մեջ, կարծեն հենց «Երկու կողմ» կա: Սայիդի ուշ գրվածքները խոսում են փաստերը հարգելու եւ առասպեկները գաղտնագերծելու մասին՝ «կորուստը սահմանափակելու» նրա գաղափարին ուղղակիորեն կապված մի մղում, որ նա դրդում էր ուրիշ համալսարանականների՝ «կենտրոնանալ պատճական եւ կոնկրետ փաստերի վրա» որպես Պաղեստինյան ինքնավարության ու պետության խնդիրները լուծելու միակ կենսունակ միջոցի³¹: Ես տարակուսում եմ արդյոք լեզուն բավարա՞՞ է, քանի վերընծայման վիճակը վատրապանում է:

Սայիդի մահվանից գորեք հինգ տարի անց քար նետող պահեստինցու կերպարը հարատեւում է, եւ հինա Սայիդը հավիտյան ամրակցված է այդ կերպարի շնչին: Սակայն չեմ համարում, թե դա բոլորովին վատ է: Յակառակը՝ տեսնում եմ էդուարդ Սայիդի կյանքի աշխատանք՝ միտված ամեն տեսակ օրինտալիզմների մերկացմանը պատճության եւ ժամանակակից կյանքի մեջ: Միայն հեգնական է, որ խաղաղությանը համերաշխ այս արարդից հակառակն է դուրս բերվել՝ լոկ խորհրդանշի անթափանց կարծրության պատճառով: Միացյալ Նահանգներում եւ Խսրայելում իշխող համասեռ ընթերցումների պայմաններում որեւէ այլ մեկնաբանության տեղ չկա: Չգիտեմ պատճության մեջ երբեւ կլինի՝ մի ժամանակ, երբ մարդիկ նայեն բիրտ դիմադրությանը որեւէ այլ կերպ, քան սարսափով ու կանխապես փաթեթավորված հուետորության ժեստերով, որոնք բեկանում են երկխոսությունը՝ նախքան սկսելը: Սակայն լրագրողի ու գիտնականի անելիքը անհարմար հարցադրումները, ճշմարտության ստուգումն ու նույնիսկ հայտնաբերումն է: Այնքանով, որ այսպիսի գաղափարները կարող են «ծեծված» կամ իդեալիստական համարվել, դրանք, այնուամենայնիվ, կարող են գործել, եթե հասկանանք լեզուն իբրև կեղծարար ուժ օգտագործելու վտանգները եւ եթե սովորենք՝ ինչպես լեզուն կարող է վեր հանել միլիոնների հանապազոյա իրական տառապանքների պատճառ հանդիսացող իմանախնդիրներից: Խսրայելցիների անելիքը քար նետող պահեստինցու հանդեպ այս սարսափը բացելն է, իսկ լրատվամիջոցների եւ ուսումնասիրողների գործն է նետողի նպատակը մեկնաբանելը՝ թեեւ մեկնության տարբեր գործիքներով: Տառապանքի ու պատերազմի լեզուն պետք է գլխի վրա շրջվի, որովհետեւ ատելության ու պառակտման հրահրիչ լեզուն չի մնում աշխարհագրական տարածքի սահմաններում: Բոլոր լեզուների պես, քաղաքական խոսքը՝ ուղղված արաբներին կամ մուսուլմաններին (կամ ըստ կարծրատիպի տված կտի՝ նրանց նմանվողներին) վարակիչ է եւ սպանում է՝ անկախ նրանից, թե դա Զուրիֆ Միլլերի ու Դոնալդ Ռամսֆելդի ստերի վրա հիմնված պատերա՞զմ է, թե՝ ամերիկացիների՝ դրան հետեւած գործողությունները, որ սեպտեմբերի 11-ից քիչ անց սպանեցին «արաբանման» մարդկանց³²: Սայիդը պակաս լավատես է Պաղեստինում տառապանքի լեզվի վերահաղոնեցման նկատմամբ.

